



# ՆԱՄԱԿՆԵՐ

ՍՊԻՏԱԿ ՏԵՇՈՐԻ

և գ.

ՓԱՇԻԶՄԻ ՅԵՐԿՐՆԵՐԻՑ


Կազմով՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՋՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ

ՅԵՐԵՎԱՆ

1936



ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

# ՆԱՄԱԿՆԵՐ

ՍՊԻՏԱԿ ՏԵՇՈՐԻ

Տ Ե Վ

ՖԱՇԻԶՄԻ ՑԵՐԿՎՆԵՐԻՑ

20-6-28.

Կազմեց՝ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հ 24711



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄՈՄՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏԿՈՄԻ  
ՅԵՐԵՎԱՆ

1936

Պատ- Խմբագիր՝ Թ. ԱԴՈՆՅ  
Սրբազնի՝ Ա. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

ԳԵՏՏԱՑԻ ՏՊԱՐԱՆ, ԵԿՐԵՎԱՆ

Գլանվելու լիազոր Բ.—905. Գլանվեր 805. Տպացու 3000.

# «ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԳԵՐԵԶՄԱՆՈՅ»

Յերբ Բելդուաղից դեպի Զատրեք եռ գնում, Սրեմի Միտրո-  
վիցի կայարանից մեծ բացատի մեջ մի խումբ շենքեր են յերե-  
վում՝ բարձրաբերձ ու կարմրավուն պատեզով շրջապատված։  
Շենքերի գլխավերեւը՝ յեկեղեցու գմեթ և գործարանային յեր-  
կու ծխնելույզ։ Հարավսլավիայի ամենաժամանակակից  
բանուն ե այդ», ալարձանքով հայտարարում ե մեծ Սերբիայի  
բուրժուազիան։ «Մարդկային հոգիների սպանդանոցը», ինչպես  
այդ մկրտել ե խրմատացի հռչակավոր գրող Ավգուստ Ցեսարե-  
ցը, վոր մի քանի տարի նստել ե այնտեղ «Կենդանի մարդկանց  
գերեզմանոցը», ինչպես տաժանակիրներն իրենք են անվանում  
այն, այսպիսով բնորոշելով այն դժոխքը, վոր բարձրաբերձ ու  
կարմրավուն պատերի հետեւ ե թաղնվում։

Քաղաքական բանտարկյալներին\*) այստեղ են ուղարկում,  
այստեղ են վորձում նրանց «ուղղել»։ «Ուղղելու սիստեմը», վոր  
Միտրովիցում ե թարգավորում, բնորոշ ե Հարավսլավիայի բոլոր  
քանտերի համար։ Հենց այդ սիստեմով ել մենք կապացուցենք  
Հարավսլավիայի հեղափոխարկանի՝ ռազմավաշխատական դիկ-  
տատուրայի դերու կյանքը։

Տաժանավայրում կյանքն այնտեղից ե ակտվում, վոր գատա-  
պարտյալից հազուաւոր խլում—վորխարենն ինչ—վոր ցնցոտիներ  
տալիս։ Այս ցնցոտիները կոչվում են «նորեկի հադուստ»։ Նորե-  
կը մի շարք արարողություններ պետք ե կատարի, վորից հետո  
նա կարող ե «հսկական» տաժանակիր համարվել։ Համարյա ա-  
մեն որ, լաթեր ու ցնցոտիներ հազած, պահակի հսկողությամբ,

\*) 1933 թ. նոյեմբերից այդտեղ են փոխադրել բոլոր քաղանտարկյալ-  
ներին, վորոնք ուսաջ ուրիշ քանտերում եյին պահպատճեցում։

նորեկների խումբը և լուռ թափառում բաղնիքից դեպի շենքը, վոր ահազին մի գաղաղի տալավորություն և թողնում։ Սրեմի Միտրովիցի հոչակալվոր «մեկուսարանն» և այդ, վորի բոլից պետք և անցնի ամեն մի դատապարտյալ։

— Ա՛ռ համբի, տես թե քանի՛ մն եմ բերել քեզ, — ձայն և տալիս ուղեկցողը մեկուսարանի բանտապահին։

Մեկուսարանի բարձր միջանցքներում պարետը նորեկներին սպասում է։

— Գլուխներդ բացե՛ք։

Մերկության աստիճան սափրած տաժանակիրները լուռ ու մունջ պետք և ականջ դնեն, թե պարոն պարետն ինչպես և կարդում «տան» կարդ ու կանոնը։ Ընթերցանությունն անտանելի յերկար և տեսում։ Զմեռը մեկուսարանի ահազին միջանցքում փչում և ու ցուրտ և, մանավանդ բաղնիքից հետո, մանավանդ ցնցոտիների մեջ։ Բայց պետք և ականջ դնել։ Յեվ նորեկն ականջ և դնում։ Իսկ հետո՝ շատ անդամ ծեծ ու հայհոյանք… Այսուհետեւ ամեն մի նորեկի մի առանձին կամեր են դնում։ Մեկուսարանը մի փոքրիկ վանդակ և՝ յերեք մետր ու կես յերկարությամբ և մետր ու կես լայնությամբ, գլխավերներ մի փորեն տեղ վանդակապատ փոքրիկ մի լուսանցք և ծածկված, վորի միջից մի կտոր յերկինք և յերեսում, ասֆալտի հատակ, յերկաթե մահճակալ՝ պատառուտված ներքնաւելով, վորի մեջ ինչ ինչած ծղոտից միայն փոշու խստնուրդ և մնացել, յերկու հատ հին, գղղղված վերմակ, մի սեղան, մի տարուրետ (աթոռ) մի մեղաման (ուրառա) — ահավասիկ ամբողջ «կահույքը»։ Այսպիսի մի վանդակի մեջ մարդ բռնված դաղանի ակես և զգում իրեն։ Նա իրավունք չունի «վոչ պատը ծեծել, վոչ ցերեկն անկողնի վրա պատկել», վոչ ել լուսամուտին մոտ գնալ»։ Բա ել ինչի՞ իրավունք ունի։ Միայն մի բանի, նստել և իր առջել նայել։ Կամ թե՝ բռնված դաղանի պես մի անկյունից մյուսը դնալ-դալ։

Նորեկն իր դադաղին գեռ չընտելացած, գոռան մեջ կամացուկ մի «հուղար» փոքրիկ անց և բացվում, վորի միջով բանտապահը կարող և առանց նկատմելու հետեւ տաժանակիրին։ Բայց այս դեռ քիչ և։ Բանտապահը վոչ միայն հետեւում և, այլու

շատ անդամ պլրովակացիա յեւ սարքում : «Հուղան» բաց և անում  
ու կամացուկ թխկթխկացնում .

— Եյ, հայրենակից :

Նորեկը ցնցվում ե—ուրախալի բան և այս մենակության մեջ  
մարդու ձայն լսել— քայլ և այնպէս անվճռականորեն և յետ  
նայում : Կարելի՞ բան ե : Պարետը միան և ընկնում : Վոչ չի  
կարելի :

— Վո՞րտեղացի յես, ի՞նչ քեֆի յես,— դուան հետեւից շըն-  
ջում և քաղցրալուր մի ձայն :

Նորեկը պիրտ ե առնում, մոտենում և դուանն ու կամացուկ,  
իր սեփական ձայնից վախենալով, պատասխանում և հարցերին :  
Հանկարծ լսվում ե բանալիների զնդոց, ու բանտապահը ներս և  
ընկնում կամերը :

— Եղ ո՞մ հետ ետ խոսում, չա՞ն վորդի :

Նորեկը հուզմունքից չի կարողանում վորեւ խոսք ասել :

— Գլուխդ բա՛ց, ինձ հետ խոսելիս,— բղավում և ժանդար-  
մը, և շեշետակի հարվածից նորեկի գլխարկը գետին և թըռ-  
չում :

— Շո՛մ-շան վորդի, յես քեզ կարգն ենակես առվորեցնեմ,  
վոր ինձ չմոռանաս : Հենց եգուց մի զեկուցում կդրեմ, և դու  
քոնը կստանաս :

Ժանդարմը սուտ չի ասում : Վաղը նորեկը կպատժվի այն  
պատճառով, վոր «հուղայի» միջով «ինչ վոր մարդու հետ» խո-  
սել ե : Այսպէս և ալիվում «ուսուցուամը» :

Առավոտյան՝ ամառը ժամը 5-ին, ձմեռը՝ 6-ին, զանդն արթ-  
նացնում ե բանտարկյալներին : Անկողինը պետք ե հավաքի,  
կամերը՝ մաքրվի, մեղամանը՝ դուրս տարվի : Մաքրելու-սրբե-  
լու ժամանակ կծու փոշու ամպ ե բարձրանում, վոր մարդու քիթ,  
կոկորդ ու թոքեր ե մտնում : Այս մաքրելու-սրբելուց հետո մի  
ժամ թանձր ցեխ ես թքում : Ամբողջ կամերը շղթաների, բանա-  
մների գնդոցով ու ժանդարմական բղավոցով ե լցվում :

— Սուս, շան վորդի, ձեն չհանես :

Քնատ թուլացած, կեղտոտ դույլերին՝ նորեկներն  
իծաշարուկ, իրար հետեւից գնում են զուգարան : Մաքրել-սրբե-

լուց հետո նախաճաշն է լինում։ կեղտուր, լպրծուն մի հեղուկ, վոր լափի տպակլորություն է թողնում։ Այստեղ այս լափին սուազ են ասում։ Այսուհետեւ դալիք է դրոսանքը, վորի ժամանակ տաժանակիրներն իրար հետևեց քայլում են շրջանադժի վրայով։ առանց այս ու այն կողմը նայելու, առանց խոսելու։ Կողքներից՝ բանտապահները, բանալիները զնդղնդացնելով։ Լուռ ու մունջ արարողությունը մեքմընդմերթ ընդհատվում է ժանդարմաների բիրտ գոռոցով։

— Գլուխ մի՛ տարեք, չա՛ն վորդիք։

Կամերում նորեկը պետք է աշխատի։ Մի ահազին կույտ սաղի կամ հալի վետուր են բերում նրան, վորը նա ինքը խնամքով սղետք է մաքրի։ Այս աշխատանքն առանձնապես զղվելի յե, վորովհետեւ կամերի առանց այն ել ծանր ողը դժվար է չնչել, իսկ այժմ ել թեթև, մանր փոշին է լիքը լցում։ Իսկ ձմեռն այս «աշխատանքն» իսկական տանջանք է դառնում, վորովհետեւ մարդ ստիպված է լինում փետուր-վետրի հետևեց պոկել սառած, հաճախ ել ուռած ձեռքերով։ Նորեկին գիրք չեն տալիս, բայց «փոխարենը» նրան այցելում են քահանաները, ուսուցիչներն ու չինովիկները և խոսում, խառում, խոսում... Նորեկը նրանցից յոսմ ե՝ հանդիմանություն, կշտամբանք, ծաղրանք, կեղծ ցավակցություն ու սովորական յերդու՝ «տան կարդ ու կանոնը կարդա՛, աստծուն աղոթի՛ր, և ամեն բան լավ կլինի»։

Բոլոր խոսակցությունների վերջն այն է, վոր նորեկի դլուխը միտք ճիտեն, թե նա բախտավոր է, վոր գեռ կենդանի յե։ Մի խոսքով ուղում են նրան «մարդ» դարձնել??։ Բանտի տերտերը, վոր գիշեր-ցերեկ հարբած է, շարունակ կրկնում է.

— Մեկուսարանն ուղղելու մեր մեթոդի եյությունն է, այնուեղ մարդկանց հողիները զղջում, մեղմանում են, և նրանց ինչ ուղես՝ կդարձնես։

Հա՞՛, մեկուսարանի գերեզմանային լուռթյունը, վոր բանտապահների բղավոցներով ու հայհոյանքով, բանալիների զընդդրնոցով, ծեծված-ջարդվածների տնքոցով և փոփարինովում—այս բոլորը մի նպատակ ունեն։ մարդու տանջել և ստիպել, վոր ամեն ինչ լուռ ու մունջ տանի։

Այս «պատրաստելը» յերկու-յերեք ամիս եւ տևում։ Այսուհե-

տե նորեկին աշխատանքի յեն ուղարկում և ընդհանուր կամեր փոխադրում։ Նրա համար աշխատանք են ընտրում, իհարկե, նը-կատի ունենալով բանտի վարչության շահերը։ Բոլոր այն խո-սակցությունները, թե դատապարտյալին հնարավորություն ե-տրվում մասնագիտություն ձեռք բերել, վորը բանտից դուրս գալուց հետո նրա գոյությունը կապահովի, — զուտ, սուտ ե։

Ընդհանուր կամերն ասֆալտե հատակով ահադին մի մարադ ե։ Այստեղ 80 հոդի կարող ե տեղավորվել։ Լուսանցքները փոք-րիկ են ու բարձր։ Գլխավերեսում՝ յերկաթե նեղ մահակալներ, մանր ու փափած ծղոտ լցրած բարակ ներքնակներ, մի սավան և յերկու հատ գդրդված վերմակ— ահավասիկ բանտարկյալի ամ-բողջ գույքը։ Կամերի վողքին՝ զուղարան և լվացարան։ Կոյու-ղի չկա, և զուղարանի դարշահոտությունը, մանավանդ ամառը, միանդամայն անտանելի յե։ Առավոտները, մաքրել-սրբելու ժա-մանակ, տաժանակիրներն իրար այնպես են տեսնում, ինչպես մառախուղի միջից։ Փոշու այսպիսի թանձր վարագույր և քաշ-վում նրանց միջև։ Դժվար ե դանել այնպիսի մի բանտարկյալ։ Վոր չնշառության առողջ որդաններ ունենա։ Այս ահադին զո-րանոցում չառ դժվար ե ասլրել։ Մանավանդ ձմեռն ե մարդ նեղ-վում, նախ՝ ուղարկություն ըլինելու, յերկրորդ՝ ցրտի պատ-ճառով (ժանդուտ խողովակների միջով յերկու ժամ բաց թողած գոլորշին, իհարկե, չի կարող տաքացնել այդ ահադին շինու-թյունը)։

Այս բոլորը— դարշահոտությունը, կեղտն ու նեխվածքը— մարդու հետզհետե վոչնչացնում ե։ Այսպիսի կամերում մար-դիկ վոչ միայն որեր ու ամիսներ, այլև յերկար ու ծիդ տարի-ներ սեետք ե անցկացնեն։ Հին ծղոտի, արև չտեսած անկողիննե-րի, զուղարանի դարշահոտության և մարդկանց աղտոտ մարմնից դուրս յեկող յուրահատուկ քրտինք— ահավասիկ այն մթնոլոր-տը, վորի մեջ դատապարտյալը «կարող ե» աշխատանքից հետօ-հանդստանալ, իր համար մի բան անել, ընկերոջ հետ զրուցել։

Արհեստանոցները— պարանինը, կանեփ մշակելունը, հյուս-նոցը, ջուլհականոցը, դամբյուղինը, կազմասունն ու փականա-գործի արհեստանոցը— առանձին շենքի մեջ են՝ բանտի նույն

Հրջանակում : Աշխատանքի որը ձմեռը 9, իսկ ամառը 10 և կես ժամ ե տեղում : Աշխատանքի պայմաններն առանձնապես ծանր են պարանի և կանեփի մշակելու արհեստանոցում : Այս արհեստանոցները մասնավոր մարդիկ են պահում, վորոնք դատապարտյալներին շահագործում են համաձայն բանտային վարչության հետ կնքած պայմանագրի :

«Ծուլության» կամ «դեպի աշխատանքն անուշաղիր լինելու» համար բանտարկյալին խիստ պատժում են : Շահագործողին ի՞նչ փույթ, թե իր բանվորներից վորեւ մեկին դիսցիպիլինար մեկուսարանն են ուղարկում : Նա դիմակ, վոր աղատված տեղի համար տասնյակ թեկնածուներ կճարվեն :

Առանձնապես դժվար ե կանեփի մշակելու արհեստանոցում : Այստեղ աշխատանքի յեն ուղարկվում այն դատապարտյալները, վորոնք ներգին կարգ ու կանոնին չեն յնթարկվում — բոլոր նրանք, վոր վախչելու փոքր են արել, համարձակվել են իշխանությանը խոսք դարձնել, չեն թույլ տվել, վոր իրենց ծեծեն, մի խոսք՝ բոլոր «անհնազանդ» և «անուղղելի» տարրերը : Նըրանց ուղարկում են այդ արհեստանոցը՝ «մեղքերը քամիլու» համար :

Արհեստանոցի աշխատանքն սպանիչ ե : Ողի մեջ կանեփի բարալիկ մաղիկներ են լողում, վորոնք մտնում են մարդու քիթ, բերան, կոկորդ և հագուստի տակը :

Հարյուրավոր տաժարակիրներից հեշտությամբ կարելի յե ճանաչել նրանց, ովքեր այդ արհեստանոցում են աշխատում : Յերեք ամիս այդպես աշխատելուց հետո, ճնշող մեծամասնությունը հիվանդանոց ե ընկնում — չնշառության, աղիքների հիվանդությունը նրանց հիվանդանոցի անկողին ե զցում : Պարզ բան ե, վոր քաղաքական հանցավորներին հենց այդ արհեստանոցն են աշխատանքի ուղարկում : Թվում ե, թե այսպիսի մի արհեստանոցում մնալուց հետո դաշտային աշխատանքները թեթև ու ցանկալի պետք ե թվան : Բայց իրականում դաշտային աշխատանքների մեջ շահագործումն ել ամելի ուժեղ ե : Դատապարտյալներին այնտեղ ծեծում են, և ծեծում են հիմնովին ու սիստեմատիկ կերպով : Վոչ թե «հենց ենպես» քիթ ու բերանին են տալիս կամ

բանալու կապոցով բզում, այլ հրացանի կոթով անխիղճ կերպով այնքան գաղանաբար են ծեծում, վոր հետո մարդ վոչ կարողանում են ստել, վոչ պառկել, վոչ ել ման գալ: Մարդիկ ուժասպառ վայր են ընկնում, իսկ բանտապահները, գաղանացած, նըրանց տրորում են, գետնից բարձրացնում ու հրացանի կոթով նորից են ծեծում: Շատ անդամ մարդուն անշնչացած վիճակում տանում են բանտի հիվանդանոց: Այս ծաղրանքների և նույնիսկ ուղղակի սպանությունների համար յերեք և վոչ վոք պատահանատու չի յեղել:

Մարդ յերկարթե առողջություն պետք ե ունենա, վոր այս աշխատանքի մեջ մի քանի ամիս կարողանա դիմանալ: Վոչ մի բողոք ու հայտարարություն չի ոգնում: Դեռ ավելին՝ ով բողոքում ե, դիտի, վոր «հանդգնության» համար դիսցիպլինար պատիժ և սպանում իրեն, և վոր հետազոտմ իրենից վրեժ ե առնելու վոչ միայն այն ժանդարմը, վորի վրա բողոք ե տվել, այլև մյուս բոլոր բանտապահները:

Բանտերի սնունդն անպետք ու վողորմելի բան ե: Մթերք մատակարարողներն աշխատում են վորքան կարելի յե վատ ապրանք տալ, իսկ փոխարենը վորքան կարելի յե չատ ստանալ: Այս պատճառով ել նրանք բանտի իշխանության հետ «սերտ բարեկամություն» են պահպանում և ողուած նրանց հետ կիսում են: Կաթը, յուղը, վանաչին չինովնիկներն ամեն մեկն իրեն ե տանում: Զեմ տեսել մի բանտապահ, վոր չաշխատի ձեռից յե կածին չափ կոսիել: Թալանի չափը բանտապահի դիրքից ու առտիճանից ե միայն կախված: Շատերը զատապարտյալների մնընդից դողանալով, քիչ հարստություն չեն դիզել: Դատապարտյալն ամիսը մի անգամ միայն իրավունք ունի իր փողով մթերք-ներ գնել, բայց, իսկապես ասած, այս իրավունքով ել չի կարողանում ողտվել, վորովհետեւ դատումը շատ չնշին ե, մեծ մասը տանից բան չի ստանում, իսկ բանտապահներն ամեն ինչի համար յեռակի թանդ են պլոկում:

Բանտի հիվանդանոցը միւնույն բանտն ե, բայց ավելի մաքուր կամերաներով: Բանտի բժիշկները միւնույն ժանդարմներն են, բայց դիսցիպլինավոր: Բանտն աշխատանքի ընկնելով՝ նրանք

իրենց պլրոֆեսիոնալ պարտականությունները մոռանում են : Նը-  
րանք տաժանակիրներին բանտի իշխանության աչքով են նայում ,  
այն իշխանության , վորից կախում ունեն : Հիվադին բանտա-  
պահների պես նախորոք մոտենում են ինչպես սրբությանտի : Քա-  
նի՞-քանիսը հիվանդանոցից հաշմացած են դուրս գալիս , քանի՞-  
քանին ել բոլորովին դուրս չեն յեկել , վորովհետև այնտեղ վոչ  
թե բժշկում , այլ մաշկում են : Գլխավոր «գեղերն» են՝ մասամբ և  
լողացնելը , յոդն ու ինչ վոր կեզտոտ ջուր , վոր թեյ անունն ե-  
կրում : Այստեղ լուրջ հիվանդանալ՝ նշանակում ե մեռնել : Իսկ  
կմեռնես , թե կապրես , բժիշկների համար բոլորովին ել փույթ  
չի : «Շունը՝ շան պես՝ կսատկի» կրկնում են նրանք բանտապահ-  
ներին կրնկոխ : Տերտերը հիվանդանոցումն ել ամենազգվելի դեմ-  
քերից մեկն ե :

Դաստավարությաների ու բարեկամների կասը խիստ հսկողու-  
թյան տակ ե տեղի ունենում : Ծնողներին գրել և տեսնել ամիսը  
մի անգամ միայն կարելի յե :

Նամակները գրաքննության են յենթարկվում , և յեթե գրա-  
քննիչ տերտերին դուր չեն գալիս , ուղղակի չեն հանձնում տի-  
րոջը : Տեսակցության ժամանակ դու հարազատներիցդ փակ վան-  
դակով կտրված ես , չես կարող նույնիսկ նրանց հետ ձեռք խը-  
փել : Տեսակցությունը տևում է 10 րոպեյից վոչ ավելի և ամբողջ  
ժամանակ բանտապահների հսկողությամբ :

Դաստավարությալը պարտավոր ե յեկեղեցի գնալ , թեև նրան  
չեն պարտավորեցնում ծխակատարություններ անել , խոստովա-  
նել կամ հաղորդ առնել : Այս արտաքին «լիբերալիզմն» , իսկա-  
պես ասած , տերտերին ու բանտի իշխանությանն ե ձեռնտու , ով  
յեկեղեցական ծխակատարություններ չի անում , դրի յե առնը-  
վում և նրանց «հասկացվում ե» , վոր նրանք այլևս արժանի չեն  
որենքով նախատեսված թեթևացման : Յեկեղեցու՝ կապիտա-  
լիզմի սպառուհու— ճնշումն այսպիսով ել ավելի ուժեղ թափով  
և հանդես գալիս :

Այն դաստավարությալը , վոր իր պատժի յերեք ութերորդ մա-  
սը քաշել ե , որենքով իրավունք ունի փոխադրվել այսպես ա-  
սած՝ միջանկյալ բաժանմունք : Այստեղ ուժիմն այնքան ել խիստ

չի, ինչպես ընդհանուր կամերաներում, բայց բանտի իշխանությունն ամենևին ել քողորին չի տեղափոխում այնտեղ։ Փաստութեն դատապարտյալներին վորսադրում են՝ միայն այնտեղ, վորտեղ տվյալ մոմենտին աշխատող ձեռքեր են հարկավոր։

Այսպես ել կիրառվում ենաւ այսպես կոչված՝ պայմանական արձակուրդի իրավունքը։ Որենքն ասում են. «ամեն մի դատապարտյալ, վոր առաջին անգամ ե դատապարտված և ապացուցել ե, վոր իր պատժի կեսը քաշելու ընթացքում ուղղվել ե, կարող ե պայմանական արձակուրդ ստանալ»։ Թէ ինչպես ե կիրառվում այս որենքը, ապացուցվում ե այն բանով, վոր 350 այդպիսի «իրավունքներից» 15—25 հոգուց ավելի բար չեն թողնում։ Պայմանական արձակուրդը մարդու շփոթելու, ընկճելու և նրա մեջ խոհեմության ու հնազանդության զգացում դարդացնելու միջոց ե։ Բայց բանտի պայմաններն այնպես են, վոր ամենահայտնարարակշիռ մարդն անդամ անխուսափելիորեն պետք ե ընդունի։

---

## ԱՐԳԵԼԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻՆ— ՄՈՍԿՎԱ

Թանկարգին ընկերներ։

Բրուկլինի (Նյու-Յորկ) քաղաքային բանտի վահողակների միջյա անկեղծ չնորհակալություն ենք հայտնում մեր վիճակի առթիվ ձեր ցույց տված համերաշխության ու հետաքրքրության համար։ Այն խիզախ ու անվախ կռիվը, վոր մեղնից հետո մեր ընկերներն են չարունակում, որստորե ավելի ու ավելի յե փըշը բում մեղ կապկապող շղթաները, և մենք չուսով, ազատություն ստանալով՝ ընկերների հետ թե թե լուս տված կաշխատենք ընդհանուրծի համար։ Այն չափազանց հետաքրքիր նորությունները, վոր ձեղնից մենք ատացել, ծանոթացնում են ձեր հատթանակին, վոր նույնպիսի հալածանքների ու նույնպիսի ճիբանների արդյունք են, վորոնց պայմաններում այժմ մեր ընկերներն են

ապրում: Դուք մեղ գրել եյիք այդ գործարանի ձեր անդրանիկ աշխատանքների, այնուհետև հետազա և այլ աշխատանքների ժաման: Մենք Ձեզ ասում ենք՝ շարունակեցե՛ք ձեր աշխատանքը: Շարունակեցե՛ք լավացնել ձեր աշխատանքը և մի՛ հանգստացեք, մինչև վոր ձեր գործարանի, ձեր թեթև ու ծանր արդյունաբերության արտադրանքի ասպարիզում կատարելության հասցնեք: Յույց տվեք ամբողջ աշխարհին, ինչպես առաջ եյիք այդ անում և հիմա յեք անում, վոր պրոլետարական յերկրի բանվորները կարող են պետություն կառավարել:

Մենք թերթեր ու գրքեր հաճույքով կիրարդանք, քայց քանտի վարչությունը մեղ թույլ չի տալիս: Այսուհետև մենք ստիպված ենք բավականանալ «Նյու-Յորկ» «Թայմ» մեր թերթով և մենք ծարավիր յենք ամեն որ կարդալ Մստր Վալտեր Դյուրանտի հոդվածները: Միայն նրա չնորհիվ ե, վոր մենք կարողանում ենք հետևել ձեր հաջողություններին:

Մենք չենք ընկերներ, մեր ստացած դասը մեղ հեղափախականութեն ե՛լ ավելի յե ուժ տվել, ե՛լ ավելի մարտընչող ե տարձերել: Պայքարելու մեր կամքն ե՛լ ավելի յե ուժեղացել, և մենք քաց կանենք ամերիկական բանվորների աշքերը, վորի համար կապիտալիստական ախտեմը նրանց հիմարացնում ե, նրանց զրկելով ուալ իրավունքներից, մա՞նավանդ ապրելու իրավունքից:

Մենք մեր նամակը վերջացնում ենք: Մենք նաև հույս ունենք, վոր այս նամակը ճանապարհ կդանի դեպի ձեզ, դեպի սոցիալիստական լայնածավալ ձեր հայրենիքի ձեր ընկերները:

Ընկերական քարեներով՝ Վիլյամ Մակարով, Ալեքս Պիվոն

ԱՍԼԵՄ ԲԱՆՏ, ՈՐԵԳՈՆ ՆԱՀԱՆԳ

4. մարտի 1934 թ.

Թանկարդի՛ն ընկերներ.

Խոկապես մեծ բավականություն ե այն, յերբ գիտես, զոր պրոլետարական հայրենիքում դուք այդքան լավ եք ապրում: Մեր բանը բոլորովին ուրիշ է: Հրեշավոր ճգնաժամի պատճառով մեր բանվորներն այժմ սարսափելի ժամանակներ են անցկացնում:

ՆԻՐԱԾ. (արդյունաբերությունն աղքայնորեն վերականգնելու հարենք), վորի կերպումով բանվորներն աշխատանք պետք և ստանային ու նրանց պայմանները պետք եւ բարելավելին, իր անզորությունը ցույց տվեց, վորովհետև մենք միլիոնավոր գործադրութիւններ ունենք, և բանվորներն և գյուղացիներն ելի նույն ժուրացիկ վիճակում են ապրում, վորն ամբողջ կապիտալիստական աշխարհում և թագավորում:

Միլիոնավոր մտացված ու աչքաթող արած տղամարդ ու կին աննպատակ թափառում են ՀԱՄՆ-ի խոշոր քաղաքների փողոցներում: Մեր ու յերիտասարդ, նեղը ու սպիտակ անվերջ շաբանով քաշ են դալիս փողոցները, բուլվարներն ու ծառութիւնները՝ իդուր փորձ անելով գործ ճարել, մի ափսե սուսպ ատանալ ու գիշերը ովում դներու մի անկյուն: Բանվորների գրությունն որեցոր վատանում է: Մեր բանվորուհիների վիճակն ամելի ծանր է: Նրանց մեջ ծայր և առնում պոռնկությունն ու յերեխաների մահացությունը: Թերթերն ամեն որ լիքն են սովոր ու ապատարան չունենալուց հուսահատված ինքնապանություն գործող բանվորուհիների վերաբերյալ տեղեկություններով: Անգամ աշխատանք ունեցող բանվորներն ել շատ վատ են ապրում, վորովհետև ՆԻՐԱԾ առածդ՝ աշխատավարձն իջեցնելու, Փարբիկներում ու գործարաններում քրտնեցնելու սխտեմն ուժեղացնելու, կենսական անհրաժեշտ մթերքների դներն ալիքացնելու և դժբախտ դեղքերի վտանգը սաստկացնելու որենք եւ:

Բոլոր վերոգրյալի մեղքն այս աղքատության դեմ կռվող աշխատավոր տղամարդկանց ու կանանց վրա չի լնկնում: Մեղքն ամբողջովին ընկնում է կապիտալիստների—միլիոնատերերի ու միլիարդատերերի—վրա, վորոնք յերկիր են կառավարում, ուրենադրությունն ու դատավարությունը հսկում են, այն որենսդրությունն ու դատավարությունը, վոր մեզ զանազան հանցագործությունների, ընդհուպ մինչև մարդասպանություն գործելու մեջ են մեղադրում, այնինչ մենք մեր իրավունքներն ենք պաշտպանում: Նրանց ինչ փույթ, թե բանվորները քաղցած են: Միմիայն շահն և հաշվի առնվում—վրոգը, փողը և դարձյալ փողը, յեթե նույնիսկ մարդկանց խորտակված կյանքի դնով և

Ճեռք բերվում : Կանանց ու յերեխաների համար բրիլիանտներ, ավտոմոբիլներ, թանկադին մորթիներ ու պերճանքի առարկաներ, այն ինչ մենք քաղցած ենք, մեղ դատավան պատասխանագիրության են քաշ տալիս՝ բեմադրություններ կատարելու համարը, յերբ մենք համարձակվում ենք կապիտալիստական արյունաբօւների գործունեյությունը բաց անել :

Այսպես ե մեր բոլորի բանը, այսպես ե և իմ բանը : Յես այժմ մեռնողների կամերում եմ, վորովհետեւ վիթխարի միաբանությունը (կորարորացիա) իր վորովայթներով ուղղում ե քանվոր դասակարգին ահաբեկել : Այդ միաբանությունն ինձ ժեռնողների կամեր ե գցել, թեև յես մեղավոր չեմ : Իմ ընկերներից շատերն այսպիսի վիճակում են . Մունի Բելլինդսի գործը՝ Կալիֆորնիայում, նեղը յերեխաների գործը՝ Ակամբեյում, ինքնաղաստաստանի զոհերը՝ բարբարոս Մորիլանդում, Միուուրիում և Տեխասում : Կյանքի պայմանների համար այստեղ այս բոլոր գործերը բնորոշ բաներ են : Համենայն դեպս մեր ընկերները յերգվել են՝ կապիտալիստական բանտերից աղատել մեղ : Շնորհիվ նրանց, յես կարողանում եմ ապրել, նամակներ գրել ու բարեկամներիս հետ տեսնվել : Վողջունում եմ պրոլետարական հայրենիքի բանվորներին, Փաշխտական Ախտորիայի ու հիտերյան Գերմանիայի բանվորներին : Մենք նրանց հետ ընդհանուր շատ բան ունենք, մենք կա ընդհանուր պայքարի գործում շուտով կհասնենք մեր նպատակին : Դեպի խորհրդացյին իշխանություն՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում :

Յեղայրական բարեներով՝ Թեղողոր Զարդան

ՖՈՐԴՈՆ (ԱՄԵՐԻԿԱ) ԲԱՆՏԻ  
ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ԿԱՆԱՆՑ ՆԱՄԱԿԸ  
ՊՊՍ-ի ՅԵՎ ԲՈՒՆԴ\*)-ի, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Կեցցե՛ ՊՊՍ-ի և լկկ ու անկուսակցական բանվղների պայ-  
քարը՝ ի սլաշտականություն քաղբանտարկյալների:  
Ծանկադի՞ն ընկերներ.

Զեր զեկավարներն ու ձեր թերթերի խմբադիրները սիստե-  
մատիկ կերպով ձեղանից ծածկում են այն ծաղրանքներն ու ա-  
րյունավի ծեծերը, վորոնց յենթակա յեն ֆաշիստական Լեհա-  
տանի բանտերի քաղբանտարկյալները: Գերմանիայի տեռորի մա-  
սին ունեցած խոսակցություններով նրանք աշխատում են քո-  
զարկել Լեհաստանի վայրագ տեռորը:

ՅԵԹԵ ՊՊՍ-ի որդանը «Ռաբունիկ»-ը յերեմն քաղրանտար-  
կյալների հողվածներ ե տպում, ապա այն դժգոհության ճընչ-  
ման տակ ե անում միայն, վոր քաղբանտարկյալների նկատմամբ  
գործադրած տեռորի հետեւանքով ե առաջ դայլիս բանվորների  
մեջ: Զեր առաջնորդները միենույն հողվածներով փորձում են  
կեղծել տեռորի դեմ յեղած մասսայական պայքարի անհրաժեշ-  
տությունը, վոր այսպիսով ձեղ չեղեն մեղ պաշտպանելու պայ-  
քարից: Այնուամենայնիվ, այդ հողվածներն ամենենին ել չեն լու-  
սարանում քաղբանտարկյալների գործությունը: Այդ հողվածները  
մաղաչափ անդամ չեն արտացոլում այն ծաղրանքների ու սա-  
դիղմի բոլոր միաստերը, վոր քաղբանտարկյալների նկատմամբ  
Փաշիստներն են գործադրում: Ամենից առաջ՝ այդ հողվածնե-  
րում չի ասլում, թե դուք՝ ընկերներդ, մեղ պաշտպանելու հա-  
մար ի՞նչպես կարող եք պայքարել: Աւստի մենք անմիջականորեն  
ձեղ ենք գրում, վոր ձեզնից, և վոչ թե պարունայք Նեձյալովսկի-  
ներից\*\*\*) ու, Ալտերովներից\*\*\*\*), իմանանք քաղբանտարկյալների

\* ) ՊՊՍ—Լեհական սոցիալիստների կուսակցություն՝ Լեհաստանի աշխա-  
տավորության պայքարը վիճեցնող սոցիալ-դավաճան կուսակցություն:

ԲՈՒՆԴ—Համահեռական բանվորական միություն՝ Հրեական սոցիալ-

դավաճան կուսակցություն, վոր մտնում ե Յերկրորդ ինտերնացիոնալի մեջ:

\*\*) Նեձյալովսկի—ՊՊՍ-ի առաջնորդներից մեկը:

\*\*\*\*) Ալտերով—Բունդի առաջնորդներից մեկը:

կյանքի ու պայքարի պայմաններն և ողնեք մեր պայքարի գործում։ Այդտեղի ֆորդոն բանտում 60 քաղբանտարկյալ կին կա, վորոնց այստեղ են բերել Լեհաստանի բոլոր ծայրերից Վարչակայից, Զեղլերից (Դոմբրովիլ ալազան), Կելեցից, ամենից շատ՝ Արևմտյան Ռէլիայինայի՝ Արևելյան Բելոռուսիայի գրավված վայրերից։ Մեզ աքսորել են այստեղ, վոր կարողանան կըտրել այն տեղերից, վորտեղ մենք մեծացել, աշխատել ու պայքարել ենք։ Այսպես անելու պատճառն այն է, վոր մեզ զրկեն աղջականներից ու բարեկամներից նյութական ոժանդակություն ստանալու հնարավորությունից, վոր մեզ կտրեն պրոլետարիատի ու գյուղացիության համատեղ պայքարից, վերջապես վոր մեզ զըրկեն կոմիտե ասպարեզ մտած մասսաների ոգնությունից ու պաշտպանությունից։

Ֆաշիստական գաստարանները մեզ յերկարատե (6, 8, 10 տարվա) ծանր բանտարգելության են գաստապարտել այն պատճառով, վոր ձեզ հետ միասին պայքարել ենք կապիտալիստական ու կարվածատիրական շահագործման դեմ՝ հանուն աշխատանքի բարեկալման, այն պատճառով, վոր ձեզ հետ միասին պայքարել ենք տեսորի ու հակախորհրդային պատերազմի դեմ, աղջային ճնշումների դեմ, Փաշիստական դիկտատուրան տապալելու համար, վերջապես այն պատճառով, վոր մենք Նեժյալովակիների, Ժուլյալիկիների և Ալտերների համաձայնողականության ու դավաճանության դեմ ենք դուրս յեկել և մասսաներին ցույց տվել կապիտալիստական շահագործման դեմ պայքարելու ճիշտ ճանապարհ։

Ընկերներ, Փաշիստական ռեժիմի արյունոտ տեսորը սաստկանում է։ Լեհական պրոլետարիատի ուղեղում դեռ թարմ են բազմաթիվ ձերբակալությունների վաստերը, Պատրյանիցի, Լոձի մահածագործների գործադուլի ժամանակի սպանութների պիտիները, Վարչակայի «Ֆլանաչել» ու Զենստրախովիլի «Զենստրատիվ» գործարանների պատերի տակ վիրավորված բանվորները։ Դեռ թարմ են Արևմտյան Ռէլիայինայի ու Արևելյան Բելոռուսիայի կախաղանները, վողջ Լեհաստանում տեղի ունեցած պատժիչ ու արյունոտ առաքելությունները, հեղափո-

իսական դործողությունների պատճառով առեղծված արտօնակարգ զատարանները՝ Բելոստոկում, Լվովում ու Կոբրինում, բանսային նոր կանոնադրությունը, քաղբանտարկյալների սպանությունները՝ Գրոդզինողի, Լվովի, Վարչավայի, Գրոդնոյի, Բելոստոկի և այլ բանտերում։ Սովորի, տեսորի, դործազրկության ու պատերազմի կառավարության կիրառած այս բոլոր մեթոդները բանվորների ու գյուղացիների հեղափոխական պայքարը խեղեկուել է ԽՍՀՄ-ի դեմ պատերազմ պատրաստելու համար և։ Վայրաք տեսորի ալիքը, վոր վողջ Լեհաստանը քայքայում է, չի խնդրում նաև մեղ՝ քաղբանտարկյալ կանանց։ Ֆաշիստական կառավարությունն արագացրած տեմպով բանտային սպանիչ ռեժիմ և մայնում։ Հեղափոխական քաղբանտարկյալների Սկանդինավոր մինիստրության ներկայացուցչի ասածով՝ բանտային նոր կանոնադրությունը քաղբանտարկյալներին ձեռնտու չի։

Բայց Փաշիստները միայն Փիդիկապես չեն, վոր մեղ վոչնչացնում են. բացի այդ, նրանք ուղղում են մեր հեղափոխական արժանապատվությունը դցել, մեղ հրամայում են Փաշիստական ամեն մի ծառայի, այսպես կոչված «բարձր իշխանության» առաջ «պատվիր» առնել։ Յեկ վորովիհետև մենք չենք ուղղում այս պահանջին յենթարկվել, շաբաթներով մեղ դրկում են ոդից, դըրքեց, թերթից, նամակից, դրելու հարմարություններից և այլն։ Յեթե պատիժների դեմ բոլորում ենք, մեղ խոնավ, ցուրա կարցեր և սպառնում։ Մեղ ստիպում են զորանոցային զրոսանք կատարել, և այս զրոսանքների ժամանակ առաջանաված կարգը մազաշակի խանդարելու համար նորից պատիժ։ Պատժում են լուսամուտի առաջ կանգնելու համար, պատժում են ձեռքերը դըրպահնը դնելու համար, պատժում են ամեն տեսակի այլ պատճառքանություններով։

Բոնադրավլեցին մեր գրադարանը, վոր այսքան տարի մեր աղքականների ու մերձավորների ողնությամբ ելինք կաղմել։ Բանտի իշխանություններն ամենանուրբ միջոցների յին դիմում, վոր բանվորների ու գյուղացիների պայքարից վոչ մի տեղեկություն չի գողնեն մեղ հասնի։

Նամակ միայն մոտիկ աղքականներից կարելի յէ ստանալ ու

Յիշայն նրանց գլուխ: Մտերիմներին ու պայքարի ընկերներին գը-  
րել չի կարելի, քանի վոր քանտի իշխանությունը հայուրարել  
է, թե նրան վոստիկանության ձեռքը կտա: Մայրենի բելոռու-  
մական, ուկրայնական, հրեական լեզուներով վոչ թերժ են  
տալիս մեղ, վոչ նամակ, վոչ ել դիմք, վորի պատճառով մենք  
բոլորովին դրկված ենք դրսի վորեւ աեզեկությունից՝ մեղանից  
նրանք, ովքեր լեհերեն լեզու չըխտեն:

Ընկերներ, հանուն խնայողության, մեր քաղցած աշխատա-  
վարձը կրծատում են, մեղ սոցիալական ապահովագրությունից  
զրկում են, մեղանից մերջին կոպեկը խլում են ռազմական ներ-  
քին փոխառության համար, իսկ մեղ համար քանտի սնունդն ա-  
վելի ու ավելի յեն վատացնում, ձմեռը կամերները չեն վառում,  
վորովհետև այդ վորովի Փաշխատական կառավարությունը ուսմ-  
բեր, հեղձուցիչ գաղեր, զնդացիրներ և պատրաստում Լեհաստա-  
նի պայքարող բանվորների ու գյուղացիների դեմ, ԽՍՀՄ-ի  
բանվորների ու գյուղացիների դեմ:

Կտտանքները, վոր պահնորդական քաժիններում ու բանտե-  
րում ամբողջ շաբաթներ են տեսում, յերկար տարիների քան-  
տարգելությունը, սննդադուները և առհասաքակ բանտային ծա-  
նըր պայմանները վերջում քայքայել են մեր առողջությունը:  
Թոքախտը, տառմոքսի խանդարումն ու այլ հիվանդությունները  
մեր մեջ մասսայական յերեսույթ են: Ընդ սմին մենք բժշկական  
ունությունից բոլորովին զուրկ ենք: Բժիշկն ասում է թե՝ ինչո՞ւ  
համար և այս «սիմուլացիան»: Այս պատճառով 1934 թ. մար-  
տին այստեղ վախճանվեց ընկ. Կնապալը՝ կրակովցի մի բանվո-  
րուհի, իսկ այս տարի հունիսին ընկ. Ռողենբերգը զգաղարու-  
թյան ժամանակ ինքնասապանություն գործեց: Այս բոլորը մեր  
քանտային պայմանների միայն ամենանվազ պատկերն է: Զա-  
յած այս բոլորին՝ մենք մեր ուստի մեջ առաջլաւ ակտ անսա-  
սան ենք: Այստեղ բանտում ձեր պայքարի յուրաքանչյուր լուրը  
մեղ նորից և հայտն ներշնչում, թե մոտ և մեր և ձեր ազատո-  
գրումը:

Ընկերներ, մենք դիմում ենք ձեղ՝ ՊՊՍ-ի և ԲՈՒՆԴ-ի քան-

Հորներիութեան կամ պայքարը՝ քաղաքանության մեջ աղայքարը՝ քաղաքանության մեջ հեղափոխական պայքարը:

Մենք գիտենք, վոր գուք անկեղծորեն ուղղում եք պայքարել ձեր ձեռք աղատադրման համար, բայց պարունաքը Նեձյալկով սկզբներն ու Ալտերները ձեզ կասեցնում են պայքարից: Դուք շատ լավ գիտեք, թէ Լոձի և Բելոստոկի գործադուլի ժամանակ նրանք ի՞նչ դավաճան դեր խաղացին: Մի՛ հավատացեք Փաշիզմի գեմ պայքարելու մասին նրանց ապամաներին: Նրանք բուրժուազիային ոգնում են ԽՍՀՄ-ի գեմ պատերազմ պատրաստելու: ՊՊՄ-ի ու ԲՈՒՆԴ-ի առաջնորդները դավաճանում են պրոլետարիատի պայքարը, ճիշտ այնպես, ինչպես Վելլախին և մյուաները դավաճանեցին գերմանական պրոլետարիատի պայքարը:

Ընկերներ, պայքարի յելեք ընդդեմ Փաշիստական տեռորի: Կազմակերպեցեք բանվոր մասսային և գուրս յեկեք քաղանատարկյաներին պաշտպանելու: Միասնական ճակատի ցույցերի գուրս յեկեք՝ բանտերի ու դատարանների մոտ: Աըհմիութենական ամեն մի ժողովում մասսայական բողոքներ հայտնեցեք Փաշիստական բանտարին ուժիմի, բանտերում տեղի ունեցող ծեծի ու արտակարգ դատարանների դեմ: Մասսայականորեն մտեք ՄՈՊՐ-ի՝ Փաշիստական տեռորի դեմ, քաղաքանությալներին պաշտպանելու: Համար, հականորդհրդային պատերազմի գեմ պայքարող միակ կազմակերպության շարքերը:

Ստեղծեցե՛ք քաղաքանությարկյալների պաշտպանության կոմիտեներ: Կազմակերպեցեք նովիրատվություններ ու քաղաքանությալների շեֆություն:

Փրկեցե՛ք մեզ քաղցից, ցրտից ու Փիղիկապես հյուծվելուց:

Հեղափոխական բարեմերով՝ Թորդոն բանտի քաղաքանությալ կանայք

1933 թ. դեկտեմբեր

Թանկադի՛ն ընկերներ.

Շնորհակալ եմ ձեղանից այն հնարավորության համար, վոր գարողանում եմ ովկիանուի վրայով վողջույն ուղարկել ընկեր-

ներին : Յես անչափ հրճված եմ խորհրդային բանվորներով, պո-  
րոնք, չնայած սոցիալիզմ կառուցելու առաջարխում իրենց ունե-  
ցած վիթխարի աշխատանքներին, հետաքրքրություն են դժուամ  
կապիտալիստական յերկրների քաղաքանտարկյալներին վողեվորեւ-  
նամակներ գրելու :

Իմ անկեղծ վողջույնը ՄՈՊ-ի ընկերներին, յես նրանց հա-  
ջողություն եմ ցանկանում : Մենք մեր կապիտալիստաների դեմ  
պայքարում ենք՝ պաշտպանելով ձեզ, դուք ամբողջ աշխարհի  
բանվոր դասակարգի համար սոցիալիստական բերդ եք կառու-  
ցում :

Վերջին տարին այստեղ՝ բանտում մնալս (յես փորձում եյք  
լվացքատների ներք ու սպիտակ բանվորներին կաղմակերպել,  
վորի համար բանու (ընկա) կապիտալիստական ախտեմի հանդեմ  
իմ աշքերն ե'լ այլելի բաց արեց : Յես տեսել ու կաշվիս վրա  
փորձել եմ, թե ինչպես ե դաժան վոստիկանությունը մահակնե-  
րով հարձակվում ծրաբներ բաժանողների ու ցուցարարների վր-  
րա, բայց այն նախամտածված թշնամանքն ու մարդկանց այն-  
պիսի մտածացին կոտորածը, վոր ամենաքաղաքակիրթ ՀԱՄՆ-ի  
բանտում ենք տեսնում, մարդու արյունը յերակների մեջ սաղ-  
նում ե :

ՀԱՄՆ-ի բանտերը բերդի տպավորություն են թաղնում «  
Բանտարկյալներն ստրուկների վիճակումն են, նրանց որը սաբ-  
ասափելի յե և գանգատվելու իրավունք չունեն : Նրանք չարունակ  
զինված պահակի հսկողության տակ են : Բանտի վերակացուներն  
ու ծառայողները վոստիկանության ամենավայրագ ու դաժան  
գործակալներն են, կարծես նրանցից լինեն, վոր ցարիզմի որով  
ապրած ձեր ծերերը դեռևս չեն մոռացել : Տնտեսական ճնշման  
հանդեպ աճող դիմադրությանը վոստիկանությունն ու դատա-  
կան ապարատը մի պատասխան ունեն — ե'լ այլելի խիստ պատ-  
ժել, ե'լ այլելի յերկարատեւ բանարկությունների գատապար-  
տել (5 տարվա բանտարկությունը «թիթե» դատավճիռ և հա-  
մարվում) և դաժան վերաբերմունքի, ֆիզիկական վոչնչացման  
յինթարկել :

Մի բուռն քրեյազետներն ու հոգեբուժներն ամոթից գլուխ-

Ները սկսած եւ քաշ անեն : Բուրժուական դիտության ու կուլտուրայի ստանդարտ ներկայացուցիչների պես նրանք եւ շարունակում են իրենց կեղծ դիտական ապացույցներով քողարկել կապիտալիստական սխռեմի գաղանությունները :

Միայն ԽՍՀՄ-ում դիտությունը կարող է ուղիղ ճանապարհով ընթանալ : Միայն այնուղիւ կարող է դիտությունը դրձնականում կիրառվել : Միայն պրոլետարական յերկրում մարդու ստեղծաբործությունը կարող է դառնալ ընդհանուր շահի համելու կողեկտիվ ջանք, վորի ապացույցն և Սպիտակ—Բալթիկ Ֆունդը :

Լեվոն Բյուռեն  
Հրեյտ Մեդոս Պրիզոն

Կոմշտոկ, Եյու-Յուք

## ԱՆԴԱԴՐՈՒՄ ՈԳՆԵՑԵՔ ՄՈՊՐ-ԻՆ

Ընկերներ :

Մեր ամուսինները սպանված են Բեռլինի, Դարեաույի և Աայլցիքի ֆաշիստական բանտերում՝ դաղանային տանջանքներից հետո : Վողջ և առողջ նրանք ընկան ֆաշիստական բանտերը, իսկ յերբ մենք նրանց կրկին տեսանք—խոշտանդված, վերքերով լի դիտկներ եյին նրանք արդեն : Նրանց դիտկները համարանում են անմիջական մեղաղբանք ֆաշիստական տեսորի գեմ : Ստոր հերցուրանքներ են ֆաշիստների կողմից տարածվող այն լուրերը, վոր իրը թե մեր ամուսինները ինքնասպանություն են գործել :

Ֆաշիզմի կողմից գեպի իրենց հակառակորդները ունեցած կատաղի և կույր ատելություն պայմաններում, մենք գտնվում եյինք ձերբակարման վտանգի տակ իրեւ պատանդներ, ինչպես զա պատահեց ընկ . ընկ . Շտեյնֆուստի և Բեյմերի կանանց հետ : Ծնորհիվ միայն ՄՈՊՐ-ի կողմից կազմակերպված պրոլետար-

կան համերաշխության կամպանիայի, մենք և մեր դավակները հնարավորություն առացանք դալ Խորհրդային Միություն— ամբողջ աշխարհի աշխատավորության հայրենիքը:

3000-ից ավելի հեղափոխականներ տանջալից մահվան են յենթարկված ֆաշիստական դահճների կողմից Գերմանիայում։ Շատ կանանց և մայրերի ընկալ նույն վիճակը, ինչ վոր մեզ Մենք հիշում ենք հակաֆաշխատական մարտիկներ՝ ինձի Շերայի, Շտեյնֆուստի, Շենխարի, Շվարցի և Երիխ Մյուզամի սպանությունը։

Տասնյակ հազարավոր պլուետարկան հեղափոխականներ դեռ գտնվում են բանտերում, տաժանակիր աշխատանքներում և մեկուսացման համբարներում, յենթարկվելով յուրաքանչյուր որ մահաբեր վտանգի։ Նրանց մեջ ե Գերմանիայի աշխատավորության առաջնորդ՝ Երնեստ Թելմանը։

Ֆաշիստները ջանում են թող փչել աշխատավորության աչքերին՝ դատարկ խոսքերի ու շքեղ պարագների միջոցով, վորոնց կազմակերպման համար նրանք խլում են քաղցած ժողովրդից վերջին փշրանքները, բայց հեղափոխական Փրոնտը Գերմանիայում ամրանում է։ Մենք տեսել ենք քանիվորների ցույցը աշխատավարձի պակասեցման դեմ, կանանց ցույցը՝ իրենց ամուսիններին հարկադիր կերպով դյուդ արտաքսելու դեմ։ Մենք համոզված ենք նրանում, վոր աշխատավորական մասսաների միասնական Փրոնտի յելույթները կկասեցնեն Փաշիստների դադանությունները և այն ժամանակ նացիոնալ-սոցիստաների բոլոր վոճարագործությունների վրեմբ կհասուցվի։

Հայտնելով մեր յերախտիքը ՄՈՊՐ-ին և մոպիականներին նրանց յեռանուուն աջակցության համար, մենք կոչ ենք անում բոլոր աշխատավորներին՝ ողնել ՄՈՊՐ-ին Փաշիստական զոհերի համար տարմող համերաշխության գործին։ Երնեստ Թելմանի երանուարիված գերմանական բոլոր հակաֆաշխատների պաշտպանության համար տարմող կամպանիան պետք է տա նույն արդյունքները, ինչ արդյունքներ վոր տվեցին Դիմիտրովի, Պապովի և Տանեվի աղասուության կամպանիան։

Վոչ մի աշխատավոր չպետք ե հակատա Փաշիստական Առ-

դրերի կողմից տարածվող լուրերին, թե մեծ թվով մարդիկ հնապատյած մեկուսացման ճամբարներից։ Դեռ այն ժամանակ, յերբ մեր ամուսինները դանվում ենին գերմանական բանտերում, ֆաշիստները լուրեր ենին տարածում մեկուսացման ճամբարներից ցրման մասին։ Սակայն զբանք գոյություն ունեն դեռ մինչև որս, իսկ մեր ամուսիններին, ինչպես նաև շատ հակաֆաշիստների, ապանեցին։

Յաշողմի բոլոր դրէերի անունից մենք կոչ ենք անում աշխարհի հեղափոխական պրոլետարներին։

— Միայն միջազգային միասնական պայքարը Երմեստ Թելմանի և բոլոր բանտարկված հակաֆաշիստների ազատության համար կըերի նրանց վրկությունը։ Անդադրում ողնեցեք ՄՈՊՐ-ին։

Յուրաքանչյուր աշխատավորի պարտքն եւ ակտիվ համելաշխություն բոլոր հետ, ում սպանում եւ տանջալից մահ։

Ենթա Կայմիրշակ  
Եմմա Շտենցեր  
Բերդա Ալբրեխտ

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՎԱՐԻԱՅԻՑ

Թանկադի՞ն ընկերներ։

Մենք, վոր չափաղանց գժվարին պայմաններում՝ տեսորի պայմաններում պայքարում, ենք Բավարիայում, դիմում ենք ձեզ։

Առաջին հերթին տեղեկացնում ենք ձեզ, վոր կոմկուսակցությունն այստեղ ևս կապը, և վոչ մի տեսոր չի կարող նրան վոչ չացնել։

Մենք փորձից դիտենք, վոր միայն մասսայական շարժումը կարող է փոխել գրությունը։ Սակայն այժմ, յերբ մենք անհավասար ուժերի դեմ ենք պայքարում, մենք դիմում ենք ձեզ՝ ողնեցեք մեզ, վորովհետեւ ձեզ պրակարանդը կարող է ողնել մեզ

մեր սլայքարում : Գերմանացի ընկերները դանում են , վոր ֆաշիտմը պետք է մերկացնել :

Ընկերներ , Գերմանիայի կոմիտակցությունը մեծ կորուստներ և ունեցել , վորովհետեւ թշնամին հետապնդում է իր նպատակը՝ սխտեմատիկորեն վոչչացնել հեղափոխականներին : Մենք գրում ենք ձեզ մեր ընկերների տանջանքների մասին :

Բացի մեր առաջին ակտիվ ընկերներից , մենք կորցրինք ենք . Ֆրանց Շտենցերին , վոր մեր լավագույն ընկերներից մեկն եր : Ընկ . Շտենցերը բերվեց Դախառույի (Մյունիսենի մոտ գտնվող ճամբարը) , նրան դցին մի մուլթ նկուղ և հետագայում գնդակահարեցին՝ «իսախուստի վորձ կատարելու ժամանակ» : Գնդակը նրա ճակատին եր կալել : Կալանքի տակ յեղած ժամանակ նրան միայն հաց ու ջուր ելին տալիս , ու ծեծում : Նա այնքան եր նիւհարել , կերպարանարտիվել , վոր մահից հետո , նրա կինը ձեռքի վրա յեղած սպիներից միայն ճանաչեց : Նրա հետ միասին ճամբարում գտնվում եր նաև ընկ . Ֆրչուչուցը : Նրան ևս մի մուլթ նկուղ դցեցին : Հայանական և , վոր նա ելարդեն մահացել է : Հանձին ընկ . Շտենցերի՝ մենք կորցրինք մեր լավագույն ընկերներից մեկին , մի մարտիկի , վոր մինչև իր մահը նվիրված եր հեղափոխության գործին և հաստատ ու գլուխակցորեն սպայքարում եր հանուն բանվոր գաղտնակարգի ազատագրման : Նրա մաքուր քնավորությունը , նրա պլուղետարական ընկերական վերաբերմունքը , նվիրվածությունն ու մարտունակությունը մեզ որինակ պետք են ծառայեն :

Ոգոստոսի վերջին սպանվեց ընկ . Ցեյնարը : Այսպիսի դեպքեցում բանտարկված ընկերներին առանձնացնում են :

Ընկերները տեսել են , թե ինչպես ատրճանակներով դիմված գրոհայրինները շրջապատեցին ընկ . Ցեյնարին և գնդակներ արձակեցին :

Ընկ . Լեռն Հառումանին նախ այլինահար արին , իսկ հետո գնդակահարեցին : Դրեսսելի , Գողցի և Հառումանի սպանության որերին ճամբարի պարետը վոմն Վեկերլին եր , վոր այժմ Շտատհարտենում է գտնվում : Այժմ ճամբարի պարետը վոմն Ֆոն Ցյըն է : Նա ավելի «որինական» մեթոդներ և գործադրում :

Սինզդեռ նախկին պարետը կալանավորներին մարդասալանների  
ջոկատներին եր հանձնում, նոր պարետը կալանավորներին ճամ-  
բարային դատարանին և հանձնում, վորի կաղմի մեջ են մտնում,  
պարետը, նրա ողնականը և յերկու գրոհայիններ :

Այդ դատարանը կալանավորներին վորոշ կամ անվորոշ ժա-  
մանակով դատապարտում ե մութ նկուղի, ծեծի և այլն :

Բեռլին, 17/12—33

Թանկադին ընկերներ .

... Սարսափելի գրություն ե տիրում Գերմանիայում, և  
նրա ազգեցությունը բանվորների կյանքի վրա դուք դժվարու-  
թյամբ կարող եք պատկերացնել: Կատաղի տեռորը մեր աշխա-  
տանքի համար յերբեմն անհաղթելի խոչնղոտներ և ատեղծում:  
Բայց մենք, իհարկե, ուժներս ներածին անում ենք:

...Դուք լավ ուղիղ ընդունիչ ունե՞ք: Զեղ շատ հետաքրքիր  
վլիներ ականջ դնելիք մեր ունեորների իշխանությանը, վոր հաս-  
կանայիք, թե ինչպիսի ստով, կեղծավորությամբ ու գեմադո-  
դիայով նրանց հաջողվում է իշխանության դլուխ մնալ: Սակայն  
այս ել մեջ լավատեսական տրամադրություն ե առաջաց-  
նում, վորովհետև այդպիսի իշխանությունը յերկար չի կարող  
դիմանալ: Յես ծանոթներիս մոտ յերբեմն ուագիոյով ականջ եմ  
դնում Մոսկվային ու Լենինգրադին: Այդ հաղորդումները մեզ  
կատարյալ առույգություն են տալիս ու նոր ուժեր հաղորդում  
մեր ծանր պայքարում:

...Յես արդեն վերը հիշատակեցի, թե վորքան դժվար ե  
հեռվից պատկերացնել տեռորի ու ճնշման այն թափը, վորի տակ  
Գերմանիայի բանվորներն ստիպված են ապրել: Ապրուստի մա-  
կարդակն այնքան ցածրացել ե, վոր նույնիսկ վորակյալ բան-  
վորների մի շաբաթվար դատումը 12—20 մարկայից չի անցնում:  
Աշխատավարձը կիսով չափ իջել ե, իսկ գործազրկությունը  
դարձյալ չի պակասում: Նորերս լսեցի, վոր մի գրոհային ասաց,  
թե զմենք առաջ ել այսքան ողնություն եյինք ատանում, վորի  
համար մենք հիմա պիտի աշխատենք և աշխատանքի մեջ մեր ի-

բԵրը մաշենք»։ Բայց թե դրոհայինի համար ել այսպիսի արտահայտությունը համակենարունացման ճամբարով ե վերջանում։

Իսկ կենսական անհրաժեշտ մթերքների գները կրկնապատճելու ու յեռաղատկվել են, որինակ՝ մարդարինը ծրարին 25 պֆենից մինչև 80—90 պֆեն։ Բայց փոխարենը գինու, ձեռների, վոստրեյի ու պերճանքի մյուս առարկաների գները խիստ իջել են։ Բնակարանային վարձն այն բնակարանների նկատմամբ ե իջել, վոր յերեք աենյակից ավելի յե։ Յերբ Բեյտելլշտասե, Կոմենդանտշտրասսե և այլ փողոցներով անց ես կենում, մերկ տները դատարկ կանգնած են։ Իսկ ինչպես քեզ հայտնի յե՝ միայն Բեռլինում 30 հազար բանվոր ձմեռը տախտակե քուդկաներում և ապրում։

... Առաջարկությունների ու ձերբակալությունների ժամանակ բանվորների բնակարաններից դանաղան պատրիվակներով բոլոր արժեքավոր բաները վերցնում են՝ հեծանվով, մոտոցիկլ, գրքեր, դրամ, ռադիո-ապարատներ։ Ռադիոն, «Ալոր բանվորները շկարողանան Մոակվան ու Լենինգրադը լսել»։ Միայն Բեռլինում բանվորներից 350 մոտոցիկլ և բռնադրավաված, «Վոր անկեդուլ աշխատանք չսպասարկեն»։ Իսկ ով միորմի դանդատվել, նա համակենտրոնացման ճամբարից պլրծում չունի։ Մեզ մոտ խուզարկություն կատարելիս բոլոր ոռուերեն գասադրքերը վերցրին։

Բանվորներին, բացի այդ, նեղում ե նաև Փաշխատական բարեգործության նպատակներով կատարվող դրամական նվերներ հավաքելը։ Հրաժարվելը հաճախ բանտարկությամբ և աղառնում, ել չխոսենք աշխատանքից աղառուելու մասին։ Իսկ մանրմունք խանութպահներն ու տնայնադորձներն այս գանձումներից բոլորովին խորտակվում են։ Մի խանութպահի, ի պատասխան նրա դանդատի, յես ասացի։

— Զե՞ վոր բոլոր խանութպահները Փաշխատներին ուղում ենին և ընտրեցին։

— Բայց ո՞վ կարող եր իմանալ, թե այս իշխանությունն այսքան ոլժիքախտություններ կարող ե քերել։

Բայց բանվորների համար ամենասարսափելին դրոհայինների ու հատուկ ջոկատների դորանոցներն են, ուր կալանակորե-

լուց հետո մեկեն բերում են : Ուրբաթ որն իմ ծանոթ Տ-ն, 26 տարեկան, Լյուքիմշտրասսեյլից (Մոռպիտում) թաղվեց . նա 5 շաբաթ առաջ եր բանտարկվել : Հաստ արդեն ծանոթ մեթոդների, նրան այնքան յերկար «հարցաքննեցին», վոր մի քանի որ առաջ նրան, կրած չարչարանքներից կիսամեռ վիճակում, փոխադրեցին քաղաքային հիմանդանոց, վորտեղ և շուտով մեռավ : Թեև պարզ հայտնի յեր, թե նա ո՛վ ե, նրա հասցեն, բայց նրան, իրու չճանաչված դիմակ, տարան քաղաքային դիմարանը : Իսկ յերբ հորն ու մորը մեծ դժվարություններից հետո հաջողվեց մտնել դիմակի մոտ, ծերումին տեղն ու տեղը ձերբակալվեց, վորովհետև զդիմացավ ու տղային տեսնելուն պես ճշաց .

— Ես անիծված բանդան ե իմ տղային սպանել :

Ծերումնուն շուտով բաց թողին, այս բանի մասին բանվորների մեջ արդեն շատ խոսվեց, բայց և այնպես նա պարտավոր և ամեն որ ներկայանալ վոստիկանատուն : Ահա՝ ձեզ այն հաղարավոր դեպքերից միայն մեկը, վորոնք հայտնի չեն դաւանում, վորովհետև ծնողներն ու աղքականները վախենում են : Բայց նրանք ել, ում հաջողվել ե կենդանի դուրս դալ այդ զորանոցներից, անհուսավի յեն :

Բայց մենք արիությունը չենք կորցնում : Յեթե ինձ բռնեն և մի բան պատահի, դուք յերբեք մի հավատաք, վոր ինքնասպանություն կամ նման բան արած լինեմ : Յես գիտեմ, վոր բոլոր բաները անելու համար, յես Փեղիկապես ու բարոյապես բավականին ամուլտ եմ : Յես յերբեք ձեռքերս չեմ խաչի, ինչ վորուժուն ներում ե, յես իշանեմ, վոր ելի ապրեմ մինչև վերջին կոփակը, վորին 28 տարի յե, ինչ սպասում եմ :

Սրտագին վողջույն՝

Ռութ Ֆրոնտ

## ՖԱՇՆԻՑԱԿԱՆ ԴԺՈԽՔՈՒՄ

Գերմանական կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի որդան «Ռութ Ֆանեյի» նախկին գլուխովոր խըմառագիր Վերներ Գիրշը հետեւալն է դրում Փաշիստական Գերմա-

Հետայի բանտերում և համակենտրոնացման ճամբարներում գոյություն ունեցող ռեժիմի մասին:

«1933 թ. մարտին, Ռայխստագի հրկիվումից չորս որ հետո, ընկ. Երևան Թելմանի հետ յես ել ձերբակալվեցի: Այդ որվանից այս տարի ու վեստա ընթացքում յես նստել եմ Փաշխտական Գերմանիայի զանազան բանտերում և համակենտրոնացման ճամփարներում: Այդ ժամանակամիջոցում յես իմ «բնակարանը» 22 անդամ վորսեցի: 16 անդամ ինձ ծեծել են մինչև գիտակցությունս կորցնելը և յես մի ականջիցս զրկվել եմ:

Իմ առաջին ծեծը տեղի ունեցավ 1933 թ. ապրիլին: Այդ որերին նացիոնալ-սոցիալիստների շարքն անցավ վորոն Բրաշվից, վոր սոցիալ-դեմոկրատների իշխանության ժամանակ Բեռլինի քրեյչական վոստիկանության ականավոր կոմիսարներից մեկն եր: Բրաշվիցն ինձ անմիջապես հանձնեց Փաշխտ բանդիտների ծեռքը: Ապրիլի 13-ին իրաք թե Հարցաքննության համար, ինձ կանչեցին կարլ Լիբկնեխտի անվան տունը, վորտեղ առաջներում Գերմանական Կոմկուսի կենտրոնն եր տեղավորված, իսկ այժմ՝ Փաշխտական գաղտնի վոստիկանության գլխավոր շտաբը: Յերեկոյան ժամը 9 և կեսին ինձ տարան կոմիսար Բրաշվիցի սենյակը: Պատահաբար, թե դիտմամբ Բրաշվիցն ինձ ընդունեց այս սենյակում, վոր իմ աշխատասենյակն եր, յերբ յես «Ռոտե Ֆանեյի» գլխավոր իմբարդիր եյի:

«Իդեոլոգիական» կարճ նախապատրաստությունից հետո, վոր հատկապես գերմանական կոմկուսի առաջնորդ ընկ: Թելմանի հացեցին ուղղած կողմանույն հայհոյանք եր, Բրաշվիցն անհետացավ: Իմ առաջ ցցվեց դրոհային զոկատների մի հարրած հրամանատար: Բացի այդ, աջ ու ձախ կողքերիս, ինչպես և առջևուրիշ յերեք բանդիտ ևս ցցվեցին, իսկ մի ուրիշ բանդիտ առըբճանակը բռնած մի վորքը հեռու յեր կանգնել: Սկսեցին հերթով հարվածել ինձ՝ խիելով պլիսիս և աչք ու յերեսիս: Բուռնցքին ընկերացավ ուղղինե մահամկը: Ծեծը տեսեց յերկու և կես ժամ, աննշան ընդհատումներով: Սուլալի ծեծից աչքերս վակվեցին:

Յերբ ծեծն ավարտվեց, ինձ հայտարարեցին.

— Հիմա կորիր ներքեւ՝ նկուղը։ Հիմա խող, քեզ կզնդակահարեն։ Ասա քո վերջին ցանկությունը։

Յես թուղթ պահանջեցի։ Նրանք հայտարարեցին, վոր յեւպետք և նախապես ասեմ, թե ինչ եմ գրելու։ Յես պատասխանեցի, թե ուղղում եմ իմ վերջին վողջույնը գրել հարազատներիս։ Այդ ժամանակ ինձ հայտարարեցին, վոր «այս անդամ» ինձ բանտ կտանեն, բայց մի շարաթից նորից կկանչեն։ Սակայն ինձ տարան դրոհայինների մի դորանոց։ այստեղ ինձ հայտարարեցին՝ «Թելմանի աղյուտանու։ Գրոհայինները, թեև պառկած եյին, հետաքրքրությունից վեր կացան և կատաղի հայացքով նայում եյին ինձ։ Նրանք հարձակիւցին վրաս և նորից սկսեցին ծեծել։

Առավոտյան ինձ մոտեցավ մի գրոհային և պահանջեց, վոր դոչեմ «Կեցցե Հիտլերը»։ յերբ յես հրաժարվեցի, հրամանատարը մոտեցավ ինձ և հարցրեց, թե ինչու չեմ կատարում այդ հրամանը, յես պատասխանեցի, վոր չեմ կարող։

— Լավ, յեթե դու չես ցանկանում ասել, «Կեցցե Հիտլերը», ապա ծայրահեղ դեպքում յերգիր գերմանական հիմնը, չե՞ վոր այդ կարող ես։ բոլորն ել կարող են այդ անել, չե՞ վոր դու ել դերմանացի յես։ Իսկ յես յերբ դրանից ել հրաժարվեցի, հրամանատարը դուաց։

— Դե, գործի անցեք, դոներն ու լուսամուտները փակեցեք։ Այսբողջ բանդան շրջապատեց ինձ։ Դոներն ու լուսամուտները փակեցին։ Վերարկուս ու սիթիկս պատուեցին։ Յերկու գրոհային ձեռքերս այնպես վոլորեցին, վոր յես չոքեցի։ մյուսները կաշվեասու գոտիներով ծեծում եյին ինձ։ Գրոհայինների հրամանաւարն ամբողջ ժամանակ վոռնում եր։

— Յերգիր, յերգիր։

Յես ճշացի։

— Յեթե յես վախկոտ լինելի, կերպեյի, ամոլչ չի՞ ձեզ՝ հակառակորդին ծեծել միայն նրա համար, վոր նա վախկոտ չե։

Յերբ յես գիտակցությունս կորցրի, նրանք գլխիս ջուր ածեւով նորից ինձ սթափեցրին, վորից հետո ծեծը վերսկսվեց։

Իմ դահիճները յոթ անդամ վոխվեցին։ Նրանցից մեկը կատարյաւ գաղանացած վիճակում սկսեց թիթելյա թեյամանով

խոփել դլիսիս : Դեմքիս վերք առաջացավ . վժեմ վերքն անվտանգ էր ,  
բայց զեմքս արյունաթաթախ յեղալ :

Սեպտեմբերին , իմ ձերբակալությունից վեց ամիս հետո , ինձ  
մի խումբ ուրիշ կալանավորների հետ բանտից տեղափոխեցին  
Բրանդենբուրգի համակենտրոնացման համբարը : Այս ճամբարում  
ուժիմ ստակալի յեր : Այստեղ հավաքված եյին ամենասրբու-  
նարբու , ախտավոր դահճճները : Այստեղ մի ֆլիդել կար , վորին  
կալանավորները «Մեռյալ տուն» եյին ասում : Այստեղ հայտնա-  
քերվեց Բրանդենբուրգի կուսակցական աշխատողուհի , բռնալրա-  
րությունից հետո սպանած Գերարդունդ Պիտերի այլանդակված  
մարմինը :

Մի տաս որ յես հնարավորություն ստացա մի կերպ թագնվել  
ձյուս կալանավորների մեջ : Սակայն տասնմեկերրորդ որը ճամ-  
բարի պարետը «հայտաբերեց» ինձ : Ինձ նստեցրին «մեռելատան»  
նկուղը . այստեղ ուրիշ տասն ընկերների հետ նստած եր նաև  
ընկ . Հայնց Ալտմանը , վորին Փաշխատները մեղադրում եյին , թե  
ուրիշ ճամբարում հեղափոխական խմբակ ե կազմակերպել :

Քնի . Ալտմանին տեղավորեցին ինձ հետ : Ինձ հրամայեցին  
ծեծել նրան : Յես , իհարկե , հրաժարվեցի : Դրանից հետո դա-  
հճճները հարձակվեցին վրաս և ծեծելով կիսամեռ դարձրին :

Դահճճները հետները սանիտարներ եյին բերում , վորոնք ա-  
րյունակալած տեղերին յոդ եյին քսում , կամ ծեծողների ջարդ-  
ված տեղերը վիապում , ապա հեռանում եյին ցինիկորեն հայտա-  
րարելով .

— Կարելի յե չարունակել :

«Մեռելատուն» բերելուց միայն յերկու չարաթ հետո յես  
հնարավորություն ունեցա ուրիշ կալանավորներ տեսնել : Մինչ  
այդ ինձ շրջապատողները սև շապիկավոր դահճճներն եյին :

Այս բանն ինձ չտեսնած ուրախություն պատճառեց : Պրոլե-  
տարական , կոմունիստական համերաշխության այն դդացմունքն  
ե այդ , վոր մեղ սարսափելի չի դարձնում և վոչ մի տանջանք , ու  
մեզ կոփում ե նոր փորձությունների և նոր պայքարի համար :

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ ԱՆՉԱՓԱՀԱՍ  
«ՃԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻՆ» ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

(ԲԵՌ-ՔԼ-ԱՆ-ՄԵՐ-ՈՒՄ, վոր նշանակում ե՞ ծովի հրաշաղեղ կղզի, ուր գտնվում է յերեխաների տաժանակիր բանտերից մեկը —յերիտասարդ «Հանցագործների» համար, չքալորության, վոր-բերի ու յերեխաների համար, փորոնք կարիքից դրդված ձեռք են ավել մասնավոր սեփականության «սուրբ» իրավունքին:

Անողոք, սովոր ռեժիմի հետևանքով հուսահատության հասացրած, կալանավորներից մի մասը, թվով 56 հողի ա. թ. ոգոս-տոսի 27-ին կազմակերպեցին անհուսալի փախուստ բանտից:

Ստորև բերում ենք յերկու պատկեր ԲԵՌ-ՔԼ-ԱՆ-ՄԵՐ բանտում գտնվող յերեխաների կյանքից):

ՍՍԹՅԱՑԻՆ ԶԲԻ ՄԵՋ

ԲԵՌ-ԻԼԻ մեկուսարանում պահվող յերեխաների որն սկսվում է վաղ առավոտվանից: Ժամը 4-ին՝ պետք եւ վեր կենալ, կարգի բերել անկողինը; Յեթե դա կատարվում է անկանոն—մեղավորը յենթարկվում է պատժի: Ժամը 8-ին սկսվում է արտաքնոցների ժաքրությունը: Դա առլորտկան մաքրություն չե ԲԵՌ-ԻԼՈՒՄ, ինչպիսի յեղանակ ել վոր լինի—կանոնները անողոք են: Նրանք, ովքեր զրադշած են մաքրությամբ—աշխատում են կիսամերկ... Բայց տաժանակիր բանտի վարչությունը գտնում է, վոր այդ գժբախտների համար տանջանքները քիչ են:

Զմոսանը մեկուսարաններում բանտարկվածները, կատարելով վարչության քմահամառույքը, պետք եւ լվացվեն սառցային ջրում, նախորոք ջարդելով սառուցիչ չերտը:

Պետք եւ քրքրել նացիոնալ-սոցիալիստների մեկուսացման ճամբարում յեղած հալածանքների պատմազրությունների մեջ, վորպեսզի ճարվի նրա նման նրբագույն տանջանքների միոցառումներ:

Յեվ դա անխանում են «դաստիարակության փակ տուն»: Այդ գժբախտներից յուրաքանչյուրը թոքերի բորբոքումով հիվանդանալու և ամբողջ կյանքում անդամակույծ դառնալու վտանգի տակ է: Դահիճները չեն ճնշվում—նրանց զոհերը—վորբեր են ու անապատաններ, նրանց պաշտպանողներ չկան:

Ժամը 11-ին կալանավորներին նախաճաշ են տալիս: Հիշեց-նում ենք, վոր նախաճաշը մի որ բաղկացած ե լինում մի կտոր հացից, իսկ մյուս որը—հաղիսլ տաքացրած յուղալի ջրից:

## ԱՎԱԶ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Ժամը 2-ը—դա որհասաւկան ժամ ե... Սկսվում ե չուեսնլած տանջանք, վորը ինքնըստինքյան արդարացնում ե բոլոր վասխուստներն ու վրեժինողության արտահայտությունները: Ավազի տեղափոխություն: Նախկին տաժանակիրները, դիմուրական կալանավորները — կարմի և Ոլերոնի բոնավորները «Դեֆանսի» եջերում արդեն մերկացրել են այդ սոսկալի տանջանքները: Այդ տանջանքներին յենթարկվում են նաև յերեխանները: Յեկ շարչաբանը սիսվում ե ամեն ոք ժամը 2-ից մինչև 5-ը, ըստ վորում աշխատանքը կատարվում ե ամենաբարբարոս պայմաններում:

Յերբ նաևը մոտենում է կղզուն, ձեր աչքին իսկույն ընկնում ե ծովի վրա կախված բարձր ժայռերի վրա նշմարվող հնագույնքերը, իսկ աջ կողմում «տաժանակիր բանտը»...

Լուսանկարները տալիս են միայն աղոտ պատկերացում, այդ զառիվայր ժայռերի բարձրության մասին:

Պետք է ինքներդ բարձրանաք նրանց վրա, ինչոք դա կատարել եմ ինքս, վորպետի հաշվի առնեք այդ տանջալի մագրւցումների ամբողջ սարսափը: Յ ժամ անընդհատ կալանավորները պարտավոր են ուսերի վրա տեղափոխել պարկերով ախաղ կամ խիբար ծովափից մինչև ժայռի դադարի:

Դա անասելի կոշմար ե:

Պարկի քաշն ե ամենաքիչը 30—40 կիլոդրամ: Փոխադրվող ավարկ խոնավ ե, ատիված են քայլել քամու հոսանքին հակառակաղը լսոնավ ե, ատիված են քայլել քամու հոսանքին հակառակաղը: Զմեռը դժբախտները սառչում են: Նրանք հարկարդարած են՝ միշտ վորսադրել ավաղով մի ծանր պարկերը մեկ ուսի վրա:

## ՅԵՐԿՈՒ ՎԱՆԴԱԿԻ ՄԻՋԻՑ

Նամակ Բուլղարիայի Ստարո Զագորյա քանտից

Յերկարատես բանտարկությունն ու սպանիչ ուժիմը մեր՝ քարեանտարկաներիս կյանքը վտանդի տակ ե դրել: Քաղցածու-քարեանտարկաների վարչությունը մեր կողմէ առաջարկությունը կատարել է առաջարկությունը մեր կողմէ:

թյան ու հիմանդրության պատճառով մահը մեղ բոլորիս սպառնում է:

Մենք բոլորս գունատ ենք, լզար, փրչոտած, քաղցից ուժապար և խոշտանդված՝ մերքերով լիք: Եղեղագալության և ինքնառպատճյան բարձաթիվ դեպքեր են տեղի ունենում:

31 քաղբանտարկյալներ ծանր հիմանդ են. նրանցից 12-ը պառկած են, 19-ը տուքերկուլյոզով են տառապում, 7-ը՝ ստամոքսի քայլայումով ու խոցերով, իսկ 3-ը՝ թոքերի բորբոքումով: Հիմանդներից շատերը տառապում են «յերկու և ավելի» հիմանդությամբ»: Ինչ վերաբերում ե մնացած, այսպես կոչված «առողջներին», նրանք բոլորը նույնպես տառապում են վոսկրաժավով:

Մեզ վոչ մի բուժողնություն ցույց չեն տալիս. հիմանդներին հիմանդանոց չեն փոխադրում: Քժշկը 20 որը մի անգամ ե մեղ մոտ հաճախում: Գ. Գանեվան 15 որժա ընթացքում չորս անգամ բւժեղ արյունահոսություն ե ունեցել, և չնայած մեր բողոքներին, նրան հիմանդանոց չեն փոխադրում: Ավելի առողջ քաղբանտարկյալներին չի թույլատրվում հիմանդներին հակել:

## «ԻՆՏԵԼԻԶԱՆՍ ՍԻՐՎԻՍԻՆ» ՎԱՅԵԼ ԴԱԺԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Անգլիայի խուզարկու վոստիկանություն)

ՆԱՄԱԿ ՍԻՆԴԱՊՈՒՐԻՑ

Յերբ ձերբակալեցին ինձ քրեշական հանցագործների հետ միասին տեղափորեցին իսուղարկումներով շրջապատված կամերաներից մեկում: Այս վամերան զբկված ե թերթ ստանալու բոլոր տեսակի իրավունքներից, իսկ հատ ու կենաց ստացվող թերթերը շղարշված են լինում հակահեղափոխական և հակախորհրդային բարբառանքներով, վորոնք ուղղված են Խորհրդային Միության և Կոմունիստական կուսակցության դեմ:

Նման ռեժիմի կերպաման նստառակին այն է, վոր բանտարկյալները կտրված լինեն արտաքին աշխարհից: Մեր հարեւան վա-

մերայում քանտարկված են 60 չինացի կոմունիստներ, վորոնց նույնպես ըրջապատել են խուղաքլրուները: Ինձ ըրջապատող քրեյականների մեջ յես թշնամանք առաջ բերի, այն բանում, վոր շահելով կալանավորների վստահությունը: Բանտարկյալներից մերը խորամանկությամբ թուղթ ու մատիստ տվեց ինձ, իսկ մյուսներն ողնում եյին հեղափոխական ընկերների հետ հաղորդակցություն ունենալու մեջ:

Այս կազին ինձ հոգեսպես թեթևացնում եր բանտում և գնալով ավելի ամրապնդվում: Չինացի հեղափոխականների դրությունը համեմատած՝ մեր կամերայի կալանավորների հետ ավելի վատթար եր, վորովհետեւ առողջապահության վոչ մի կանոն մուտք չեր դործում այդ կամերաներում, մութ ու խոնավ այդ կամերաներում վիստում են տասնյակ հազարների համնող միջառները, չին կրո՞ւնկիստների վրա գործադրվող ամենորյա ծանր աշխատանքն ու ամեն տեսակի ծաղրանքները չգերազանցված չափերի յեր հասնում: Զհանդուրժելով այս վայրագ ռեժիմը բանտի պատերի ներսում քաղբանուարկյալները թվով 60 հոգի 12-որյա սննդադրու հայտարարեցին, վորակեսի մի քանի գիրք ձեռք բերեն ու վերակացուին փոխել տան: Նրանցից շատերին հայ ու ջրով 40 որ կարցեր նպացցին, տաք կերակուր միայն 4 որը մի անդամ եյին տալիս: Հարող բանտարկյալներից մեկը, վոր մասնակցում եր գաղտնի թղթակցություններ հանձնելուն, նույնակես 40 որ կարցեր դրվեց: Նա բողոքեց՝ իր կարցերի պատերին հեղափոխական լոգունդներ դրելով: Նրան մարմնական պատճի դադարիստեցին (բաց մարմնին չոր ու գալար բամբուճի ձիպոտներով 24 հարված հասցնելով), վորովհետեւ անդիմական կուլտուրան մարմնական պատիժ թույլ և տալիս և այդ պատճեններով պարծենում է: Բանտարկյալն քիթ ու բերնի վրա պառկացնում են ցինկի վրա, ձեռք ու վոտքն ամրացնում ծնկին, կապում և հետույքը բաց անում: Անդիմական մի հրեշ բանտապահ (սինդապուրցի, 110 կիլո յեր քաշում) բամբուճի ձիպոտով դանդաղ հարվածներ և հասցնում ամեն մի հարվածից հետո ձիպոտի հետ մաշկի կտորներ պոկելով ու արյան հեղեղ առաջացնելով: 12 հարվածից հետո «հոգնած» ծառային փոխում ուրիշն են կանգ-

նեցնում, վոր խիսում և մնացած 12 հարվածը: Ծեծվողի մեջքը միաձույլ արնաշաղախ վերք և դառնում: Կեղծավորությունը կատարելության հասցնելու համար, այս տեսարանին ներկա յե լինում բժիշկը: Յերբեմն ստիպված են լինում պատիմը կրծառուկ, վորովհետեւ կալանքի լինթարկիվողը գիտակցությունը կորցնում է: «Խնտելիջենս Սէլլիսի» յերկրին վայել այս պատիմը համախ տեղական կոմունիստների նկատմամբ և կիրառվում: Այսպես պատրժվածը 15 որ անընդհատ վոչ կարողանում է նստել, վոչ ել մեջքի վրա պառկել, բրիտանական բամբուկը հիտկերյան կացնի մոտիկ աղջակիցն է:

Պետք է ամելացնել նաև, վոր Մալայան կղզիների բոլոր շին կոմունիստները, պատիմը կրելուց հետո, Գոն-Կոնդի վրայով արտաքսվում են Չինաստան: Ահա թե ինչո՞ւ Սինդապուրի անդլիական իշխանությունները նրանց իրր թե թեթև պատիմ են տալիս, վոր յեռամյա բանտարգելությունից չի անցնում, բայց արտաքսելով ու բռնի ռեպատրիացիայով ժիատորեն նրանց տալիս են չինական իշխանությունների ձեռքը, վորոնց դաժանությունները բոլորիս քաջ ծանոթ են: Այսպիսով՝ Տան-Կոնդը մի ակտիվ կոմունիստ, վոր Հեղիսակիան կղզիներում բոլորին ծանոթ ե և 1931 թ. հունիսի 22-ին դատապարտուել եր 6 ամսյա բանտարկության, արծակվեց հոկտեմբերի 1-ին (իր բանտարկության ժամկետից առաջ), և նույն տարվա նոյեմբերի վերջին չինական իշխանությունների կողմից Շանհայում նորից ձերբակալվեց: Անդլիական իշխանությունները կոմունիստներին դիտմամբ ուղարկում են չինական ռազմական բանդիտների կացնի տակ կամ գնդակահարելու:

Ի միջի այլոց նույնն է արվում նաև չինացի գործադրության վրանիորների հետ, վորոնց աշխատանքով ե ծաղկման տարիներին ստեղծվել մալայացիների կառուչուկի և անազի հարստությունը: Հենց վոր դործը կանգ և սունում, նրանց վոնդում են գերբնակեցրած ու քաղցած Չինաստան, վորտեղ նրանք ավելացնում են քաղցից մեռնողների ամբոխը:

5 մարտի, 1934 թ.

Սինդապուր: Մալայան Արշավելագի անդլիական մամուլը հայտնում է կոմունիստների մեջ քաղաքական վոստիկանության (ինտելիջանս Սեվերի) կատարած ձեռնարկությունների մասին: Բանտարկիլած են 17 չինացի հեղափոխական, վորոնցից մեկը կանոնցի մի աղջիկ ե, մեկը հնդկաչինցի հեղափոխական և, և—ի՞նչ սենսացիա—մի յելլուպացի՝ նույնիսկ Փրանսիացի: Առաջին կոմունիստն ե այդ, վոր ձերբակալված և նորին մեծության այս դադութում, վոր բանտարկությունների, բանտերի ու դատավճիռների համար և այս հոչակն ստացել:

Այսպիսով, մշտնջենավոր բեվեռային ամառվա մի չող առավոտ, յես ծանոթացա Սինդապուրի տաժանաայրի բանտին, վորի սպիտակ պատերի ներաը 1500 բանտարկյալ և տառապում: Դավադրություններ, ինտրիցիներ, խովզություններ: Խակի ել չեթավական և միայն կասկածել անդլիական որենքներով չճանաչված այս կամ այն կուսակցությանը պատկանելու մեջ (Մալայան կոմիուսակցություն), վոր Փրանսիացի կոմունիստին տարբեր կես բանտ դցեն, վորը, նա չնորհիվ Ֆրանսիայում ունեցած իր գործունեյության, ծանոթ չլինի միջազգային վոստիկանության դադանային արարքներին: Հեղափոխական քաղաքական կուսակցությունները, բանկորական արհմիությունները, գյուղացիական կազմակերպությունները, մարքսիստական տենդենց ունեցող սովորական դիշերային դասընթացները—այս բոլորն արգելված են, այս բոլորը բանտ դցելու, յերկրից արտաքսելու պատրիակներ են: Վորովհետեւ կառւչուիր տնկարանների ու անազահանքերի փայտերերի, ֆինանսիստի ու դադութային չինովնիկի համար ավելի սարսափելի մղձավանջ չկա, քան կոմունիզմը:

Եել ահա ինձ խառի դույնի տարագ հաղցրին՝ բրիտանական դադութի բանտարկյալի տարագ:

— Սպիտակ կոմունիստ ասածդ այս յերկրում հաղմազյուտ բան և՝ասաց ինձ բանտ մտածո հենց առաջին որերը միամիտու յեռանդում մի վերակացու:—Այդ անիծուած տեղացիները բունտ անելիս ուեռ հասկանալի յե: Բայց սպիտակը՝ յեվրոպա-

թին, արտոնյար ֆրանսիայի անդամը—այդ խելքից հեռու բան է:

— Դուք շատ վտանգավոր մարդ եք, մենք ձեզ հատուկ հըս-  
կողության տակ կպահենք, — լրա թերեց խուզարկուների ու  
բանտի վերակացուների խումբը: Ահա թե ի՞նչպես զիմավորե-  
ցին ինձ բանտում, ահա թե յես ի՞նչպես հենց առաջին որերից  
ծանոթացա Սինդապուրի յուրատեսակ քաղաքական ռեժիմին:  
Յերկու ռեժիմ գոյություն ուներ—մեկը քրեյսեանների համար,  
մյուսը՝ քաղանտարկյալների, վոր վոչ այլ ինչ եր, յեթե վոչ  
քրեյսեանների ռեժիմ, բայց ավելի լավ ձեւի: Արհետանոցնե-  
րում (տպարան, կաղմատուն, կոչկակարանոց և նորոգման ար-  
հետանոցներում), վորտեղ յես աշխատում եյի, 120 տեղացի  
բանտարկյալ կար (մալայացիներ, չինացիներ, հնդիկներ), վոր  
զանազան ժամկետներում՝ 1-ից մինչև 20 տարի՝ տաժանակիր աշ-  
խատանքի եյին դատավարութաճ: Դրանք գողեր, ավաղակներ,  
տանդիտներ ու մարդասովաններ եյին: Նրանց թույլատրվում եր  
իրար հետ խոսել, աղաս տեղաշարժեր կատարել, դուզարան  
գնալ, լվացվել ու մի արհետանոցից մյուսը փոխվել: Իսկ յես,  
քաղանտարկյալս իմ տեղը պետք ե մնայի, իրավունք չունեյի  
մարդու հետ խոսել, պահակի հոկողությամբ միայն կարող եյի  
տեղից տեղ փոխվել, զուգարան գնալիս բանտի վերակացուն  
պետք ե հետա լիներ: Ինձ որտիան յերեք-չորս անգամ խուզար-  
կում եյին, կամերում ամեն որ ամենամանրակրկիտ խուզարկու-  
թյուն եյին կատարում, վորի ժամանակի տակնությա եյին անում  
կամերայի բոլոր անկյունները, յերկաթե մահճակալը, ներքնակն ու  
վերքակը: Վոչ թուղթ, վոչ գրիչ, վոչ մատիտ: Բոլորը վախե-  
նում եյին, թե յես արտաքին աշխարհի, կամ բանտարկյած չի-  
նացի կոմունիստների հետ գրաւորություն անեմ, կամ թե տեղա-  
ցի մյուս բանտարկյալների կամ յելրոպացու հետ խոսեմ: Նրանք  
զրոյսագանդից վո՞ւց եյին վախենում: Մի չինացի 5 որով կար-  
ցեր զցվեց այն պատճառով, վոր ինձ մի յերկու խոսք տաց:

Բանտարկյալներից վոչ մեկը չեր կարողանում ինձ մոտ գալ:  
Յերկու մետր հեռու պետք ե լիներ: Ինձ ամենամիակերպ ամե-  
նասարսափելի աշխատանքն եյին ավել-թղթի թերթեր համրել  
ու հարյուր-հարյուր դարսել, ծրագրներ պատրաստել, գրքի թեր-

թեր կպցնել, և այս աշխատանքը ժամեր, որեր ու ամիսներ եր քաշում, այնինչ մի անդիմացի, վոր Սինգապուրի «Հայկ հասարակության» մեջ Հայունի յեր և անհաջող կեզծիքի համար բանա եր ընկել, հաջվետար եր նշանակվել, ընթերցանության, զերեւ համար բոլոր հարմարություններն ունել և սպասարկող անձնակազմի կողմից մեծ ուշադրություն եր վայելում :

ԱՀամասնիկ «Սինգապուրի տիսիկի քաղաքական ռեժիմը» :

Յես ել եյի ընդհանուրի ուշադրությունը վայելում : Որինակ իմ կամերը, վոր իր հերթին միավին եր այդ բանաւում, շարունակ յերկու ահազին կողպեքով եր կողպավում : Այդ կամերը գտնվում եր մահվան դատապարտված քրեյտիկան հանցագործների բաժանմունքում, 10 մետրի վրա այն տեղից, վորաեղ կախաղանն եր բարձրանում : Այդ 18 ամսվա մեջ յես 9 անդամ լսել եմ, թե ինչպես յերկուշարթի որերն այդ դահլիճից լսվում եր որի մեջ բարձրացող՝ կախվածի մարմնի խուլ աղմուկը : Յես լսում եյի մահվան դատապարտվածների դանդատները, անհեծքները և մահապատժից առաջ վերջին ժամին յերգվող մասյլ ու հուսահատ յերգերը : Հաջորդ առավոտյան յես տեսնում եյի նրանց ձգված ժարմիններն ու անդությ սրաբանի ծայրին գտնվող մեշտիքի մեջ պահված դլուխները : Իմպերիալիստական ջենուլեմենները շատ ուշադիր են :

Բանտի դիրեկտորը կարդաբություն արեց՝ նրանց հետ վարվել ինչպես մահվան դատապարտվածների հետ : Ուրեմն՝ գիշեր-ցերեկ հակողության տակ գտնվել, հավիտյան շրջապատված լինել պահակներով, շարունակի իր վրա հարատե հայացքներ զդալ : Իբրև դիրք՝ ոռման ու աստվածաշունչ, իբրև այցելու չափազանց հետաքրքիր խուզարկումներ, ֆրանսիական հյուսվատուսը, վոր մործում եր դատական քննչի դեր կատարել, վոր պետդի հետո Պոսիվին՝ Հնդկաչինի նահանգապետին սիսալ հաշվետվություն ուղարկեր և այդպիսով անորինական աքսոր նախապատրաստեր և, վերջապես, անդիմացի անխուսակելի պատյոր՝ թարմ, ծիծաղկուտ ու կեղծավոր, վոր, իմիջի այլոց, դադարեց ինձ այցելել այն որից, յերբ խմացավ, վոր յես աթեխտ եմ : Յերեք ամիսը մի անգամ ինձ մի թերթի թուղթ, զըիչ ու կես

Ժամի ժամանակ ելին տալիս, վոր ընտանիքիս նամակ գրեմ, և  
յերեք ամիսը մի անդամ ինձ տալիս ելին «ազգականներից» յեկան-  
նամաւելը, վոր կես տարի առաջ եր գրված մինում:

4 մարտի 1934թ.

Լա Դիֆանսից

## ԳՈՄԻՆԴԱՆՅԱՆ ԶԻՆԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՒՄ Ե ԿԱՏԱՐԻ ՍՊԻԾԱԿ ՏԵՌՈՐԸ

(Մոպրի կենտկոմի ազիտրաժնի տեղեկատու)

Զինատանի բանտերում տեղի ունեցող հաճախակի քաղցր վրալիցներել և վողջ աշխարհի հասարակայնությանը: Մենք այժմ մի շարք տեղեկություննեց ենք առաջել բանտերում տիրող դրության մասին: Պեյզինի բանտում այժմս 48 քաղցրանտարկյալ կա, բայց ինան-կու-Յե-Դանի և Տան-Լառ-Զեռից, վոր արդեն մահվան են դատավարությած և չուտով կհանձնին դահիճների ձեռքը: Գոյություն ունեցող հատուկ դրության հիման վրա բանտարկյալները չղթայակարգված են: Սնունդը վատ և անբավարար: Բանտարկյալներին վայրագ տանջանքների յին յենթարկում: Յեկ բանտարկյալներն այդ տանջանքներից չատ անդամ մահանում են:

### I. Նույնիսկ յերեխաներ ել են ձերքակալված

Որինակ՝ Տյանցինի կանանց բանտում: Տյանցինի բուրժուական «Ի Սեպառն» թերթը հայտարարում ե.

«Տյանցինի կանանց բաժնի 3-րդ բաժանմունքում շատ յերեխաներ կան, վորոնց թվում նաև նորածիններ: Չափից դուրս ծանր և ու ցավալի տեսնել այդ պայմաններում ապրող յերեխաններին», (Խոպի արդարադատության գիտական հանձնաժողովի հաշվետությունից):

«Տա-կոնդ-Բառ»-ի տեղեկությունները վկայում են, վոր Տյանցինի 3-րդ բանտում 18000 բանտարկյալ կա, վոր յերեք անդամ գերեղանցում ե նորման:

2. Քաղաքանուարկյալները ստիպված են բռնի  
աշխատանք կատարել

Համաձայն Զինաստանի արդարդատության մինիստրության նորերս հրապարակած հրամանի, քաղաքանուարկյալները պարտավոր են բռնի աշխատանք կատարել: Նրանց գլխավորակնես ողբազուծուած են յերկաթզգի և ճանապարհների շինարարության գործում:

3. Պոլիցիայի տանջանքները

Քաղաքանուարկյալների հանդեպ պարտի խոչորակության մեթոդներ են. գործադրվում:

Այժմս Շանինայե հասարակության ուշադրությունը դրավողը հետեւյալ վաստերն են՝ վորմ ծառայող՝ Տղի-Յան-Զեյը, սկսակ տեղեկությունների հիման վրա ձերբակարիկել ե, իրու գողության մեջ մեղադրվող: Դատարանն ստիպված է յեղել նրան արդարացնել: Սակայն համաձայն դատարանում նրան 17 անգամ տանջանքի, ելեկտրականության միջոցով նրան 17 անգամ տանջանքի: Ենթադրել: Գործադրած տանջանքի ձեւերից մեկն ել այն ե, վոր նրան ստիպել են այնքան աղաջուր խմել, վոր նա նույն խոկ գիտակցությունը կորցրել ե: Տանջանքը նույնությամբ շարունակվել ե, յերբ նաև դիտակցության ե յեկել: Ի վերջո, նա դարձել ե հաշմանդամ: Պետք ե նշել, վոր այս ձեւի տանջանքները քաղաքանուարկյալների հանդեպ ամեն որ են գործադրվում: Շանհայի խոտերնացիոնալ անտուեմենտի սղովիցիալ պարչությունը յուրաքանչյուր տմիս տասնյակ բանվորներ ու գյուղացիներ ե հանձնում չինական իշխանության ձեռքը:

4. Արյունոտ բաղնիսը և գնդակակարուքյունները

Կամտոյից Ռեյտերի գործակալությունը նեղեկացնում ե՝ «Ա-ըդ կվանտանի դիմիրդիայի շամարում այսոր 24 կոմունիստ գնդակահարվեց, վորոնց թվում ե 2 կին: Մյուս 20 հոգին հանձնված են զինվորական առոյանին:

«Ի Սեպտո»-ի նոր հաղորդագրության համաձայն (Տյանցդինում), ս. թ. ապրիլին գորքեր են ուղակրվել Յառ-Զին պետա-

կան հարկերը վճարելուց հրաժարվող գյուղացիների դեմ : 10.000 գյուղացի միացել են «Կարմիր Պիկ» դրույտ տակ՝ պաշտպանվելու համար : Այլելի քան 70 գյուղացի սպանվել ու վիրավորվել են, այսինքն են 8 խոչոր գյուղեր :

Մանջուրիայից «Զայնա-Թայմա» լրագիրը հաղորդում և «Ֆինդրիեն գաղութում, Ուլիավում և Անդիավում, ուր խիստ կռիվներ են տեղի ունեցել ճապոնական բանակի ու կամավորների միջև, ճապոնացիները հարյուրավոր գյուղացիներ են զնդակարել, վորոնք պատերազմի հետ վոչ մի առնչություն չեն ունեցել» :

### 5. 20.000 գնդակահարված գյուղացիներ

«Ի Սեպառ»-ն պնդում է, վոր Սանսիենում, ուր գյուղացիք զիմադրություն են ցույց տվել բրինձի լավագույն հողամասերն իրենց բոնի ուժով գրավող ճապոնացիներին : Այս պատճառով ճապոնական խմալերավիճաները գյուղացիների դեմ ոմբակիրներ են ուղարկել, և 20.000-ից ավելի դյուզացի, վորոնց մեջ նաև յերեխաներ ու կանայք, հոգս են ցնդել :

### Չինասահնի ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՊԱՅԻԱՐԸ<sup>1</sup> Հացադրություն ալիք

Մենք սրբեն հայտնելի ենք հայկահեղափոխական Դամինականի բանակերում տեղի ունեցող հացադրությունի մասին : Այժմ նոր տեղեկություններ ենք ստացել Չինաստանի բանակերում տեղի ունեցող կատարյալ հացադրուների մասին : Պեյլինի, Տյանցգինի, Տյայուանի և այլ քաղաքների քաղաքանտարկյալները բանտային խիստ ուժիմի դեմ անողոք պայքար են մղում իրենց տրամադրության տակ ունեցած միակ զենքով՝ հացադրությունի:

«Գա-կուն-բառ» լրագրի հաղորդագրության համաձայն, Պեյլինի բանտի քաղաքանտարկյալները հացադրու հայտարելով հետեյալ բնորոշ պահանջներն են առաջադրել՝

1. Արձակել ձեռքի շղթաները :
2. Յերաշխիք տալ, վոր հետադայում ձեռքի շղթաներ չեն չործադրվելու :

3. Բարեկալել սնունդը և առհասարակ բոլոր պայմանները՝  
4. Աղբեկել բանտի հսկելու բանտաբեկյալներին ծեծելը:

Ի պատասխան այս պահանջների, բանտային վարչությունը ցինիկ պարզությամբ հայտարարել է, վոր ձեռքի շղթաները չեն արձակվելու, քանի վոր վաստարանի վորոշամբ մահվան դատապարտվածների համար ձեռքի շղթաները պարտադիր են: Ինչ վեց բարերում և սննդի բարեկալմանը, ապա այն միանդամայն բավարար է. մյուս պահանջներն անհնարին և կատարել: Նույն լրագիրը հայտարարում է, վոր Պետրինի քաղաքանարկյալների այս հացադուլը 2-րդն է: Առաջին հացադուլը վիժեց, վորովհետեւ բուլոր բանտարկյալները չեցին մասնակցում: Այս յերկու հացադուլի զեկավարները՝ Վահ-Վի-Կան, Տան-Լառ-Շեռն մահվան են դատապարտված: Նույն թերթի հետազատեղեկությունների համաձայն, բանտային վարչությունը բոլոր միջոցները դործադրում է, վոր քաղաքանարկյալների մարտնչող տրամադրությունները ճնշի: Այսպես, որինապէ՝ նա, իմիջի այլոց բանտարկյալների պահանջը ձեւականորեն կատարում է, վոր կատարած դիջողությունները հետազայում փոխի:

Բնորոշ և և այն, վոր վարչությունը բոլոր միջոցները դործադրում եւ թաղցնելու քաղաքանարկյալների ցուցաբերած պայքարի բոլոր վաստեցը:

Չինաստանի բուրժուական մամուլն այս տեսակետից ամեն կերպ ոժանդակում է բանտային վարչությանը... Հենց այս պատճառով ել մոտավոր գաղափար կարելի յեւ ունենալ Չինաստանի բանտերում տեղի ունեցող հացադուլի նոր ալիքների չափի մասին: Այնուամենայնիվ, քաղաքանարկյալները Գոմինդանի պարիսպներից դուրս շարունակում են իրենց համառ պայքարը բանտային ռեժիմի դեմ: Նրանք վատահ են աշխատավորության ինտերնացիոնալ համերաշխության վրա, վորի չնորհիվ մի շարք հաղթանակներ են հաջողվել:

## ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԺԱՄԸ ՀԵՌՈՒ ԶԵ

Լեռբենի բանտից ազատված ավատրիական մի բանվոր, նաև մակ և ուղարկել ժնելում հրատարակվող «Տրավայ» թերթի խըմ-

բագրության : Նամակում նու նկարագրում եւ Ավստրիայի մարտերի դեկալար Կոլոման Վալլշի վերջին ժամերը :

— Լեռնինի նահանգական բանալը, —գրում եւ բանվորը, — դանում եւ նախկին վանքի շենքում : Հաշվել եյին, վոր այդ բանալը 100 կալանավոր կարող եւ տանել : Կիրակի, մինտրվարի 18-ին, մեր կալանավորներիս թիվը 400-ից ավելի յեր :

Ցերմալը, ժամի չորսին, քրեյսեկան կալանավորներից մեկը, մեր խցի պատը ծեծեց և շնչաց, թե Վալլշին ու իր կնոջը միասին բանու են քերել : Ժամը 2-ից 20 բողոք անց, զինվորական դատարանի նիստն սկսվեց : Բնորոշ ու հետեւյալ փաստը . յերեկոյան ժամի 7-ին վանցվել Դոլֆուան անձամբ հեռախոսեց ուսումնական դատարանի նախադահ Մարինիշին և բացատրություն պահանջեց, թե արդարադատությունն ինչու այդքան դանդադ եւ գործում : Մինչ այդ՝ բանում մեծ հոգում առաջացավ : Միմիայն դատապարտյալն եր, վոր իրեն հանդիսաւ եր պահում : Զեսկան ժամին լրանալուց հետո նրան մոտեցան դատարանի նախադահն ու անդամները և հայտարարեցին, թե դատավճիռը պետք է ի կատար ածալի : Նրա կինն սկսեց հեկեկալ : Դրան վերջ տալու համար, բանտի բժիշկը խորոնֆորմով թրջված մի թաշկինակ տվեց Վալլիշին, և Վալլիշը հարկադրված յեղափ անձամբ քննեցնել եր ընկերուհուն : Այսուհետեւ նա խնդրեց, վոր իրեն հնարավորություն տան հրաժեշտ տալու դռնե մի քանի բանվորների : Նու սեղմեց նրանց ձեռքը և ասաց՝

— Միշտ մնացեք աղնիվ պրոլետարներ : Մեր հաղթանակի ժամը հեռու չե :

Ժամը 11-ից անց 30 բոպե, դահիճ Շպիցերն ու իր յերկու ողնականները Վալլիշի խուցը մտան : Այդ բոպեյին Վալլիշը քաղաքավարությամբ հրաժարվում եր կատարել քահանայի առաջարկը՝ կարգադարձին աղոթքը : Շպիցերը բղամից Վալլիշի վրա :

— Դե՛, դուրս յեկեք այստեղից :

— Դուք անշուշտ կարող եք ինձ սպանել, —պատասխանեց նրան Վալլիշն անմիջում :

Դահիճի յերկու ողնականները թևանցուկ տարան նրան : Նրանց հետեւյալ գնում եյին դատարանի նախադահն ու անդամներ :

բը և դահիճը՝ մե պլաշչով, ցիլինդրով ու սպիտակ ձեռնոցներով։ Նրանց հետեւամ եր հետաքրքրվողների ամբոխը՝ սպաններ։ Ժանդարմաններ և քաղաքացիակիան շորերով ինչ-վոր մարդկին։ Խուզերի վերածված 8 սենյակի պատուհանները դեպի բակն եցին նայում։ Դրանք բանառի պատուհաններ չեն, այլ առվորսական լուսամուտներ, միայն վանդակակապատ։ Մենք կարողացամք տեսնել մահապատճի բոլոր նախապատրաստությունները։

Քրեպական քանտարկյալները կախաղանի համար փոսեր վորեցին և մի փոքրիկ սանդուխք դրին։ Իշխանության որդաններն սովորված յեղան քրեյական հանցաղործներին աշխատեցնել, վորովհետեւ ամբողջ քաղաքում չգտնվեց մի հյուսն, միոր համաձայն վեր այդ դործը կատարել։ Վալիչն առաջ եր զնում գլուխը բարձը պահած։ Մենք վարժվել ենք նրան այդպես տեսնել բանվորական ժողովներում, յերբ նա դիմում եր դեպի ամբողուն Նրան կանգնեցրին սյան տակ՝ մեջքը դեպի սյունը դարձած։ Դաշիճը սանդուխքով մեր բարձրացավ և հանգույցը զցեց Վալիչի վիզը։ Դահճի յերկու ոգնականները լունեցին Վալիչը ռւսերը և մարմինը հուալ տոլին դեպի ցած։ Վալիչը ժամանակի չգտավ արտասահմանելու «աղատություն» բառի վերջին վանկը։ Մի քանի վայրկյանից հետո դահճը ցած իջալ, դիմարկը վերցրեց և առաջ.

— Դատավճիռն իւ կատար եւ ածոված :

Բակում լոռվթյուն տիրեց։ Հանկարծ խցերից մեկը ալատու-  
հանիս մի կառանալոր բաղականչեց՝

## — Մարդասապաններ :

Յերկու ժամ հետո մեր հերոս առաջնորդի դիմոկը կախաղա-  
նից իջնեցին — որին գաղաղն ու դերեղմանոց տարան :

ՅԵՐԵԿԱՆԵՐԸ ԱՎԱՏՐԻՍԿԱՆ ԹԱՇԻԶՄԻ  
ՏԵՌՈՐԻ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՏԱԿ

Գաշխատական դիկտատորայի տեսողն իր քոլոր գամանություններով ուղղված է նաև յերեխաների ու պատանեկության դեմ։ Տեսողը քոլոր տեսակի ձևերն ընդունում է՝ միսած սովոր ու

յերեխաների խղճի վրա բոնանալուց, ընդհուպ մինչեւ ամենաղաժաժան ծեծերն ու սպանությունները։ Փետրվարյան կոխվների ժամանակ Ավատրիայում յերեխաների դեմ յեղած բացարձակ տեսորն իր դադարթնակետին հասավ։ Սիստեմատիկ կերպով գործադրվող տնտեսակիցն առաջ կատարված է բանական տեսորն ու խղճի բոնադատումն առանձնապես ուժեղացել են վետրվարյան կոխվներից հետո, և քրիստոնյա-ֆաշիստականորեն «յերեխասարդությանը դաստիարակելու» ձևերից մեկն եւ հանդիսանում։

Շատ յերեխաներ են նախամտածված կերպով սպանվել կառավարական զորքերի ու Հայմերի բանդաների ձեռքով։ Վիեննայի տակի յեղած կոխվներում սպանվել եւ 12 տարեկան կորունա Ռինկլերը, իսկ նրա ընկերուհի Շարլոտան վիրավորվել եւ Կարմիր բազեների Ֆլորիդադորֆի կազմակերպության անդամներից մի տղայի, վոր իր պոլտիկելի մեջ փամփուշտներ ու քարեր ուներ, վոստիկանները բռնել եւ այնքան են ծեծել, վոր գիտակցությունը կորցրել ե։ Սակայն միանդամայն հասկանալի պատճառներով՝ դժվար ե ճշգրիտ տեղեկություններ ստանալ յերեխաների դեմ յեղած անհատական տեսորի գեղագերի մասին։ Ավելի շուտ՝ յերեխաների դեմ յեղած տեսորի մասսայական դեպքեր են հայտնի։

Վիեննայում՝ Կայներմյուլեյում՝ Հետեխոֆի համար տեղի ունեցած կոխվներում կանացը ու յերեխաները յերեք որ անընդհատ Դոլֆուսի թնդանոթների, ականանետների, հրանետների ու գնդացիրների կրածկի տակ ելին։ Կայներմյուլենի քահանան կառավարական ֆաշիստական ջոկատների հրամանատարից պահանձեց ժամանակակիրածես կրակը դադարեցնել, այն պայմանով, վոր կանանց ու յերեխաներին ժամանակավորապես մի ապահով տեղ փոխադրեն։ Հրամանատարը մերժեց, և յերեխաները, մինչև կոխվները վերջանալը, տոխոված ելին մնալ գնդակոծությունից քանդված Հետխոփում, կամ մարտչել կառավարական զորքերի արգելիք կրակի տակ։

Շոեյներում (Քրին Ավստրիա)՝ Եյնալեյտենի մողոցում՝ կանացը ու յերեխաներն ստիւլված ելին յերկու ցերեկ ու մի գիշեր մնար գնդակոծությունից քարուքանդ յեղած բանվորական անսակների նկուղներում՝ 15 սանտիմետրանոց հաղթիցների ու

ականանետների, հրանետների, գնդացիքների կրակի տակ: Եյու-  
լեյտենի վողոցը կառավարական զորքերը պաշարել եյին, և յե-  
րեխաները վոչ մի տեղ չեյին կարողանում թարկնվել:

Շեեյերմարկում դաշնակից բանակի մի սպա յերեխաներին  
ու պատանիներին ստիպում եր կառավարական հարձակվող զոր-  
քերի առջևելց դնալ, վորովեսդի այս ծածկույթի տակ գրոհեր  
զուցրունդականների ուիրքերը:

Համարձակ մի կնոջ հաջողվել եր յերեխաներին ժամանակին  
ապահով տեղ տանել: Կանանց ու յերեխաների գեմ կառավարա-  
կան քրիստոնեյական զորքերի ունեցած կռիվներից հսկայական  
թվով այսպիսի փաստեր կարելի յե բերել:

Կռիվներից հետո տնտեսական տեռորը ծավալվեց: Վեննա-  
յի կռոմունալ ու պետական հյուսարկներից հազարավոր սոցիալ-  
դեմոկրատ բանվորներ ու ծառայողներ արտաքսվեցին, իսկ նրանց  
կին ու յերեխաները սովոր մատնվեցին: Հաղարավոր շուցրունդա-  
կան, բանտերն ու համակենտրոնացման ճամբարներ ընկան, իսկ  
նրանց կին ու յերեխաները անձար կարիքի ձեռքը հանձնվեցին:

Կարմիր Ոգնությունն իսկույն ձեռնամուխ յեղապի միջազգա-  
յին համերաշխություն՝ կաղմակերպելու դործին: Առաջին ոգնու-  
թյունը կաղմակերպվեց, առաջին արցունքները ցամաքեցին,  
բայց փետրվարյան կռիվների հազարավոր զոհերին յերկարատև  
ոգնություն եր հարկավոր: Ֆրանսիայի, Հոլանդիայի, Զվիդե-  
րիայի ու Չեխոսլովակիայի աշխատավորությունը իր պատրաս-  
տականությունը հայտնեց՝ ընդունելու լնկած ու բանտարկված  
շուցրունդականների յերեխաներին: Դեպի մերձական ունեցած  
քրիստոնեյական սիրուց դրդված՝ ֆաշիստական կառավարու-  
թյունն արգելեց զոհերի յերեխաների գնալը: Դորֆուսի մոտ  
նրանք պետք ե քաղցելին ու «հայրենական վուով» դաստիարակ-  
վելին: Ստիպված յեղանք յերեխաներին անլեզաւ կերպով անց-  
կացնել Չեխոսլովակիայի սահմանը, և այժմ նրանցից 120 հոգի  
հանդաստանում են Խորհրդային Միության մեջ՝ Դրիմում:

Շուլինի կառավարության որով խղճի վրա բռնանալն Ավրո-  
մարիայում շարունակում է անասելի ուժով զարդանալ: Յերեխա-  
ներին ու պատանիներին ստիպում են կրօնական արարողու-

Թյուններ կատարել։ Դպրոցն ամբողջովին հոգևորականության ձեռքն է հանձնված։ Դպրոցներում այժմ «պաշտպանության գործի ուսուցում» ել է մացված, վորովհետեւ Փաշիզմը, պատերազմն ու կրթականությունն անքաժան դաշնակիցներ են։

Համերաշխության գործի մեջ ՄՈՊ-ը բոլոր հակաֆաշտաներին միացնում է : Միջազգային մանկական շաբաթն իր մոռլրականներին նորից և պայքարի կոչ անում՝ հանուն ընկած, սպանված ու բանտարկված հակաֆաշտաների յերեխաների ողնության :

ՎՅԱՏԿԱ. ՔԱՂԱՔԻ № 1 ԴՐՈՑԻՆ

Թանկարգին ընկեր մոպրավաններ.

Զեր նամակը մենք ստացանք և ծանոթացրինք մեր կազմակերպություններին։ Այդ նամակին ամենուրեք վոգեորություն առաջ բերեց, մի հանդամանք, վոր ապացուցում և ամբողջ աշխարհի աշխատավորության սերտ կազը, մանավանդ կազիտավորական լծից ազատագրված՝ Խորհրդային Միության աշխատավորների սերտ կազը՝ կազիտավորական յերկրներում շահագործվոյ իրենց յեղայիների հետ։

Ավատրիայում Փաշխտական տերրորն անզուսպ մոլեգնում է: Փետրվարյան ազգատամբության մարտիկներն ու հակաֆաշխտները մինչև որս ընդհանուր առմամբ 1400 տարի տաժանակի բանտի յեն դատապարտված: Ողոսոսով 1-ից առաջ ամբողջ Ավատրիայում հաղարավոր բանվորներ են բանտարկվել:

Հուլիսի 15-ին նորից յերեք բանվոր գնդակառարկեցին,  
վորովհետեւ ֆաշիստական դիկտատուրայի դեմ ցույց ելին արել:  
Հուլիսի 24-ին մահապատճի յննթարեկվեց յերիտարարդ մի բան-  
վոր՝ Յոսիֆ Հերալը: Ավտորիտական բուրժուազիայի, «Փրկչի»՝  
միութենական կանցլեր Դոլֆուսի վերջին «հերոսական» սիրա-  
կործություն եր աթէ, վորը 24 ժամից հետո ինքն ել կապիտա-  
լիստների-նացիոնալ-սոցիալիստների լիազորած խմբակի գնդա-  
կով գնաց, այն կապիտալիստ-նացիոնալ-սոցիալիստների, վոր  
Դոլֆուսի քաղաքականությունից դժողով ելին: Այս սպանությու-  
նըն ել եղածագործման բանկորներին կատաղի ինքնաքննադա-

տասստան անելու համար : Դաշտային, զինվորական ու արագացված դատարաններ են ստեղծվել . նորից մահվան պատիժ ե մոցվել, բուրժուազիայի զինյալ բանտերն ամեն որ նորանոր ու մահաբեր հրանտիններ են ստանում : Բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում վայրագ ուժիմ ե թաղավորում : Բանտարկված հակաֆաշխտները ծեծի ու տանջանքը յին յենթարկվամ : Բելեբատորփի համակենտրոնացման ճամբարում, վատորակ կերտիրի պատճառով նորերս 200 կամեջ արած բանվոր են հիվանդացել :

Բայց այս բոլոր հալածանքները չեն կարողանում ընկճել բանվորների մարտական վողին : Ավտորիայի կարմիր Ողնությունը շարունակ առաջ և դնում :

Զնայած ամենախիստ անեղալության՝ մեր կենարոնական տաղակիր որգան՝ «Տրիբունալ»-ը 25.000 որինակով ե լույս տեսնում, վոր իսկույն խլխլում են : Բոլոր ակտուալ անցքերի կապակցությամբ մենք մեծ թվով թուուցիկներ ենք բաց թողնում : Ողոստոսի մեջի համար 30.000 որինակից մենք մե կոչ լույս ընծայեցինք :

Վիեննայի մեր կազմակերպությունն իր «Վ. · Տրիբունալ» տըպագիր որդանը 10.000 որինակից ե լույս ընծայում : Բացի այդ, շատ տեղելում ու շրջաններում իրենց սեփական թերթերն են լույս տեսնում :

Շնորհիվ միջազգային պրոլետարիատի, մանավանդ Խորհրդագյին Միության պրոլետարիատի հակայական համերաշխության, և Ավտորիայի աշխատավորների կողմից ողնություն տալու պատրաստակամության, Ավտորիայի կարմիր Ողնությունը մինչև որս կարողացել ե բանտարկյալներին ու նրանց ընտանիքներին ողնելու, վտարանդիների յերեխաններին արտասահման ուղարկելու, համար նրանց ոժանդակերու և իրավաբանական ողնության նպատակով ավելի քան 400.000 շիլինգ տալ : Կարմիր Ողնությունը մեղանում շատ մասսայական է : Նա մասսաներին պայքարի յե զարմանչում ընդդեմ Փաշխատական տեսութիւն, հանուն փետրվարյան կոխիների բոլոր մասնակիցներին ու հակաֆաշխտներին բանտերից ու կոնցենտրացիոն լագերներից

ամենի ջապես աղբատելու, հանուն բանվոր մարտիկների մասսայական պաշտպանության: Կարմիր Ոզնության դեկալարությամբ, հանուն այս պահանջների, մի չարք հարվածային ցույցեր են կազմակերպվել:

Ներկայումս մենք գլխավորապես աշխատում ենք համերաշխության գործում միասնություն ստեղծել և կարմիր Ոզնությունը գարձնել ոգնության, համերաշխության և Ավտորիայի բոլոր աշխատավորության միասնական մի կազմակերպություն:

Մեր լոգունդն ե՝ «ամբողջ աշխարհի բոլոր աշխատավորության միասնական համերաշխություն»: Այս ասպարիզում մենք արդեն առաջին արդյունքներն ունենք: Սոցգենմոկրատները, անկուսակցականները, կոմունիստները, շուցըունդականները, ազատարանմիտությունների անդամներն ու սպորտսմենները մըսնում են կարմիր Ոզնության մեջ և այսուեղ ակտիվ աշխատում:

Վերին Ավտորիայում սոցիալիստ հեղափոխականների Աղդային կոմիտեն մտել ե կարմիր Ոզնության մեջ և մեղ հետ միասին մի կոչ է հրատարակել: Մեր պայքարը դժվարին և ուղղությունը չառ ե պահանջում:

Համենայն դեպս մենք չենք իասկածում, վոր պլրոլետար դասակարգը Փաշխատական տեսողի դեմ հաղթանակ կտանի, և այս բանին հաստատ հավատալով՝ մենք պայքարում ու աշխատում ենք՝ հանձին Խորհրդային Միության սոցիալիզմ կառուցող բանվորների՝ մեր աչքի առաջ ունենալով որինակ և խըթան:

Կեցցե՛ աշխատավորության միջազգային համերաշխությունը:

Կեցցե՛ Խորհրդային Միությունը՝ բոլոր ճնշվածների հայրենիքը:

Կեցցե՛ ՄՈՊՐ-ը:

Ավտորիայի Կարմիր Ոզնություն

Ոգոսոսոս, 1934 թ.

ՀԱՐԱՎՈՒՄԱՎԻԱՅԻ ՌԱԶՄԱ-ՖԱԼԻՍԱԿԱՆ  
ԴԻԿԱՅԱԾՈՒՐԱՅԻ ԱՐՅՈՒՆՈՑ ՏԵՇՈՐԻ 6 ՏԱՐԻՆ

### (Նամակ Հարավսալպիայից)

Հինգ տարի յեւ, ինչ բանվորների, գյուղացիների ու ճնշված աղջությունների դեմ ուղղված մեծ Սերբիայի բուրժուազիայի ու իր ռազմաֆաշիստական կառավարության տեսորը կատալլ չափերի յեւ համարմ : Մեծ Սերբիայի բուրժուազիան սպիտակ տեսորը պատերազմի վերջերից ու Հարավսլավիա ստեղծվելու որից (համաձայն Վերսալի դաշնագրի) արդեն սկսել է կատարել : Բայց յերբեք տեսորն այնքան վայրագ չի յեղել և այդպիսի չափերի չի հասել, ինչպես այժմ :

Հարավսլավիայի կոմկուսակցության լավագույն առաջնորդ-ներն ու մարտիկները, ինչպես և բազմաթիվ հեղափոխականներն, գյուղացիները ու նացիոնալ-հեղափոխականներ սպանվել են վոստիկանական բանտերում կամ ուղղակի վողոցներում։ Զոհերի մեծ մասը մահից առաջ ամենահրեշտակոր տան-ջանքների յե յենթարկվել՝ բերաններից ցուցմունքներ դուրս քա-շելու համար։ Այսպես, ընկ. ընկ. Զորա Դյակովիչը՝ մետաղա-գործ բանվոր և Հարավսլավիայի կոմկուսակցության առաջնորդ ՎՈՒԿԸ, Հարավսլավիայի կոմկուսակցության ԿԿ անդամ, ԳԵ-ԶԻՄՈՎԻՉԸ՝ Հարավսլավիայի Կարմիր Ոգնության քարտուղար, Հարավսլավիայի կոմյերիտմիության վեց քարտուղար (Միջին, Որեշին, Շատուկոն, Աղան, Մարգանովիչն ու Դորելյակիլը) և ուրիշ շատերը նույն զաղիր մեթոդներով են սպանվել։

Հաղարավոր հեղափոխական մարտիկներ Հարավսլավիայի  
բանտերում անլուր տանջանքների յեն յենթարկվում։ Հարավ-  
սլավիայի վոստիկանական բանտերի վայրագությունները գերա-  
զանցել են միջնադարի ինկվիզիցիայի բոլոր սարսափները։ Զո-  
հերը յերկար ու ձիգ որեր սաղիտական տանջանքների յեն յեն-  
թարկվում։ Մենք ուղում ենք այստեղ միայն մի քանի որինակ  
բերել, վոր տանջանքների այդ բազմաթիվ դեպքերից ենք վերց-  
րել։ Ընկ. Մարդանովիչ Զադրերի վոստիկանական բանտում  
20 ոք տանջանքի յենթարկվեց։ Նրա մարմինը վերքերով ծածկ-

վել եր, մաշկը շատ տեղ դուզու կախ եր ընկել, նրա ատամնեցը ջարդել ու թեր կստրել ելին: Համոզվելով, վոր նրանից բան չի պոկլիլ՝ Փաշխաները նրան վերջ են տվել: Բնկ. Պետկո Մելչէքը Բեղդրադի վոստիկանական բանտում 50 դիշեր տանջանքի ժննթարկվեց: Զագրերի վոստիկանապետ Բեղդիկովիչն անձամբ տանջել ե քաղրանտարկյալ կանանց շատերին, վորոնց մեջ նաև կիսակենդան բանվորուհի Կորդիչին, վոր թոքախտավոր հիվանդների սանտորիալիցից եր բանտ բերվել: Տանջանքների յենթարկված զոհերից վոմանք խելքները թոցրին, նրանցից շատերն ամբողջ կյանքում հաշմանդամ դարձան: Խրվատացի աղդայնականներից մի քանիսը տանջանքների ժամանակ ամորձատվեցին:

Տեղ չինելու պատճառով մենք հնարավորություն չունենք այս բոլոր վայրագությունները նկարագրել. որինակ՝ մարմնի մասերի (կողերի, վոտքերի, ձեռքերի) կոտրատելը, վոտքերի թաթերն այրելը, աչքեր հանելն ու այլ խոշտանդումները: Բայց ստորև բերած մեր ամենաթերի ու սեղմ վիճակագրությունն ամենայն հստակությամբ պատկերում ե մեծ Սերբիայի բուրժուակայի սպիտակ տեսողի բոլոր սարսափները:

Այսպես՝ ուսմղա-ֆաշխատական դիկտատուրայի 4 տարվա ընթացքում (մինչև 1933 թ. սեպտեմբերի վերջը) Հարավսլավիայում, ըստ մեր ունեցած տեղեկությունների, դիկտատուրական վարձիանների ձեռքով սպանվել են 328 քաղաքանարկյալ, 3270 մարդ տանջանքների հետևանքով ծանր վերքեր են ստացել: Քաղաքական հանցագործությունների համար 30.000 մարդ երանտարկված, վորոնցից 9.000-ը վոստիկանական բանտերում զանազան տանջանքների յեն յենթարկվել:

Թաշխտական դատարանները Փաշխատական վոստիկանությունից յետ չեն մնում: Բնդհանուր առմամբ այդ ժամանակամիջոցում 33 մահվան վճիռ ե յեղել, 7 ցմահ բանտարկության դատավճիռ. և բազմաթիվ այլ դատավճիռներ՝ ընդհանուր առմամբ 4940 տարվա տաժանակիր աշխատանքի վճիռ.

Քաղաքանարկյալները Հարավսլավիայի բերներերան լցված քանտերում յեղքայրական ողնություն են սպասում և հույսները

ԴՐԵԼ են Հարավսլավիայի ու միջազգային բանվոր դասակարգեցամերաշխ պայքարի վրա:

ՊԱՅՔԱՐ ՀԱՐԱՎՍԼԱՎԻԱՅՈՒՄ ԱՄՆԻՍՏԻԱ  
ԶԵՌԻ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

(Նախկին քաղանտարկոյալի նամակը)

ԴԱՀԻՃՆԵՐԻ ՃԱՆԿԵՐՈՒԽ

(Առաջին նամակը)

Անցյալ տարի Միջ. Միտրովիցում (Հարավսլավիա) տեղի ունեցավ 200 քաղբանտարկոյալների սննդադրութ: Այս գործադրութեա քաղցողների թվով, թե քաղբանտարկոյալների տոկունությամբ և թե ուսումաժամանական դիկտատուրայի ձեռք առած ուսումնական միջոցներով գերազանցում ե այն ամենը, ինչ մինչեւ այսոր այդ ասպարիզում տեղի յեւ ունեցել:

Հարավսլավիայի բանտերի քաղբանտարկոյալների սննդադրութ սովորական յերեսութեա: Սննդադրութ կատակ բան չի, մահավանդ Հարավսլավիայի բանտերում: Այս նսոմակովը յես ուզում եմ սլատմել, թե ուսումաժամանական դիկտատուրայի դահիճներն ի՞նչպես են տանջում քաղցող քաղբանտարկոյալներին:

Ստորև բերված փաստերը յես իմ անձնական կյանքից ու ապրումներից եմ վերցնում, քանի վոր յես, իբրև նախկին քաղբանտարկոյալ, քաղմիցս ստիպված եմ յեղել քաղցել Հարավսլավիայի բանտերում, վորտեղ 12 տարի անընդհատ յեղել եմ:

Ամեն մի սննդադրութ քաղբանտարկոյալների մի դիմադրություն ե ուսումաժամանական դիկտատուրայի դահիճներին: Այս բանը Փաշխտները շատ բավ գիտեն, ուստի և ամենայն խստությամբ աշխատում են դիմադրության մաղաչափ փորձ անդամ խեղել: Բանտի վարչությունը յերբեմն այնպես ե ցույց տալիս, թե բո-

զորովին սառն աչքով ե նայում սննդաղուլին, ասես թե ամեն բան կարգին ե, և առանձին վոչինչ չի պատահէել: Այս բանն այն ժամանակ ե լինում, յերբ քաղցողները քիչ են լինում, և յերբ հասարակական կարծիքը սննդաղուլի մասին վոչինչ չի խմանում:

Իմ միտն ե ընկնում 1927 թ. Միջ. Միտրովիցում տեղի ունեցած սննդաղուլը: Մենք 10 քաղբանտարկյալ ենք: Մենք արդարադատության մինիստրությանն ուղղած մի հուշագիր հանձնեցինք բանտարկետին, վորի մեջ ցույց տվինք բանտի մեր կյանքըն ու մեր պահանջները դրինք: Բանտարկետը հուշագիրն ընդունեց, հեղնանքով թեթեակի ծիծաղեց ու հետո, կամենալով մեղ վախեցնել, բղամեց.

— Յես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ ե նշանակում իմ բանտում բունստ անել: Այնուհետեւ մեղնից բոլոր իրերը (բացի փայտե գդալից ու սրբիչից) խլեցին և կարցեր դրին: Բանտի վարչությունից մեղ մոտ յերեք որ վոչ-վոք չեկալ: Բայց մամուլի մեջ մեր սննդաղուլի մասին առաջին հոդվածներն արդեն լույս տեսան: Իսկույն ձեռ ու վոր արին: Թե՛ բանտարկետը, թե՛ իր ոկնականը, թե՛ տերտերը, թե՛ բժիշկն սկսեցին իրար հետմից զնալ քաղցողների մոտ: Նրանք բոլորն ել համոզում ելին սնունդն ընդունել և այն ժամանակ ամեն բան կարգի կընկնի: Իհարկե՝ 1927 թ. երայդ: Այն ժամանակ յերկրում «աղատ» մամուլի պես մի բան գոյություն ուներ, վոր չեր կարող սննդաղուլի մասին ըլուհայտնել: Բայց բոլորովին այլ պատկեր ե հիմա՝ բացարձակ ռազմա-ֆաշիստական դիկտատուրայի պայմաններում, յերբ դործադրուլի մասին ամենաչնչին հոդվածն անդամ մամուլում չի կարող հրապարակվել: Յեկ այդ ժամանակ ՄՈՂԲ-ի, վոր քաղը բանտարկյալների սպայքարի դործում միշտ ել խոշոր դեր ե խաղացել, դրոշի տակ միջաղային կամպանիա կազմակերպելը վճռական նշանակություն ունի:

1930 թ. մենք՝ 12 հոգի քաղբանտարկյալ Մարիբորում սնընդաղուլ հայտարարեցինք, պահանջնելով՝ յերեկոները լուսավորություն, քաղբանտարկյալների ընդհանուր կամերը տաքացնել և այլն: Սկզբից մեր իրերը ձեռքներիցս առան և այնպես ցույց

տովին, իբր թե սննդադուլը չեն նկատում: Բայց պետք եւ չեշտել՝ վոր մեր իրերը ձեռքներից սովորելով՝ նրանք փորձում եյին մեր պրովակացիայի մեջ դցել ու այլելի խիստ դատաստան անելու վորեւ պատրժակ ունենալ: Առանձնապես դեմ եյին ազգականների հետ կապ ունենալու, ցերեկը պառկելու և զրոնելու հարցերին, և այդ խծրծանքները հայհոյանքներով եյին ընթացակցվում՝ մեր կողմից բողոք առաջ բերելու նպատակով, վոր այնուհետև այս հիման վրա «որինակելի կարդ մտցնեն»: Մի քանի որից հետո, յերբ բանտապետը տեսավ, վոր սննդադուլը չի դադարում, կարգադրություն արեց՝ մեկ բռնի կերպով կերպել: Սննդադուլի 7-րդ որը, 7 բանտապահ խուժեցին իմ կամերը, ինձ մահճակալից վերցրին և ստիպեցին բերանս բանալ, վորի մեջ ունելու պես մի բան դրին, վոր չկարողանամ վակել, և ուստինե խողովակով սուսլ լցրին ներս: Բայց զգվելի բան եր՝ այդ ու ցավացնող, վորովհետև անողը մի բանտապահ եր, վոր վոչ միայն այս բանի հետ վոչ մի առնջություն չուներ, այլև խողովակը դիտմամբ թափ եր տալիս, վոր ցավացնի: Որական յերկու անգամ յետ յենթարկվում եյի այդ ոսկերացիային:

Լեռնդլավիլի բանտում, վորտեղ 1932 թ. 30 քաղբանտարկյալ եր քաղցում, սննդադուլը ճնշելու գործում առանձին յեռանդցուցարերեց բժիշկը: Նա քաղցողներին բռնի կերակրելու մեթոդներ գործադադրեց: Նրա զործադրած տանջալի մեթոդներից մեկը կլիզմայով կերակրելու մեթոդն եր: Նա նպատակ ուներ այդպիսով ընկճել քաղբանտարկյալների կամքն ու դիմադրությունը:

Քաղցողներն որը մեջ յենթարկվում եյին կերակրելու այս մեթոդին, վոր արյունահոսություն եր առաջ բերում: Բժիշկը պնդում եր, թե կլիզմայի միջոցով միայն կարելի յէ նպատակին հասնել և քաղցողներին «խելքի բերել»: Բայց ոսկմա-Փաշխտական դիկտատուրայի դահիճներն այսքանով չին սահմանափակվում: Միշ. Միտրովիցի վերջին սննդադուլի ժամանակ, վորին 200 քաղբանտարկյալ եյին մասնակցում, նրանք միայն ունետինե խողովակով ու կլիզմայով եյին գոհություն ստանում: Քաղբանտարկյաներին ծեծում ել եյին: Ծեծելուց հետո հանգստացուցիչ շապիկներ եյին հաղցնում նրանց: Այս կատաղի պայքարի ար-

դյունքն այն յեղավ, վոր բանտի վարչությունը բոլոր քաղցող-ներին մեկուսարան դցեց, վորտեղ նրանց դատաստանն անխնա-տեսնում եր:

Առանձնահատուկ տանջանքների եյլն յենթարկվում զեկտ-վարներն ու կաղմակերպիչները: Բայց վերջին անցութարձի մա-սին մինչև որև ճշգրիտ տեղեկություններ չունենք, սակայն դժ-վար չի պատկերացնել այն բանտարկյալների դրությունը, վոր Միջ. Միարույթում պայքար եյլն մղում: Բացի ցուրտ մեկու-սարանում քաղցելուց, նրանք զրկված եյլն արտաքին աշխարհի հետ վորեւ կապ ունենալուց, նրանք վոչ միայն ծաղրանք, հայ-հոյանք, ուստինե խողովակ և այլն պետք ե տանեն, այլև հան-դըստացուցիչ շապիկ ու գաղանացած դահճճների ծեծը պետք ե կրեն: Հաջորդ նամակով յես կպատմեմ, թե ի՞նչ են ձեռք բերում քաղբանտարկյալները:

Դրագուին Սավիչ

## ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼԵՐԻ ԲՈՂՈՔԸ

Անցյալ տարի գեկտեմբերին քաղբանտարկյալների ընտանիք-ներն արդարադատության մինիստրության մի հուշագիր ներկա-յացրին այն սարսափելի պայմանների մասին, վոր ընթացիկ տարվա սեպտեմբերի յերկրորդ կեսից Գրունկիանդեյի քրեյական բանտի քաղբանտարկյալներն եյլն ապրում: Այս բանից հետո այդ հուշագիրն ստորագրած ընտանիքների բոլոր քաղբանտար-կյալներին խսկույն տեղափոխեցին մի ուրիշ բանտ: Բանտից բաց թողած նախկին քաղբանտարկյալների ասելով՝ մնացած քաղ-բանտարկյալների դրությունն այն որից վոչ միայն չլավացավ, այլև, ընդհակառակը, ավելի վատացավ և ավելի անտանելի ու սարսափելի դարձավ՝ վտանդի յենթարկելով քաղբանտարկյալնե-րի կյանքն ու առողջությունը:

Բերենք մի քանի վորոշակի փաստեր վերոհիշյալ բանտի քաղբանտարկյալների դրության մասին:

1. Արդեն մի քանի ամիս ե, ինչ քաղբանտարկյալները բո-լորովին զրկված են դուրս զրունելու իրավունքից: Բանտի վար-

չությունը սրանով չբավականացավ. Քաղքանտարկյալներին ավելի տանջանք պատճառած լինելու համար, կամերների բոլոր պատուհանները մեխել տվեց. մոտ ժամանակիներս պատուհաններին լայն ու անթափանցիկ ապակիներ դցել տվին, վորից հետո պատուհանները բացելն ու կամերների ողը թարմացնելն անհնարին և դառնում: Քաղքանտարկյալները պահանջում են յերկու ժամվագոսանք, պատուհանները բացելու և ողը թարմացնելու իրավունք:

2. Քաղքանտարկյալները դրկված են լրադիր, գիրք և գրեսական պիտույքներ ունենալու հնարավորությունից. Նրանց մոտից հավաքել են նաև բոլոր տեսակի խաղերի պարագաները՝ շախմատ, դոմինո և այլն: Այսպիսով նրանք բոլորովին մատնված են անգործության:

3. Քաղքանտարկյալներին արգելված է ծխել:

4. Նրանց զրկել են նամակ գրելու և ստանալու իրավունքից:

5. Նրանց զրկել են հարազատների հետ տեսակցություն ունենալու իրավունքից:

6. Նրանց արգելվում է իրար հետ աննդամթերքների փոխանակում կատարել:

Ընկերոջը մի կտոր հաց տալու համար մեկի սննդամթերքը բռնադրավել են և մեղադրյալին նստեցրել կարցեր, իրար մի կտոր հաց տալը սարսափելի հանցանք է համարվում:

7. Կամերներում ձմեռը ցուրտ է, բայց բանտի վարչությունը քաղքանտարկյալներին մի վերմակ է տալիս, չնայած վոր բանտում ավելորդ վերմանամկներ չառ կան: Հարկավոր են նշել, վոր այդ բանտի քաղքանտարկյալների զգալի մասը թոքախտով և տառապում:

8. Բժշկական ողնություն բոլորովին գոյություն չունի. Հիվանդ քաղքանտարկյալները բժիշկի գրվելիս, 6—8 որից հետո միայն կարող են նրա մոտ ընկնել: Բացի այդ, այն քաղքանտարկյալները, վորոնք բժշկական ողնություն են պահանջում, բոլորովին մերկարացվում և նախնական խիստ քննության են յենթարկվում, իսկ վորոնք ընդիմանում են այդ քննության, նրանց բոլորովին արգելվում է բժշկին ներկայանալ: Հաճախ ծանր

լուրջ հիվանդները հաղիսլ են բժշկի մոտ ընկնում, և դեղ ստանում են միայն այն ժամանակ, յերբ արծեքը վճարում են: Բայց 200 քաղբանտարկյալներից այդտեղ մեծ մասը չքայլորներ են, չեն կարողանում դեղ գնել, զրկված են իրենց առողջությունն աղատելու բոլոր հնարավորություններից:

9. Քաղբանտարկյալներն այսպիսի ծանր պայմաններում գտնվելով, միտքամանակ զրկված են վորևե մեկին դիմելու հընարավորությունից՝ իրենց իրավունքները, կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար: Յերբ Վլոգարսկին և Ելովիչն ուղեցին դատախազության բոլոր դրեւ, բանտի վարչությունը թույլ չտվեց: Յերբ քաղբանտարկյալները պահանջեցին դատախազին կանչել, նա չէկալ: Տեսնելով, վոր յելք չկա՝ նրանք սկսեցին կամերաներում բարձր գոռալ՝ «դատախազ»: Այս բանի համար բանտի իշխանությունը նրանց ծեծեց և շատերին կարցեր նստեցրեց:

10. Ամենավորը հանցանքի համար քաղբանտարկյալներին վամկում են կարցերում՝ առանց բժշկական վկայականի, թե՛ն բանտախին կանոնադրության մեջ այդ մասին հատուկ հոդվածներ կան:

11. Վերջին ժամանակներս այդ բանտում ծեծը դարձել է սխատեմ: ծեծը բանտում սկսվեց այս տարի ապրիլի 8—15-ից: ծեծին ակտիվ մասնակցություն ունեցողների շարքն են նշանակված՝ տեսուչ Մատելովսկին, ավագ վերակացուներ՝ Ռոխակին և Կասպերովիչը, ինչպես նաև վերակացուներ՝ Կախանսկին, Մայոկին և ուրիշները: Ծեծում են բանալիներով, ձեռքերը և վոտքերը շուռ տալով և այլն: Բանտի պետ Կովկասկին բոլոր քաղբանտարկյալներին չորս որ կոչտ անկողնով պատժեց այն պատճառով միայն, վոր վերջիններս պահանջել են դատախազին կանչել: 40 քաղբանտարկյալի՝ խելույն կարցեր նստեցրին: Բոլորից անկողիները խլեցին և ստիպեցին հատակին կամ մահճակալների շոր յերկաթների վրա քնել: Դեռ ավելին՝ տեսուչ Մատելովսկու հետ հսկելուները յեկան և քաղբանտարկյալներին հրամայեցին, վոր խոտի ներքնակներն իրենց տան: Խակ յերբ կամերներից մի քանի քաղբանտարկյալները հրաժարվեցին այդ հրամանը կա-

տարել, նրանց սկսեցին ծեծել՝ չխնայելով նույնիսկ ծանր հիվանդ-ներին: Հետո սկսեցին սխտեմատիկ կերպով՝ ամեն որ, այսինքն՝ որական յերկու անդամ, ստուգման ժամանակ նրանց ծեծել այն պատճառով, վոր չեն ուղղում շարքի կանգնել:

Բանտարկյալների բողոքին իրբև պատասխան, կոչտ անկողիններում պառկելու պատիմը յերեք որ ևս ավելացրին: Ամենատաժան կերպով ծեծվեցին՝ Զժեսկին, Խոմսկին, Խրոմիկան և այլ ընկերներ: Առանձնապես կալանքի յեն յենթարկում հրեա-ներին՝ ծեծելու ժամանակ նրանց անվանելով «զզվելի ջուղներ» և այլն: Ծեծի դեմ բողոքելու քաղբանտարկյալներից շատերը տաս որով կարցեր են դրվել:

12. Քաղբանտարկյալներն իրենց արժանապատվությունը, կյանքն ու առողջությունը պաշտպանելու համար դիմում են սննդադրությին: Այն փաստը, վոր յոթ ամսվա ընթացքում սննդադրությունը չորս անդամ նորոգվել է, պերճախոս կերպով վկայում ե այն ծանր պայմանները, վորոնց մեջ կուխարսկու իրավասության տակ գտնված քրեյական բանտի քաղբանտարկյալ-ներն են ապրում: Այս բանը հաստատում ե դոնե Վոյայուկայի հիվանդանոցում ինքնառպանություն դորձելը, Պրոտասի մահը, և ամեն որ այդ բանտում ծանր հիվանդների թիվն աճելը (թոքախտ, սրտի, ստամոքսի և այլ հիվանդություններ):

Ստորագրություններ

---

## ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ ԲԵԼԱՍՏՈԿԻ ԲՈԼՈՐ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ (Լեհաստան)

Այն սոսկալի դրությունը, վորի մեջ և դանվում Բելաստոկի բանտի քաղբանտարկյալների բուժման դորձը, առանձնապես բանտային իշխանությունների բարբարոս վերաբերմուքը քաղ-բանտարկյալների հանդեպ— հարկադրում ե մեղ դիմել այս նամակով:

Ամբողջ Լեհաստանում, ինչպես նաև Բելաստոկի բանտում խոսում են նոր կարդեր մտցնելու մասին, բայց չեն խոսում այն մասին, վոր հիվանդը բանտարկյալներին թողնում են առանց բժշկական ոգնության, վոր կալանավոր հիվանդները, նամանավանդ ուրիշ բանտերից վոխադրվածները, հիվանդանոցի յերեւ նույնիսկ չեն տեսնում և վոչ մի բուժովություն չեն ստանում, վոր վարակիչ հիվանդներին և թոքախտավորներին տեղալորում են առողջների հետ միենալուն կամերայում։ Մեկ տարվա ընթացքում մահացել են 10 քաղբանտարկյալներ, բայց դա դեռ լրիվ պատկերը չե։ մահացությունը քաղբանտարկյալների մեջ ավելի շատ ե, ըստ վորում յուրաքանչյուրի մահվան պատճառը բանտարկին իշխանությունների արտասովոր վայրադությունների հետևանքն ե։

19 տարեկան քաղբանտարկյալուհի Տատյանա Զումակը մահվանից յերկու որ առաջ աղերսում եր բանտի սպասավորուհի Գերմանիկին հրավիրել իրեն մոտ բանտարկին բժշկին, սակայն դա մընաց անհետեանք։ Քաղբանտարկյալ Կոմալեստիզը մահացավ դեկտեմբերի 25-ին բանտից դեպի հիվանդանոց գնալու ժամանակ՝ կալանքից աղատվելուց հետո։

Ահա թե ինչ են պատմում քաղբանտարկյալ Պոստովակու մահվան մասին նրա ընկերները, վորոնք գտնվելիս են յեղել նրահետ հիվանդանոցում։ Պոստովակին հիվանդանոց ե ընդունվել հունվարի 15-ին, զրում եր իրեն չափաղանց վատ, արյուն եր թքում, քթից շարունակ արյուն եր հոսում, տեսողությունը թուլացել եր, դժվարությամբ եր կարողանում խոսել, ուտել և քնել։ Այդ դրությամբ նա վոչ մի ոգնություն չեր ստանում։ Նրան ավին մի ինչ-վոր փոշի, վորից դրությունն ավելի վատացավ։ Ամբողջ ողնությունը կայանում եր, տաքությունը չափելու մեջ, վորովհետև ջերմությունը միշտ բարձր եր։

Բժիշկը պնդում եր, վոր հիվանդը կեղծում ե՝ պատժվելուց ժամանակավորապես աղատվելու համար։ (Բնկ. Պոստովակու գրավոր դիմումը պատժից ժամանակավորապես աղատվելու մասին, մնացել եր անհետեանք)։ Վերջին շաբաթվա ընթացքում հիվանդը ճշում եր ու հառաջում որ ու դիշեր։ Նրան սրտկումներ ելին անում, բայց սրսկում ստանալու համար հարկավոր եր դիշերներով կռվել, ինչքան վոր ուժ կար— թակել դուռը և պա-

Հանջել բուժամկ : Յերբ նաև դիմեց բժշկին և խնդրեց տեղափոխել հիվանդանոյ ազատ պայմանների մեջ, նըան պատասխանեցին, վոր յերբ նրա առողջությունը վարուանա — այդ դեպքում միայն կարելի կլինի խոսել փոխադրման մասին :

Պոստովսկու մահվան նախորյակին ընկ . Ս . խնդրեց բժշկին ի հաշիվ կոմունայի հրավիրել մասնագետ բժիշկ, բայց նրան պատասխանեցին, վոր բանտարյին ուղղամենուը այդ անել թույլ չի տալիս, խոկ տեսուչները սպառնացին ընկ . Ա-ին, վոր նման յելույթների համար նաև կհետացի : 1934 թ . հունվարի 31-ին, յերեկոյան ժամը 10-ին Պոստովսկին մեռավ : Մահվանից առաջ նա ասաց ընկերներին՝ «Փաշխտները դիտակցաբար ինձ սպառնեցին : Հաղորդեցեք վողջուներս ընկերներին» :

Փետրվարի 9-ին, յերեկոյան ժամը 6-ին մեռավ մեր ընկեր Լուկաշ Դորժինսկին, վորին մեկ տարի առաջ լյուբլինի բանտից բերեցին այստեղի բանտը բուժվելու համար : Դորժինսկին ամբողջ ժամանակ չեր ստանում վոչ մի բժշկական ոգնություն և պահպան եր քրեյստիան հանցագործների հետ : Յերբ քաղքանտարկյալների կողեկտիվը կատեգորիկ կերպով ուղահանջեց և բողոքեց — այն ժամանակ միայն Դորժինսկուն վոխադրեցին հիվանդանոց, վորտեղ նա մեկ շաբաթ անց մահացավ :

Պարոնայք բժիշկներ, հնարավո՞ր եք դանում արդյոք կատարել ձեր բժշկական պարտականություններն այդ հրեշային ուղղամենուի համաձայն, վորը թույլ չի տալիս — ոգնել մեռնող մարդուն : Բժշկության այս ձեր՝ մնացած մարդկային ելեմենտար իրավունքներից զրկելու հետ միասին, հանդիսանում ե բանտարյին նոր ուղղամենուի մի մասը, նորատակ հետապնդելով ֆիզիկապես վոչնչացնել քաղքանտարկյալներին : Հրեշավոր ուղղամենու թույլ չի տալիս ոգնել մահամերձին :

Մենք դիմում ենք ձեզ, պարոնայք բժիշկներ, վորպեսզի դուք չչարունակեք մնալ անտարբեր դեպի քաղքանտարկյալները և վորպեսզի դուք ձեր բժշկական հեղինակությամբ ազդեք՝ այդ վայրագությունները բելաստոկի բանտից վերացնելու համար :

Վողջույներով՝

Բելաստոկի բանտի քաղքանտարկյալներ

ՀԵՀԱՍՏԱՆԻ Ն. ԲԱՆՏԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ  
ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ, ԱՇԽԱՏԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ:

ՄԵնք քաղբանտարկյալներս, թվով 170 հոգի, դտնվելով  
քանտի մեջ, Հոկտեմբերյան հաղթական հեղափոխության 16-րդ  
տարեդարձին յեղբայրական հեղափոխական վողջույն ենք հոգում  
և ՍՀՄ բանվորներին, աշխատավոր դյուդացիներին և կարմիր բա-  
նակայիններին:

ԽՍՀՄ-ը պլոտետարական առաջին հնդամյակում արդեն դր-  
բած հիմքի վրա, 2-րդ հնդամյակում սոցիալիզմի անհաղթելի ամ-  
բություններն եւ կառուցում՝ հակառակ սոցիալ-ֆաշիզմի կողմից  
աջակցություն գտած համաշխարհային խմբերիալիզմի ամեն  
տեսակի դիմումած մեքենայությունների:

ԽՍՀՄ-ի գոյությունը՝ աշխարհի մեկ վեցերորդ մասի ազա-  
տագրումը կազմիտալիզմի լծից, սոցչնարարության հակայական  
դարձացումը, մարդկության պատմության մեջ չտեսնած տկ-  
տիվությամբ ու վողեռորությամբ և Համկոմկուսի (ը) կենուկոմի  
լենինյան դեկադարությամբ անոսասն խորացնում եւ կազմիտալիզ-  
մի ճղնաժամը:

ԽՍՀՄ-ը համաշխարհային հեղափոխության պատվար հան-  
դիսանալով՝ կապկիտալիստական սիստեմի անկման կարևորագույն  
ֆակտորներից մեկն եւ դառնում։ Բանվորների, աշխատավոր  
դյուդացիների և կարմիր բանակայինների ստեղծած ԽՍՀՄ-ում  
վերացած է աշխատավոր մասսայի ազգային և սոցիալական ճըն-  
շումը, լիկիդացիայի յև յենթարկվում կուլամկությունը, վոր-  
պես դասակարգ, լիկիդացիայի յենթարկվում դասակարգե-  
րի մեացորդներն ընդհանրապես։ Դասակարգային ներհակու-  
թյուններն անլուր չափերով սրելուն զուգընթաց, կապկիտալիտ-  
ական աշխարհի արև ու այն յերկրներում (Կուբա, Պաղեստին,  
Լեհաստան, Գերմանիա) աճում են դիմում հեղափոխության ա-  
վեները։

ԽՍՀՄ-ը դարձել է պլոտետարիատին, չքամիոր դյուդացիու-  
թյանն ու ճնշված ժողովուրդներին հեղափոխականացնող Փակ-

առոր : ԽՍՀՄ խորտակելու վորքերից հետո Կ վոր կարմիր բանակի պողպատյա ձեռքերով լիկվիդացիայի յենթարկվեցին , միջազգային իմպերիալիզմն այժմ ավելի յեռանդով ձեռնարկել ե հակախորհրդային բարեկային բլոկ կազմակերպելու գործը : Իմպերիալիզմը , վորքին հեղափոխական շարժումն սպառնում ե խորտակել , այլ յելք չի տեսնում այդ դրությունից , քան համաշխարհային հեղափոխության պատվար ԽՍՀՄ-ի խորտակումը :

Ծնչված ժողովուրդների բուրժուազիան թե զաղութներում և թե համաշխարհային իմպերիալիզմի դանաղան կլիմների կողմից գրավված առանձին յերկրամասերում հետզհետե ավելի ու ավելի ամուր ե կապվում իմպերիալիզմի հետ՝ ամեն քայլափոխում դավաճաններով ազդային ազատազրման պայքարին :

Սոցիալ-Փաշչիստական II ինտերնացիոնալն որստորե ջախջախելով պրոլետարիատի ամեն մի պայքարը՝ հետզհետե ավելի ամուր ե կապվում Փաշչիստական աղարատի հետ , կազմելով նըրա բաղկացուցիչ մասը՝ բանվորական հեղափոխական շարժման գեմ կովելու ավելի վտանգավոր մասը , վորովհետե այդ ինտերնացիոնալն իր գործունելյությունը բանվորական մասսաների միջայրում ե կենտրոնացնում :

Սոցիալ-ինտերվենտները , վորոնց ամենից շատ ե սպառնում հեղափոխությունը , ավելի ուժեղ , քան 1918 թ. հակախորհրդային ինտերվենցիան , ֆորպատն են հանդիսանում (Անդրիայի , Ավատրիայի սոցիալ-դեմոկրատների բանաձեռք , Վանդեր-Վելդեյի յելույթը և այլն) : Զորսի պակտը , տնտեսական զինաթափման կոնֆերենցիան , Ազգերի լիգայից Գերմանիայի դուրս դալը , ճայռնական իմպերիալիզմի պատրաստակամություններն ինտերվենցիայի համար , Հիտլերի ինտերվենցիոնիստական հանրաքայն , նրա մեքենայությունները Յրանսիայում և Լեհաստանում , բուժերային պետությունների պատվար ստեղծելը , — այս բոլորն ինտերվենցիայի շուտափույթ պատրաստումն են վկայում : Իմպերիալիստական պետությունների մեջ մշտապես խորացող հակասություններն ավելի յեն սրում նրանց ձգտումները՝ միանալու և այդ հակասություններն ԽՍՀՄ-ի հաշվին լիկվիդացիայի յինթարկելու : Զհարձակվելու պակտերն ուժիղացնելով մասսա-

Ների համակիրանքը դեպի ԽՍՀՄ-ի խաղաղաբար քաղաքականությունը՝ միաժամանակ ծածկույթ են հանդիսանում ինտերվենցիայի համար :

Ֆաշիստական Լեհաստանը համաշխարհային իմպերիալիզմի թույլ ողակը կազմելով՝ արևմուտքում հակախորհրդային բլուլի պլացղարմն և հանդիսանում (Տուտուղեսկոյի այցելությունները, լատվիական և ֆինլանդական գլխավոր շտաբի սպաներն, Ստանիսլավսկու խաղերը, Վիլնայի և Պերեմիշլի գաղային մանեղը)։ Իր ներսում հեղափոխական շարժումը ճնշելու համար՝ ֆաշիզմին հարկաւոր և ԽՍՀՄ-ը խորտակել։ ԽՍՀՄ-ի հանդեպ, լեհական ֆաշիզմի ուժեղացմանը զուգընթաց՝ հակախորհրդացղային ակցիաներն ու ոլրովակացիաները (մահափորձ Լվովում) ներկայումս կենտրոնացել են Լեհաստանում, Արևմտյան Ռուկայնայում և ուկրայնական ևմիգրացիայի ներսում՝ լեհաստանից դուրս (ընդհանուր Ռուկայնական համագույմար, ուկրայնական ֆաշիստների ցույցեր՝ 29/10, և սոցիալ-ֆաշիստական ցույցեր 5/1—)։

Լեհաստանի հեղափոխական պրոլետարիատը Արևմտյան Ռուկայնայի և Արևմտյան Բելոռուսիայի աշխատավոր գյուղացիության և աշխատավոր մասսաների հետ միասին, Լեհաստանի կոմիտսի ղեկավարությամբ՝ իր հեղափոխական մարտերում հետ կմղի աշխատավոր մտսաների հաջին ճգնաժամից դուրս դաշլու կապիտալիզմի փորձը, կծախջախի հակախորհրդային խաչակաց արշավանքի Փոբարուստը՝ հակառակ նրանց խաղերի ու հեղափոխական փրուն ճառերի։ Կիշշի ինտերվենցիայի ամեն մի փորձը ԽՍՀՄ-ի դեմ՝ համաձայն Լենինի ուսմունքի, իմպերիալիստական ամեն մի պատերազմ ու ինտերվենցիա քաղաքացիական կովկի փոխելով։

Ճգնաժամը կլուծվի միայն հեղափոխական ճանապարհով, լեհաստանի կոմիտսի ղեկավարությամբ, նույն այն ճանապարհով, վոր 16 տարի սրանից առաջ ցույց են տվել ԽՍՀՄ-ի բանվարները, աշխատավոր գյուղացիները և կարմիր բանակայինները՝ պրոլետարական դիկտատորայի համար իրենց մղած պայտքարում։

Կեցցե Հոկտեմբերի և ԽՍՀՄ-ի 16-րդ տարեդարձը։

Կեցցե ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաների ղեկավար՝ Համ-  
կոմկուսի (բ) կենակոմը:

Դեպի պայքար համաշխարհային սոցիալիստական հեղափոռ  
խության համար կոմկուսի ղեկավարության ներքո:

Կեցցե՛ Կարմիր բանակը, դեպի պայքա՞ր՝ ընդդեմ խմակերիա-  
լիստական ինտերվենցիայի:

Կեցցե՛ կոմկուսը՝ Լեհաստանի սլրուետարական հեղափոխու-  
թյան առաջնորդու:

Քաղանտարկելիների կոմունայում  
(Լեհաստան)

ԿՈՐՈՆՈՎԻ (ԼԵՀԱՍՏԱՆ) ԲԱՆՏԻ

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅՑԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԻ

Մենք այստեղ 160 քաղանտարկյալ ենք: Դատավճիռներից  
մեծ մասը յերկարատե ժամանակներով ե: Բնտանիքից համար-  
յա թե ողնություն չենք ստանում: Մեր բանտում ամենակարեսը  
անցքը 1933 թ. սկզբանեմբերի 19-ի քրեյտականների յելույթն ե:  
Կոմունան ամենաակտիվ մասնակցությունը ցույց տվեց այս յե-  
լույթին: Առավոտից բոլոր բանտարկյալները պահանջեցին բան-  
տարկետին: Առաջին ծեծի ու բարիկադը գրոհելու ժամանակ քաղանտարկյալները գոչեցին.

— Կորչի՛ սպիտակ տեսորը, կորչի՛ անպաշտովան բանտար-  
կյալների ծեծը:

Նախքան այդ, յելույթ անող քրեյտականները մի ճառով դի-  
մեցին վարչական ստորին կազմին: Այն քրեյտականները, վոր  
մինչև այդ չեցին մասնակցում յելույթին, տեսնելով քաղան-  
տարկյալների յելույթը՝ միացան քրեյտականների հետ և կամերա-  
ներում յերկու նոր բարիկադ կառուցեցին: Վարչությունն ստիպ-  
ված յեղավ նահանջել: Հետո, յերբ տեղ հասած վոստիկանու-  
թյունը բարիկադը գրավեց ու սկսեց բանտարկյալներին ծեծել,  
քաղանտարկյալների մեջ աղաղակներ բարձրացան.

— Զծեծե՛ք, չսպանե՛ք:

Ի պատասխան այս բարձրածայն բողոքի, վոստիկանությունը դադրեցրեց քրեյականներին ծեծելը:

Բոլոր քաղբանուարկյալները ճաշից հրաժարվեցին՝ պահանջելով դատախաղին կամերաներ կանչել: Դատախաղը կամերաներ գալուն պես մենք նրան դիմավորեցինք բարձրածայն բողոքով՝ անսպաշտպան բանտարկյալներին ծեծելու դեմ, և դրինք մեր բոլոր պահանջները:

Այս ընդարձակ հրապարակայանության հետևանքով, վոր մեր յելությն և դտել, մինխատրությունից մի խորհրդական մեղ այցի յեկավ, վորին մեր պահանջները դրինք, որինակ՝ մթերքների բաշխում, դրամական փոխադրություն, լուսավորություն՝ մինչև յերեկոյան ժամը 9-ը, սոցիալական բովանդակություն ունեցող գրքերի թույլատվություն և ստացում: Մենք նրան բացարեցինք աղմինխստրացիայի գործադրած պատիժների, ծեծերի, տեղավորելու հատուկ սխտեմը, ինչպես և քրեյականների վերջին լնդվլումների հիմքն ու դրդապատճառը: Նկատի ունենալով հանցագործների մեջ կատարած հետազա թափառումը՝ մենք վորոշեցինք աղմինխստրացիային ճնշել այն մտքով, վոր մեր պահանջները կատարի: Մանր-մունը պահանջներն աղմինխստրացիան բավարարեց, այնուհետև կոմունան դորակոչվեց պայքարելու այն անվանակոչի (պերեկլիպկա) դեմ, վոր մի տարի առաջ կորոնովի կոմունայի վկովն եյին վաթաթել: Կոմունային հաջողվեց անվանակոչը ճախողել: Սկզբից իշխանությունը չեր համարձակվում դիմադրել, այլ յերկու շաբաթից հետո միայն անվանակոչը նորից պահանջեց: Մեղանից կորուկ պատասխան ստանալով, թե անվանակոչի համար շարքի չենք կանգնի՝ աղմինխստրացիան մեղ պատեց անորոշ ժամանակ մախորկայից զրկելով: Դեկավարությանը կոմունան դորակոչի հրավիրեց անվանակոչի դեմ պայքարը շարունակելու: Կոմունայի պատղամավորների անընդհատ ու բարձրածայն բողոքներից, բոլոր բնկերների մասսայական բողոքներից ու դռները բարձրածայն թակելուց յերեք որ հետո, աղմինխստրացիան մախորկան վերադարձրեց մեզ: Այսպիսով, չնորհիլ կոմունայի հետա-

վոր ու միաձայն դիրքի, աղմինիստրացիայի գլուհը հետ մըլլ-վեց:

Կորոնովի բանտի կոմունայի ուկավարություն

Նոյեմբեր, 1933 թ.

## ԼՈՄԺԱՅԻ (ԼԵՀԱՍՏԱՆ)

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Մեր կոմունայում 105 մարդ կա, վորից 85-ը տղամարդ ե, իսկ 20-ը՝ կին: Նյութական դրությունը սոսկալի յէ: Արդեն մի քանի ամիս ե, ինչ ծխախոտ չկա, մեկուսարաններում ենք նըստած: Վերջին յելույթի որից, այսինքն՝ 1932 թ. աեպտեմբերից (4 որյա մննդաղուկ) զրուանքը մի ժամով պակասեցրել են, չըրադարանից զրկել են (վեղարվեստական գրականությունը մըտցըրել են բանտի գրադարանը), մյուս դրգերը վոչչացըրել են: Զրուանքի համար նոր ռեժիմ ե սահմանված (զույգ զույգ, զույգը փոխել, մյուս զույգի հետ խոսել չի թույլատրվում, զրուանքըն սկսել համաձայն հրամանի, համաձայն հրամանի՝ պատովի կանգնել ու գլուխը բանալ): Արգելված ե մթերքներից միմյանց բաժին տալ, մի բան, վոր հավասարազոր ե կոմունայի վոչընչացման: Զրուանքից առաջ ու հետո, նույնիսկ զուգարանից զուրս գալիս, անհատական խուզարկություն: Սկզբից թերթերով ողտղում եր նա, ով ուղղակի խմբադրությունից եր ստանում, իսկ այժմ միմիայն բանտապետի հատուկ թույլատվությամբ կարելի յե թերթ ստանալ, իսկ յեթե մյուս ընկերն ուղում ե այն կարդալ, նորից պետք ե պետին հայտնի: Տետրակ կամ մատիտ ունենալու համար դարձյալ պետք ե դիմում տալ: Նստակներն առայժմ կամերաներում են գրլում: Կանանց արգեն հայտարարել են, վոր ամիսը մի անդամ կարելի յէ նամակ գրել: Արմենիստրացիան ներկայացուցչին ձևականորեն չի ճանաչում, բայց փաստորեն դեկալարը կոմունայի բոլոր գործերը կանոնավորում ե: Ամեն անդամ բանտապետը նրան հակառակում ե, չի ուղում նրան ականջ դնել և վերջիվերջո դիջում ե: Պատժելու, կարցեր դնելու, ծեծելու և այլ գեղքերում ներկայացուցիչը հա-

կազմում և այն բոլորին և հաճախ համապատասխան արդյունք-ներ և ունենում: Նորերս անունդը մի քիչ լավացավ, ընկերների յելույթից հետո, վորոնք պահանջել ելին, վոր դատախաղը գա: Յերս դատախաղը յեկալ ամեն մի ընկեր նրա հարցին՝ թե ի՞նչ ունի ասելու, կրկնում եր, վոր իրենց նկատմամբ ազմին խարա-ցիայի վերաբերմունքը սարսափելի յէ, վոր կերակուրն անտա-նելի յէ, և վոր իրենք կտրուկ կերպով պահանջում են սնունդը՝ լավացնել: Այս այցից հետո սնունդը լավացավ, սուրճը քաղցրա-ցավ, և շաբաթը յերկու անդամ մի-մի կտոր միս ու սուպ տվին: Ընկերները կտրուկ կերպով հրաժարվեցին անվանակոչին պա-տասխաննելուց, վոր ազմինիստրացիան եր պահանջում, և կան-չելիս քրեյականների պես ելին կանդնում՝ գլուխը դեմ անելով դուն դիմացի լուսամուտին: Բայց բողոքները չոփնեցին: Այս անդամ ընկերներն աշխատում են դուռը բանալուց առաջ կանդ-նել, բայց վոչ լուսամուտի դեմ: Փոխարենն զրուանքի ժամա-նակ խմբի պետի ներկայությամբ մեզ յերկու անդամ կրկնեցին.

— Շարքի, և դլուխներդ բացեք:

Բայց ընկերներն իրենց շրելուն դրին ու սկսեցին զրուանքը, իսկ աղիմինիստրացիան լուց: Փորձեր յեղան նաև ընկերներին շոր փոխելու, առանձնապես նորերին: Նույնիսկ դեպքեր յեղան, վոր բոնի կերպով նրանց շոր փոխեցին: Մի քանի որ անընդհատ այդ ընկերները շորերը չելին հաղնում և կամերի դուռը բանա-լուն պես բանտի շորերը չափառում ելին միջանցք: Այդ ժամանակ բանտապահները խուժեցին կամերան, ու սկսվեց մեզ ծանոթ ծեծ ու ջարդը: Ներկայացուցիչը բողոքի դնաց պետի մոտ, վոր խոստացել եր, թե այլևս այդ բանը չի լինելու, իսկ ինչ վերա-բերում է շոր փոխելուն, պետը հայտաբարեց, թե առողջապա-հական նկատառումներով նա նորերին 10 որով շորը փոխում է: Իբր թե կարանտինի համար եր արշում: Մինչեւ որս ել այդ խոս-տումը կատարվում է և տաս որից հետո սեփական հագուստը վե-րադարձվում է իրեն՝ բանտարկյալին:

Ընկերները վորոշում կայացրին, վոր յեթե ծեծը կրկնվի, համապատասխան կարգով բողոքելու յեն: Դատախաղ կպահան-ջեն ու չեն նախաճաշի: Ամեն մի դատարկ բանի համար պատիժ-ներ են տեղում՝ կարգեր, կոշտ մահճակալ, մի քանի շաբաթ թեյից զրկել և այլն:

Մենք գտնվում ենք ծայր աստիճան լարված դրության մեջ։ Մասսայական մերկացում և կատարվում։ Քրեյական որենսդրության 154 հողվածով 15 կին մերկացրել են։ Նրանք 3—4 որ մնացել են մերկ։ Բոլորը հիվանդացել են։ Այժմ յերկու մերկ կին նստած են ստորյերկրյա բանտում (կարցերում) վորոնցից մեկը, այսպես կոչված՝ «որինական» բանտում։

Միասին դրունելուց հրաժարվելու համար պատժվեցինք՝ յերկու շաբաթ դրկվելով վորք և բան ընդունելու իրավունքից։

Զգանովսկայան (կանանց բանտի տեսուչը) ծաղրում ե մեղ, չխնայելով վոչ մի միջոց։

Հունվարի 28-ին մեղ հայտարարեց, վոր տարածված տիֆ հիվանդության պատճառով չեն թույլատրվելու դրսից սպիտակեղեն ստանալ։ Առաջարկում են՝ կամ բանտարկին հագուստը հաղնենք, կամ սպիտակեղենները լվանալու համար դրամ վճարենք։ Պարզ ե՝ տիֆ հիվանդությունը միմիայն առիթ և ծառայելու, վոր մեղ մերկացնեն։

Զբոսանքը պարբերաբար կրծատում են, այժմ 30—40 ըոսե յենք դրունում։ Ամենատարբական բանի համար խիստ կերպով պատժում են։ Բացի մերկացումից, 7 կին պատժված են և աքսորված յերկու շաբաթից մինչև մեկ տարիս ժամանակով։ Գրական պարագաներ ու լրացիր մինչև հիմա չունենք (կամ երայից յերկուուր միայն լրացիր ունեն)։

## ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ՍՊԻՏԱԿ ՏԵՌՈՐՆ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔՆ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

Բարկանյան ողետություններն ազգային փոքրամասնություններին ձնշելու, հալածելու տիպիկ որինակ են հանդիսանում։ Որինակ՝ մուամինիայում ազգային փոքրամասնությունը 40 տոկոս և կազմում, Հարավսլավիայում, վորտեղ 5 միլիոն սերբ

կա, աղդային փոքրամասնությունը 7,5 տոկոս և կազմում, բուլղարիայում, Պետրիչեյի շրջանում 200000 մակեդոնացիներ են բնակվում, վորոնց գահանորեն ճնշում են բուլղար «փրկիչները»: Հունաստանում՝ մակեդոնացիները, տաճիկները, թրակիայում՝ բուլղարներն, հայերն ու հրեյաները տարրական իրավունքներից ու ազատությունից դրկված են, ֆաշիստական բանդաներն աղդային փոքրամասնությունների դեմ չլաված տեռոր են տարածել:

Բեսարաբիայում (Ռումինիա) այսպես կոչված «յերկաթե գվարդիան» և իշխում, վոր ցարական ժամանակների ու հարյուրակայիններին և հիշեցնում: Դոբրուջայում (Ռումինիա) ֆաշիստական բանդաներ են կազմակերպված: Հունաստանում «ՅԵ, ՅԵ, ՅԵ» կոչված ֆաշիստական կազմակերպությունը, վոր Վենիգելլոսի խարակի ծառայողն և, հրեյաների, հույների, տաճիկների ու մակեդոնացիների դեմ անտառթ հալածանք և սկսել: Բալկանյան յերկներից վոչ մեկում և վոչ մի աղդային հեղափոխական կազմակերպություն լեզար կերպով չի աշխատում: Այդ կազմակերպությունների առաջնորդները բանտարկվում, տանջանքների յին յենթարկվում և յերկար տարիներ զրկվում են ազատությունից:

Այս տարվա սկզբում ֆաշիստական բանդաները Բուլղարիայում նացիոնալ-էեղափոխական մակեդոնացի լիդերներից սպանեցին պատգամավոր Քրիստոս Տրայկոսին, և Դիմո Կալբրակիլովին: Բուլղարիայում վերջին ամիսները բանտարկված և Յասսայի բանտերն են տեղափոխված 100 ուկրայնացի աղդային հեղափոխական: Արգելվում և հալածվում են վոչ միայն քաղաքական այլև կուլտուրական կազմակերպությունները:

Բալկանյան բոլոր յերկներում բանի դենացիոնալիզմի պրոցեսն արագ տեմպերով (և ամենադժան միջոցներ կիրառելով) և ընթանում: Աղդային փոքրամասնությունների բոլոր դպրոցները փակվում են: Աղդային փոքրամասնությունների լեզու տեսած մամուլը (թերթեր, սմասթերթեր) սիստեմատիկ կերպով բռնադրավում են և արգելվում: Աղդային հալածանքի ամենացայտուն արտահայտությունը տնտեսական և Փինանսական քաղաքականությունն և՝ հանդեպ աղդային

վորքամասնությունների, վորը տարվում ե չտեսնված շահագործման և թալանի միջոցով։ Այն տառքերը, վոր աղջային վորքամասնությունների վրա յեն դրվում, միշտ յերկու անդամ ավելի յեն, քան իշխող աղջության վրա դրված տուրքերը։ Տուրքերը դանձվում են ամենաղաժաման կերպով, և վոչ մի լրացուցիչ ժամկետ չի տրվում։ Աղջային վորքամասնություններին վարկեր չեն տրվում, իսկ յեթե տալիս են ել, ապա նրանք մուծում են կրկնարկի չափով։ Գործադրկությունն աղջային վորքամասնությունների մեջ ավելի ուժեղ ե, քան աղջարնակչության մյուս իաւերի մեջ։ Աղջային վորքամասնություններին պատկանող գործադրուրկների թիվն որեց որ աճում է, վորովհետեւ աղջային վորքամասնությանը պատկանող բանվորներին կառավարությունը դորժարաններից դուրս ե անում։

Բանվորների համերաշխությունը պառակտելու նպատակով՝ աղջային վորքամասնությանը պատկանող բանվորների աշխատավարձը միշտ ավելի յե իջեցվում, քան այն բանվորներինը, վոր տիրող աղջությունից են։

Աղջային վորքամասնություններին սրատկանող բանվորների և գյուղացիների շահագործմանն ու թալանին մասնակցում են իրենց սեփական կապիտալիստներն ու խոշոր կարլածատերերը, քանի վոր աղջային վորքամասնությունների բուրժուազիան կառավարության և կառավարական կուսակցությունների մեջ և մտնում և վերջիններիս հետ ձեռք ձեռքի տված՝ իրենց սեփական աղջության աշխատավոր մասսաներին ճնշելու քաղաքականություն և վարում։ Ռումինիայում նրանք ամեն տեսակի միջոցներ են ձեռք առնում, վոր աղջային վորքամասնությունները չմտնեն աղջային հեղափոխական շարժման մեջ։

Հարավսլավիայում, վորտեղ բոլոր կուսակցություններն ու կազմակերպություններն արտերված են, սոցիալ-դեմոկրատներն իրենց լեզար կազմակերպություններն արահպանել են այն պատճառով միայն, վոր նրանք կառավարությանն ոժանդակում են՝ ֆաշիստական սերերի քաղաքականության հանդեպ ճնշված աղջային վորքամասնություններ ունենալու։

Բուլղարիայում և Հունաստանում սոցիալ-դեմոկրատ պա-

բազմութիները նույն դերն են խաղում և նույնպես իրենց նացիոնալ շովինիստական կառավարությունների ծառայողներն են; Հակառակ այս քանի, աղջային աղաստագրական շարժումը բալեհանյան յերկրներում աճում ու ընդարձակվում է, հաճախ յերեան դալով իրրե բացարձակ աղաստամբություն: Այս աղաստամբություններն արյան մեջ խեղղելու համար պատժիչ դորամասեր են ուղարկվում, վորոնք բաղմաթիվ զոհերի պատճառ են դառնում:

Հարավայլալիայի «Արացիֆիկացիան» վերջացավ մասսայական գնդակահաճարություններով և տասնյակի մահապատիժներով:

ՄՈՊՐ-ի բալկանյան սեկցիաներն աղջային փոքրամասնությունների զոհերին ողնության են դալիս այնպես, ինչպես և դասակարգային պայքարի զոհերին:

ՄՈՊՐ-ի սեկցիաները բալկանյան յերկրներում սխստեմատիկ պայքար են մղում ընդդեմ սպիտակ տեսորի, և ակտիվ կերպով մասնակցում են տեղի ունեցող յելույթներին, աղջային փոքրամասնությունների պայքարին՝ մորիլիկացիայի յենթարկվելով վոչ միայն վերջիններից, այլև տիրող լայն աշխատավորական մասսաների աղատագրման համար: Նրանք կազմակերպում և կամպանիաներ են մղում՝ հանուն աղջային աղատադրման պայքարող հեղափոխական մարտիկներին ողնելու համար:

## ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՀՎԵՐԴՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ

### ԸՆԿԵՐՆԵՐ.

Ստացանք ձեր նամակիը, թարգմանեցինք և անմիջապես հասցըինք Սիրիայի բանտերում գտնվող մեր բոլոր ընկերներին, վորը նրանց մեծ ուրախություն պատճառեց:

Խորհրդային Հայաստանում և ամբողջ Խորհրդային Միության մեջ կատավող սոցիալիստական շինարարության մասին գրված հետաքրքրիր լուրերը մեզ մեծ հաճույք են պատճառում:

Հետաքրքրությամբ և համակրանքով հետեւում ենք մեր սի-

բելի ընկ . ՍՏԱԼԻՆԻ առաջնորդությամբ կոմունիստական կուսակցության՝ ամբողջ աշխարհում տարած հաջողություններին :

Ընդհանառակը, մեր յերկիրը կրում է Փրանսիական իմպերիալիզմի ճնշող լուծը և նրա զարհութելի տեսողը : Միանալով քաղաքի փոտած ֆեոդալներին ու բուրժուազիային, ինչպես և զեմագույն նացիոնալիստներին՝ նա վայրագորեն հայածում և սիրիական կոմկուսակցությունը և այն համակրողներին : Բանտերը լիքն են անիրավացնորեն և անստուցդ պատճառներով ձերբակալված ընկերներով :

Ենթառութում միայն անցյալ շարաթվալ ընթացքում ձերբակալվեցին 18 ընկեր, վորոնք մասնակցել ելին հակառաչնակցության մի ցույցի կամ թուուցիկներ ելին բաժանել : Այս ցույցն ամբողջ աշխարհում իր հակառակեցությունն ունեցավ . վոստիկանական յերկու կոմիտար և մի տասնյակ ազենոս վիրավորվեցին . ծերերը, կանայք և պատանիները փողոց իջան իրենց ցասումը հայոններու Փրանսիական իմպերիալիզմի քաղաքականությանը, վորը պաշտպանում և քաջալերում և ֆաշիստ դաշնակիների կուսակցությունը և հրահրում և նրա տեսորիստական և վոճրագործական ակտերը :

Դամասկոսում մեր կուսակցության և Կարմիր Ռուսության ընկերներն ամենի մի բանի համար ձերբակալվում և բանու են զրվում . ներկայումս 38 ընկեր բանուումն են : Միևնույն պատկերն են նաև Հալեպում, ուր այս որեւէս հակախմակերիսալիստական մեծ ցույց տեղի ունեցավ, վորին ամբողջ ժողովութզն եր մասնակցում, և վորին հաջորդեց ընկերներից 60-ի ձերբակալումը : Մի խոսքով՝ Սիրիայի բոլոր բանակերը լիքն են մեր ընկերներով . բանտապետները և ապահովության ազենները մեր ընկերների հետ ամենավայրենի կերպով են վարդվում, ծեծում, չարչարում են և հազար ու մի տեսակ տանջանքների յենթարկում, վորպեսզի նրանց ստիպեն խոստովանություններ անել և իրենց ընկերներին մատնել : Սակայն նրանք վոչ մի հաջողություն չեն ունեցել, և շատ հաճախ զնդանների խորքերից թնդացող ինտերնացիոնալն ու Կարմիր Սիրիայի մարզն են լսում :

Ընկերներ, բերկրանքով սպասում ենք «Մեծ գիշերվան» : Մենք հաջողություններ ունենում ենք և վատահ ենք, վոր հազ-

թանակելու յինք: Պրոլետարիատը բոլոր դժվարություններն ու խոչնղոտները պետք եւ վերացնի և խմանքի խստական, ֆաշիստական ու կազիտալիստական տեռորը հաղթահարի:

Կեցցե՛ Համաշխարհային կարմիր Հոկտեմբերը:

Կեցցե՛ ամբողջ աշխարհի բանվորությունն ու գյուղացիությունը:

Կեցցե՛ կոմունիստական կուսակցությունը և ամբողջ աշխարհի պրոլետարիատի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԸ:

Հեղափոխական բարեկերով

Միքայիլ կարմիր Ոգնության Կենտկոմ

## ՂՈՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՌԵԺԻՄԻ ԴԵՄ

Մենք՝ ներքո ստորագրողներս, մի շարք քաղաքանուարկութեալ-ների գատարաշտպաններս և իրավաբաններս, հասարակության լայն խավերին մամուլի միջոցով հայտնում ենք ի դիտություն հետեւյալ իրավանությունը:

Դումիթրի տաժանակիրների բանտում նրանք մեկուսացված և դրված են քարից, յերկաթից, ցեմենտից շինված կամերներում, վորոնք չեն տաքացվում, և այս պայմաններում դրսանքն ուրական ընդամենը մի ժամ և տեսում: Քաղաքանուարկությանների և իրենց աղդականների ջանքերով կազմակերպված հագուստի վերանորոգման ու այլ սեփական արհեստանոցները, և մեծամեծ զոհարերություններից հետո ձեռք բերած փոքրիկ դրադարաննը, վորտեղ նրանք զբաղվում եյին մտավոր և ձեռքի աշխատանքով, փակված են: Փակված են նաև նրանց կազմակերպած խոհանոցը: Բոլոր տեսակի թերթերն ու ամսադրերն արգելված են: Մնունդը խայտառակ վիճակում ե: Բանտարկյալը սովորականության դուռն և հասել: Հարազատների և բարեկամների բերած մթերքների և իրերի հանձնումը յերբեմն սահմանափակվում է, յերբեմն ել այդ մթերքներն ուղղակի խըլում են:

Բանտարկյալների մեծամասնությունը հիվանդանում և թոքախտով և այլ հիվանդություններով. քժչիական ունություն

Համարյա չկա, վորովհետեւ բժիշկն ամսական մի անդամ եւ միայն հիվանդանոց այցելում :

Դոլթանի բանտի բոլոր քաղբանտարկյալները, վոր ազատվում կամ նոր են ընդունվում, յերկաթե մուրճերով, կամ ձողերով ու այլ բաներով ծեծվում—արյունաշաղաղ են արվում. նըրանց շղթայակապում և գցում են իրենց բարեարոսությամբ հանրածանոթ՝ ցեմենտեհատակ սենյակը, վոր նախորոք ջրվում են: Այստեղ նըրանք մնում են առանց լույսի, ցուրտ տեղը, խայտառակ կեղտի մեջ, յերեմն ել՝ նույնիսկ առանց ուտելիքի: Մարդու առողջությունն ու զգեր քայլայող այս ռեժիմի դեմ չնչին բողոք անելու գեղքում քաղբանտարկյալները յենթարկվում են ամենալաժան պատիժների— ծեծից մինչև «մահվան» կամհրան ներառյալ: Կալանավորներից վոմանք խելադարվում են: Այուղայում, Սարու-Մարեյում, Յասանում, Քիշինեվում և այլ քաղաքներում ել նույն ռեժիմն են, յերբեմն նույնիսկ ավելի դժման:

Ռեժիմը դաժան և նաև կին բանտարկյալների վերաբերմամբ՝ Միսլեյում: Այն աննշան թեթեսությունները, վոր ծանր դոհարերություններից հետո, մասամբ ել հասարակական բողոքի հետեանքով են ձեռք բերված, կամ սահմանափակվում կամ վերացվում են և փոխարինվում ավելի դաժան ռեժիմով, ավելի մեծ անարխիայով:

Այս վայրագ ռեժիմի դեմ մենք մեր բողոքն ենք հայտնում և պահանջում ենք անհապաղ վերացնել այն:

Իրավաբաններ՝ վ. Գերասիմ,

Ս. Նիսուշեսկու

Պալել Մոսկվիցի

Պ. Գրոզդես

Մանոք.— Այս բողոքն միացել են նաև ռումինական իստելիգենցիայի 85 ներկայացուցիչ՝ գրողներ, թղթակիցներ, գեղարվեստագետներ, դերասաններ և իրավաբաններ:

Հրապարակված «Դիմինետա» լրագրի 1933 թ. դեկտ. 12-ի համարում:

## ԶՈՆՆԵՆՔՈՒՐԳԸ ՎԱՐԱԿԻ ՈՉԱԽ Ե

Յես մեկն եմ այն տասնյակի քաղցրանտարկլյալներից, վոր Դերմանիայումհիտլերյան ռեժիմ ստհմանելու որից տառապել եմ Փաշիստական բանտերի վանդակներում:

Յես յոթ ամիս Զոննենբուրգում (Ներմարկ) համակենտրոնացման ճամբարի բանտավորին զդեստ եմ հագել: Այս ճամբարի յերկտակ պատերի ներսը մոտ հազար քաղցրանտարկլյալ կա: Գերմանիայում Զոննենբուրգի մասին խոսելիս «Զոննենբուրգ դժոխք» ասելուց բացի, ուրիշ բան չեն կարողանում ասել: Շնորհիվ այն բանի, վոր պայմանները բացառիկ բարեհաջող ընթացք ունեյին, յես հաջողեցրի այնտեղից փախչել: Այս գրքում յես մի քանի եպիզոդ կապատեմ, վոր այդ դժոխքում եմ անցկացրել: Յես կը պատմեմ առանց վորեւ բան ավելացնելու և առանց գույն տալու, վորովհետեւ վոչ մի, նույնիսկ կատարելագործված, ֆանտազիա չի կարող մտածել այն, վոր այնտեղ և կատարվել և այժմ կատարվում ե: Յես հաճախ սարսափում եմ, յերբ հիշում եմ այն սարսափներն ու տանձանքները, վորոնց բանտարկյալներն են յենթարկվում, բայց փախուստիցս առաջ յես նրանց հանդիսավոր կերպով յերդվեցի, վոր ամբողջ Յեվրոպան, ամբողջ աշխարհը կը այն աղաղակները, վոր Զոննենբուրգի դժոխյալին բանտից են տարածվում:

Զոննենբուրգը յերկարատև կամ ցմահ դատապարտված քրեյտիկան հանցագործների բանան ե:

Անցյալ տարիները, յերբ բանտը ղեռես «Հահագործվում» եր, այդ «մեռյալ տան» մեջ հինգհարյուր վաթուուն հոգուց ավելի մեռան կամ անձնասպանություն գործեցին: Բանտին կպած գերեզմանոցը մարդկային վորդերգությունների կենդանի վկան ե: 1930 թ. Զոննենբուրգի բանտարկլյալների մեջ լուծ և դրիմ հիվանդությունների կատաղի համաձարակ եր ընկել, վոր խմելու ջրի վատորականության ու շենքի անտանելի խոնավության պատճառով եր առաջացել: Կառավարությունն ստիպված յեղալ բանը փակել: ուրիշ ճար չկար:

Վարակի այս բունը, այս հակասանիտարական, խոնավությունից ու կեղտից բորբոնած այս չենքը հիտլերյան կառա-

վարությունն ե ընտրել՝ համակենտրոնացման ճամբար պատրաս-  
տելով քաղքանտարկյալների՝ կոմունիստների, սոցիալ-դեմոկ-  
րատների, հակաֆաշիստների և հրեյանների համար։ Ըստ ճամբա-  
րի ղեկավար կազմի յեղակացության, խմելու ջուրն այնոեղ  
դեռ այժմ ել թունալոր ե, և բանտարկյալներին վճռականապես  
արգելված ե այդ ջուրը խմել։ Դժվար չի հասկանալ, թե ի՞նչ  
հրեշավոր բան ե այդ արգելը ճամբարում, վորտեղ հաղար հո-  
գի շաբաթներ, ամիսներ, կարող ե պատահել՝ նույնիսկ տարի-  
ներ պետք ե անցկացնեն։

## ԶՈՆՆԵՆԲՈՒԴ ԳԱԼԻ

Բանտարկյալների առաջին խումբը Զոննենբուրգ բերլից  
1933 թ. ապրիլին<sup>\*)</sup> բեռնատարներով ու վոստիկանական սայլե-  
րով վոստիկանության ու դրոհային ջոկատների հսկողությամբ։  
Ճանապարհին քաղքանտարկյալներն ստիպված ելին սայլերի մեջ  
յերկար ու ձիգ ժամեր կանգնել անձրևի հեղեղի տակ։

Ճամբար հասնելուն պես մեկեն սկսեցին առաջին ծաղրանք-  
ներն ու ռազմական վայրագ մարզանքը։

Բանտարկյալների հետեյալ խմբերը, վորոնց հետ նաև մե-  
րը, վոր նույնպես ապրիլին տեղ հասավ, յերկաթուղով բերլի-  
ցին։ Բեռլինի Շպանդաու Լերտերշտրասե, Ալեքսանդրպլաց և  
Պլյողենզեբեն բանտերից բանտարկյալները Սիլեզի կայրան ելին  
բերվել։ Յերբ մենք «կանաչ միննան»<sup>\*\*</sup>) թողինք, ամեն մեկին  
շլթայրակապ արին և ամեն մի «հանցագործիս» մոտ մի հատուկ  
պահակ դրին։ Այսպես շլթայրակապ՝ մենք կայրանից անցանք  
դեպի բանտի վագոնը։ Խուռ ու վշտացած տղամարդիկ և բան-  
վորուհի կանայք արտասուրքն աչքերին կանգնել ելին կայրա-  
նում։

Բանտի վագոնը փոքրիկ վանդակներից ե բաղկացած։ Ամեն  
մի վանդակի մեջ, իրար պինդ կպած, կարող են յերկու բան-  
տարկյալ կանգնել։ Այսպես զնացինք մենք մինչև Զոննենբուրգ,

<sup>\*)</sup> Բանտային ավտոմոբիլին տրված կոչում։

այդ դժոխքը, վորն ստիպեց բազմաթիվ գլուխներ սպասակել վորտեղ շատերն սպանվեցին կամ այլանդակվեցին:

Չոննենըուրդի կայարանում մեղ շրջապատեց համակենտրոնացման ճամբարի պահպանությունը (стража) — Փաշխտ դրոհայինների բութ ու վայրադ բանդան՝ լցրած կարարիններով, վոր նշան եյին բռնել: Վոստիկաններն ու գրոհայինները բղավում եյին.

— Կրունկները միասին, կոմունիստական կեղտոտ խոզեր Պատլիք, կանգնիր սրիկա:

Մեղ չորս-չորս կանոնեցրին ու դյուդի միջով տարան ճամբար:

Պահակապետը բղավում եր.

— Աղջային հիմն:

Շատերն այս հիմնը չդիմեցին: Առաջին հարվածները տեղացին: Հրացանների կոթերը բանտարկյալների մեջքերին զրոյանք եյին կատարում, բառնցքները ջարդում-դեմքերն արնլիկ եյին անում: Ով չեր կարողանում արագ մարդանքի քայլքով շարժվել, գրոհայիններից կամ պահնորդայիններից քացի յեր ուտում՝ տակն ամուր մեխեր խփած կոշիկներով: Զոննենբուրդի բնակչությունը լուռ եր: Վարադուրած լուսամուսներից մոայլ դեմքեր եյին յերևում:

Վերավորանքների, առտակների, հրացանների կոթերի հարվածների կարկտի տակի մեր ջոկատը վերջապես մտավ բանտի բակը: Խուզարկություններից հետո բանտարկյալներին հայտարարեցին, թե ով ուղում ե իր վիճակը թեթևացնել, իր աղջականներին պետք է դրի, մոր Զոննենբուրդում տեղի ունեցող ծեծերի ու տանջանքների մասին յեղած պատմությունները մտացածին են և սուտ: Խոկ ով այս բանը չի կատարի, մեղքն իր վեղը:

Բանտարկյալների առաջին խումբը շատ յերկար քնեց բաց հատակին, նույնիսկ առանց ծղոտի: Մի անգամ յերբ բանտարկյալներն ակսեցին քնելու համար բակից ծղոտ տանել իրենց բնակարանները — ահա այդ ժամանակ միջանցքները, սանդուղքներն ու բակը գրոհայիններով լցվեցին: Նրանք իրարից միմի

հետո հեռու տողաներ կազմեցին և բանտարկյալներին աթոռներով, յերկաթե տաքորեաներով և փայտե ու ռետինե ժահակներով ծեծեցին։ Ընկերներից շատերն այդ որն այն աստիճան այլանդակվեցին, վոր հարկ յեղավ փոխադրել բանտի՝ աչքաթող արած ու կեղտոտ հիվանդանոցը։ Այս առաջին տանջանքը մեխի պես ցցվեց Զոննենբուրգի բանտարկյալների հիշողության մեջ։ Բանտի լեղվով բանտարկյալներն այս տանջանքն անվանում են «առաջին ծղոտե վայլուր»։ Մոտենում եր Աղոլֆ Հիտլերի ծննդյան տոնավատարությունը։ Առավոտյան ժամը 5-ին և յերեկոյան ժամը 11-ին մեղ պոկում եյին մեր շարժական ժահակալներից կամ ծղոտ լցրած մեշոկներից և մենք ստիպված եյինք լինում մերկաչափիկ դիք կանոնել մեր անկողինների մոտ։ Կիսագրագետ մի դրույյին բարձրանում եր աթոռին և մեղ, վոր ցրտից առամներս չխկչխկում եյին, առվորեցնում եր աղղային հիմնի բառեր ու մեղեղիներ։ Այս դասերն անսահման սիրտ խառնելու, սիրտ թափելու աստիճան յերկար եյին տեսում։ Պահակապետն այդ ժամերին սենյակները պետք է սուր-գեր, և նրա ստորագրյալներն ամեն կերպ, շտապ-շտապ աշխատում եյին հաճոյանալ իշխանության։ Չե՞ վոր նրան դուք պետք ե դար «ժողովրդական կանցլեր Աղոլֆ Հիտլերի» ծննդյան տոնավայրաբության պատրաստվելու «բարեկամական միավորությունը»։ «Ի պատիվ Աղոլֆ Հիտլերի» արտասանած հանգիսավոր ճառի ժամանակ, վորով վերջանում եյին այդ դասերը, մի քանի վոստիկան ու դրույյին վիստում եյին քաղբանտարկյալների շաբքերի արանքներում և, վորսի շան լիես, ամեն մեկին տնտղում, վոր տեսնեն թե չծիծաղե՞ց արդյոք մեկն ու մեկը, ուսերը վեր չքաշե՞ց, կամ քիթ ու մոռւթը չհավաքե՞ց, յերբ ճառախոսը «ժողովրդական կանցլեր Հիտլերի» մասին եր խոսում կամ հայտարարում, թե՝ Հիտլերը հաց և աշխատանք կտա»։

Բաղմաղանության համար, հենց սկզբի յերեկոները կամերից կամեր լուրեր եյին տարածվում՝ «Վաղը առավոտյան 4-ին դնդակահարելու յեն յուրաքանչյուր տասերորդ բանտարկյալին»։ Առավոտյան բանտարկյալները, յերկար ու անքուն գիշերներից տանջված, շինությունից դուրս եյին վանդպում, և

սկսվում ելին այն տանջանքները, վոր առաջին որերից հիմք են հանդիսանում Զոննենբուրգի դաժան, ծաղրող ուժիմի, այն ե՝ «պառկիր, կանդնիր»-ը, «պառկիր, կանդնիր»-ը (բանտարկյալները կայծակի արագությամբ պետք ե կատարեն այս հրամանը—վորի վրա ընկնեն դետին ու կանդնեն պատվի առած) :

## ԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԱՍՏԻՃԱՆ Ո.ԶՄԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս դաժան ուժիմը, ինկիզիտորների տեսակետից, բանտարկյալներին պետք է սանձի ու բարոյալքի, նրանց մեջ խեղդիքի դիմադրության բոլոր ձգտումները։ Բանտարկյալների առաջին խմբի վկին փաթաթած ուղղմական վարժություններն այն աստիճան տանջալի ելին, վոր ընկերներից շատերը հոգնածությունից ուշաթափում ելին։ Վարժությունների արանքում անլերջ կրկնվում եր այս հրամանը։

— Մարզանքի քայլքով, մա՛րչ։

Մազմական խստավարժությունն այնքան եր տեսամ, մինչև վոր տասնյակ բանտարկյալներ դիտակցությունը կորցնում ելին։ Քաղբանտարկյալներին մի քանի ամիս շարունակ ստիպում ելին աշխաղի ու ցեխի մեջ սեփական հագուստով թափալել, վոր շուտով դարձուն ցնցութիներ, և յերկարատև բողոքներից հետո միայն բոլորիս կոչտ գործվածքից հագուստ տիին։

## ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐՆ ԻՐԵՆՔ ԵՆ ԻՐԵՆՑ

### ԳԵՐԵԶՄԱՆ ՓՈՐՈՒՄ

Զոննենբուրգ ճամբար զնալու առաջին որերից կոմունիստները, ճախ փաստաբաններն ու հակաֆաշիստներն անլուր տանջանքների ելին յենթարկվում։

Առանձնապես տառապում ելին նախկին կոմունիստ պատգամավորներ՝ Շնելլերը, Կասպերն ու Որովխը, Երրիխ Մյուզամը, Փաստաբան Լիտգենն ու գրող Ռիցեկին։ Որինակ՝ Երևան Շնելլերին իր կամերում հաճախ այնքան ելին ծեծում, վոր դիտակցությունը կորցնում եր։

Ծեծելու ժամանակ նրան ստիպում ելին հարվածները համբել։

Բայց Փաշիստներն ամենից շատ ծաղրում ելին կոմունիստական Փրակցիայի նախկին նախադարձ Վելիկ Կասպերին, վորին

վորոշել եյին կենդանի բաց չթողնել Զոննենբուրգից : Հրեյա  
Ռուբելի Բերնշտեյնին այնքան եյին ծեծել, վոր յերկար ժամա-  
նակ ու խոր վերքերով պառկած եր Բեռլինի քաղաքային հի-  
վանդանոցում : Հոչակավոր գրող Երրիխ Մյուլամը մշտական  
թշնամանքի ու ծաղրանքի առարկան եր : Նրա մազերը քաշում  
եյին ու միբուքը պոկոտում : Նա և Ոսիցկին Զոննենբուրգ բեր-  
վեցին արդեն սարսափելի վիճակում : Մայիսի լույս 17-ի գի-  
շերն Երրիխ Մյուլամին իր կամերում դարձյալ տանջում եյին :  
Հաջորդ որը նրան ճանաչել անկարելի յեր : Նա պառկած եր  
հիմանդրանոցում և չեր կարողանում բերանը բանալ, վոր գոնե  
մի խոսք ասեր :

Այս բոլոր տանջանքները ճամբարապետ լեյտենանտ Պետե-  
լերի ղեկավարությամբ եյին տեղի ունենում : Առլրիլին փաստա-  
բան Լիտտենը, Վիլլի Կասպերը, Երնստ Շնելլերն ու Երրիխ  
Մյուլամն\*) արևմտյան կորպուսի պատի յերկարությամբ ի-  
րենց համար դերեզման պետք է փորեյին : Բոլոր բանտարկյալ-  
ներին չարք եյին կանգնեցրել կորպուսի բակում և ստիպում  
եյին նայել, թե ինչպիսի վայրագությամբ են ծեծում ու տան-  
ջում իրենց չորս ընկերոջը : Նրանց գնդակահարելուց առաջ,  
վերջին բոլեյին մեջ մտավ ինչ վոր մեկի կողմից նախազգուշաց-  
ված մի վոստիկան և «դաղանությունների դեմ մղվող կամպա-  
նիայի» նոր ալիքը յերկը լինդերությունը խանդարեց գնդակահարությունը :

Վոստիկաններից մեկը նկարել եր այն տեսարանը, յերբ  
չորս բանտարկյալ Զոննենբուրգի բակում իրենց համար գերեզ-  
ման եյին փորում : Ինչպես հետո լմացանք, լուսանկարի թի-  
թեղը վարչական կարդով գրավված ե յեղել, «վոր արտասահ-  
մանում հարձակումների տեղիք չտրովի» :

Զոննենբուրգում բաղմաթիվ բժիշկներ, փաստաբաններ,  
լրագրողներ, գրողներ ու պարլամենտի նախկին անդամներ  
կան, վորոնց հետ ամենավայրենի ձեռվ են վարվում : Այսուղ  
են՝ «Վելորյունե»-յի նախկին հրատարակիչ Ֆոն-Ռուցկին, Բեն-  
յումեն և Երվին Մյուլեր բժիշկները, տառնյակ կոմունիստ

\*) Ներկայումս թերթերը լուրեր են բերել Երրիխ Մյուլամի «ինքնապա-  
նության» մասին : Ակներեւ ե, վոր քաղբանտարկյալն զազիր ինքնադատաստան  
անելու մի փաստ եւ ունենք :

պատգամավորներ, սոցիալ-դեմոկրատ շարքայիններ, Ռայխը-  
տադի, Լանդտադի ու քաղաքային խորհրդի ներկայացուցիչ-  
ները.

Այս ընկերներին տանջելու վորձված միջոցը «Հարցաքնու-  
թյան կանչելն» էր: Որինակ՝ նրանց հարցնում եյին.

— Դու դեռ կոմունիստ ես:

Յեթե հարցաքննվողը «այս» պատասխան էր տալիս, ապատակ-  
ներն ու մահակի հարվածներն անձրեւ պես տեղում եյին նրա  
դիմութին:

— Վո՞նց թե, խոզ, դու դեռ կոմունիստ ես:

Յեթե հարցաքննվողը «վոչ» պատասխան էր տալիս, նա  
ել նույնն էր ստանում: Նրա վրա բոռնցքներով եյին հարձակ-  
վում ու վոտքերի տակ տրորում:

— Վո՞նց թե, սրբ'կա, քաջություն չունե՞ս խոստովանելու,  
վոր կոմունիստ ես:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻԶՆԱԴԱՐԸ

Չոննենբուրդի վայրադ ուժիմի պատմությունն ամենավայ-  
րադ գլուխոն ե այն տանջանքների ու սիստեմատիկ չարչարանք-  
ների, վրոնց յինթարկվում են բոլոր նորեկները:

Ամենասարսափելին այն ե, վոր ետոր տանջանքները (վո-  
րոշ ծրագրի մեջ են մտցված, վաղորոք մշակված սիստեմով են  
հաջորդում): Չոննենբուրդի պարեան այս տանջանքների համար  
Արևելյան և Արևմտյան կորպուսների նկուղներում հատուկ տե-  
ղեր ե նշանակիլ: Բանտարկյալներն այս տեղերի անունը դրել  
են «չարչարանքի կամերներ»: Ամեն մի նորեկ ժամանակակից  
ինկիցիցիալի այդ կամերաներում յերկու կամ յերեք շարաթ  
պիտի անցկացնի, նախքան հուսալը, թե կարող ե «նորմալ» կա-  
մեր կամ հանրակացարան փոխադրվել: Որական հինգ, տաս,  
շատ անդամ՝ յերեսուն նորեկ են ուղարկում «չարչարանքի կա-  
մերներ»:

Մարդկանց Չոննենբուրդ առողջ են բերում: Մի քանի բո-  
պեյից հետո բանտի բակով նրանց այնպես են քշում, կարծես  
կատաղած շուն լինեն:

Քացիներն ու բոռնցքներն անդադար տեղում են: Յերբ մար-  
դիկ վերջնականապես ուժապառ են լինում ու ընկնում, քարշ

են տալիս կարցեր : Յերկաթե ճիպոտներով , մահակներով , հրացանի կոթով , բռունցքներով այնտեղ այդ մարդկանց այնքան են ծեծում , մինչև վոր ականջներից ու քթից արյուն ե գալիս , մինչև վոր խոր վերքերը ծածկում են նրանց գլուխը , ուսերն ու մեջքը : Հետո դահիճները թողնում գնում են : Միասմանակից հետո , յերբ բանտարկյալները մի քիչ ուշքի յեն գալիս ե արդեն կարող են վոտքի վրա կանզնել , նրանց պահեստ են տանում ու կոշտ կտորից՝ կալանավորի խալաթ հաղցնում : Յեվ ահա այն մարդիկ , վոր չեյին յերեակայում թե իրենց ինչ ե սպասում ե վոտք եյին դրել Զոնաներբուրդի գժոխային շեմքն առողջ ու ամրակաղմ , բակի միջով նորից գնում են իրենց կամերաները : Այժմ նրանք վոտքի վրա հաղիվ են կանզնում : Փոս ընկած աշքեր , արյունախեղդ դեմքեր , գլմին՝ խուրձով պոկած մազերի հետքեր :

Եերեկոյան ուաղմական ուսուցումն ե սկսվում : Նրանց չորս չորս սյունաշարքի յեն կանզնեցնում : Լավում ե ականջ ծակող հրամանը .

— Ո՞ւ-դի՛դ—թո՛-դե՛ք—

Հետո այդ ուժասպառ մարդկանց ստիպում են մարդանքի քայլքով վաղել բանտի բակի շուրջը : Պարետը վորոտում ե .

— Պա՛ռ-կի՛ր : Կա՛նզ-նի՛ր :

Հարյուր-հազար անդամ ստիպված ես լինում ոլառկել գետնին ու վեր կենալ : Հետո՝ նորից մարդանքի քայլք : Առաջին դոհերը վայր են ընկնում ուժասպառ : Բակն արյունը բռնել ե :

— Կա՛նզ-նի՛ր , — բղավում ե Փաշիստական յենթասպան դիտակցությանը կորցրած բանտարկյալների վրա : — Կա՛նզ-նի՛ր , խոզի մոռութ :

Ու յերկաթե գամերով պայտած կոչիկն անխնառ իջնում ե պատկածի մարմնին : Վերջինս կյանքի նշանները չի կորցնում , և հրամանատարը գոռում է .

— Ծորակի տա՛կ :

Չորս բանտարկյալ վերցնում են գիտակցությունը կորցրած ընկերոջն ու տանում ծորակի տակ : Չուրը խիում ե աշքին ու յերեսին , մարմնին , բերանն ու ականջներն ե լցնում , և առաջ ե դալիս ցնցող հազ : Մի քանի բոպեյից հետո , յերբ թշվառն աշքերը բաց ե անում , հրամանը նորից ե լսվում :

— կա՞նդ-նի՛ր : Մարզանքի քայլքով մա՛րդ :

Ու նորից .

— Պա՛ռ-կի՛ր : Կա՞նդ-նի՛ր :

Ելի մի քանի բոպե, և բանտարկյալը նորից ուշաթափ վայր է ընկնում և քարերին խփելով՝ արյունալիկ դառնում : Նրանց նորից են քարչ տալիս ծորակի տակ : Զուբը շռում է : Շրիկացնելով, թափահարելով, ձեռքերը ձիդ տալով՝ զոհին նորից են ուշքի բերում : Յեվ այսպես այնքան եւ տեսում, մինչև վոր դահիճները մարդկային տանջանքներից կշտանում են, այնուհետև ծվեն-ծվեն արած բանտարկյալներին տանում են կամերաները : Բայց այս դեռ վերջը չի : Զարչարնքի գիշերն եւ սկսվում : Այս առաջին գիշերը բանտարկյալներն ամենից շատ վճռում են ինքնասպանություն գործել, միայն թե տանջանքներ այևս չքաշեն :

Մի քանի որինակներ ես, վոր ապացուցում են, թե Փաշիստ դահիճներն ի՞նչ վայրագությունների յեն ընդունակ :

Բանտարկյալները ծալապատիկ այնքան պետք ենստեն դղանցքի առաջ, վորից սառ քամի յե փչում, մինչև վոր նրանց հողերը վերջնականապես վայտանան : Այս անդամ նրանց ստիպում են գործի պես ցատկուել : Յեվ զոհերը, վորոնց հողերը ցրտից ու լարվածությունից այլևս չեն ծալվում, հենց առաջին ցատկելուց ընկնում են հատակին ու գլուխները ջարդում :

Պահնորդ՝ դահիճ Աբրիանն ու իր կամակատարները հաճախ են վազ տվել հիվանդանոց՝ ասեղի : Այդ սաեղները նրանք ճիշտում եյին ողանցքի առաջ ծալապատիկ նստած կամ բակում ցատկուող մարդկանց մեջքը, փորն ու սեռական անդամները : Այս չարչարանքների ժամանակ բանտարկյալների ճիշն ու տնօրոցները համբարի սահմաններից շատ հեռու եյին գնում : Կարելի յի, թերիս, ասել, վոր ուշաթափությունների ու վիրավորվելու մեծ մասը հենց այդ տանջանքների արդյունքն է :

Հոչակավոր «մարզանքի քայլքի» ու «պառկիր, կանգնիր»-ի ժամանակ շատ անդամ վեց-յոթ բանտարկյալ բոլորովին ուշաթափ՝ գետին եյին գլորվում : Յրտնած, տաքացած՝ նրանք 20-30-ական բոպե պառկում եյին սառն ու խոնավ քարերին : Ոիստ և խիստ արդելվում եր ուշադրություն դարձնել այդ «սիմուլյանտներին» : Յեվ մենք հաճախ ականատես ենք յեղել այն ներկաւ-

յացումներին, վոր նույնիսկ նորմալ մարդու յերեակայությունն անդամ չեր կարող պատկերացնել:

Բանտարկյալները զույգ-զույգ պետք ե չորեքթաթ կանգնել-լին: Յուրաքանչյուր զույգի մեջքին մի ուշաթափված ընկեր ե-լին դնում: «Դեպի առաջ մարշ» հրամանը տալուն պես նրանք չորեքթաթ պետք ե սողային բանտի ամբողջ բակով, և այն զույգը, վոր մյուսներից շուտ եր հասնում բանտի սպատին, «Հա-տուցում» եր ատանում. այդ որը նրան արձառում ելին հետազա-ժամկանքից ու խստավարժությունից:

### ՅԵՐԵՔ ՀՐԵՅԱ. ՍՏԻՓԱԾ ԵՆ ԽՆԳԱԾԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼ

Սեպտեմբերին մի քանի պահնորդ ու ժանդարմ հանդիսավոր կերպով Զոննենբուրդ քարշ տվին մի հրեայի՝ իր յերկու տղայի հետ: Հայրը մոտ հիսուն տարեկան եր, մեծ տղան՝ մոտ յերե-սուն, փոքրը՝ քսան: Գրոհայինների մեջ կայծակի արագու-թյամբ լուրը տարածվեց՝ «Յերեք ՀՀուդ իսուլ են յեկել»:

— Հիմա մենք նրանց հաշեիլը կքաշենք, — հրճվում ելին Փաշիստները: Հրեային ու իր տղաներին սկզբից տարանց ման բաժին: Պատահմամբ այնտեղ ներկա յեղող բանտարկյալնե-րը լոել ելին, թե ինչպես են «Զոննենբուրդի լավ-լաւի բանտերից շատ բան» խոստացել նրանց: Բանտարկյալներն արևելյան կոր-պուսի բակից տեսել ելին, թե հետո յերեք հոգու ինչպես տա-րան այդ կորպուսի կարցերը: Յերեքն ել միանդտմայն առողջ ու անդինաս ելին:

Բայց մի քանի ակնթարթից հետո արևելյան կորպուսի նկու-ղից ճիշեր ու ողնության աղաղակներ լավեցին: Մի խումբ պահ-նորդ՝ ուետինե մահակներով ու յերկաթե ճիպուններով դինված, Արքիանի գլխավորությամբ՝ դնացին դեպի մենարան կարցեր-ները, վորտեղ յերեք հրեյա ելին: Ներածական ինկլիպիցիան-եր սկսվում այդ: Զնայած՝ դոները սկինդ փակ ելին թշվառների ձիչն ամբողջ արևելյան կորպուսում ու բակում լավում եր և հի-վանդանոց ու հյուսիսային կորպուս եր հասնում:

Միառժամանակ հետո նրանց ստխպեցին պահեստ գնալ և հաղուստ, աման ու անկողին ստանալ: Բայց հայրն արդեն վիրավոր՝ պառկած եր իր կամերի հատակին ու նույնիսկ չեր կարողանում շարժվել, ել ո՞ւր մնաց, վոր տրված հրամանը կատարեր:

Իրերը պետք եւ բերվեյին նրան: Յերկու տղան, ծեծված-ջարդված, գլուխներն, աչք ու յերեսներն ու մեջքներն արնաշաղախ վերքերով պատած, աչք ու յերեսներն այն աստիճան ուսած, վոր նույնիսկ մի ժամ առաջ տեսնողները չկարողացան հանաչել, յերերալով անցան բակի միջով:

Յերեկոյան մի արսափելի տեսարան տեղի ունեցավ: Ժամի 8-ին, չնայած սարսափելի դրության, թշվառ հրեյաներին քարշալով բերին բակին ու ստիպեցին մյուս «նորեկների» հետ միասին «մարդանք» կատարել: Երանց ստիպում եյին դժի պես՝ մարդանքի քայլքով վագել բակի շուրջը: Արրիանն ու իր կամակատարները բողոնցքով ու մահակով խփելով՝ քշում եյին յետ մնացողներին: Անվերջ լսվում եր «Պառկի՛ր, կանոնի՛ր» հրամանը, վոր Աբրիանը նաև համեմում եր հրեյաների հասցեյին ուղղած հայհոյանքներով ու վիրավորանքներով:

— Կեղասո՛տ խողի ջուղ, գու քրիստոնյա տղաների յես սարանել: Ու-Ռ՛ւ, ջո՛ուղ շանվորդի: Դու գերմանացի բանվորներին մատանել ես:

Ուշաթափությունները չուտով ակսվեցին: Հրեյաներին, վոր դիտակցությունը կորցրած՝ գետին եյին թափվել, քարշ տվին ծորակի տակ: Շորերով ու լուսնամաններով նրանց դրին ծորակի տակ: Արրիանը սեփական ձեռքով նրանց բուժում եր ապտակներով ու կամթոցով: Հենց վոր նրանք աչքերը բաց արին, դահիճը հրճվեց:

— Տեսնո՞ւմ եք, ջուղներն արդեն առողջ են:

Ու նորից լսվեց հրամանը:

— Շա՛ր-քի՛: Մարդանքի քայլքով մա՛րշ առաջ:

Թշվառները դլորվելով մի քանի տասնյակ քայլ ել քարշ յեղան, ու նորից ուշաթափություն, նորից ապտակներ, կամթոց, ջուր, և այսպես առնվազն հինգ-վեց անդամ:

Այդ որից առաջին անդամ մի չարչարանք ել գործ դրվեց,

վոր հետապայում հաճախ կիրառվում եր . Փաշխատներն սկսեցին մյուս բանտարկյալներին ստիպել , վոր հրեյաներին ծեծեն : Ով փորձեց հրաժարվել , դաժան կերպով ծեծվեց : Թեև հետապայում այս սիստեմը հաճախ եր կիրառվում , բայց պարզանքով կարելի յեր ասել , վոր բացի ճամբարի քրեյական տարրերից վոչ վոք այդ սիստեմին չեր մասնակցում :

Կոմունիստ բանտարկյալներին հաճախ ծեծում — կիսամեռ ելին դարձնում ու դցում արևելյան կորպուսի կարգերները , բայց քաղբանտարկյալներից վոչ վոք իր ընկերոջը չափեց : Կալանավորված հրեյաներն ու մյուս բոլորը ժամ ու կես կամ յերկուժամ չարչարանքից հետո վերադարձան իրենց կամերները , և այն ժամանակ միայն Փաշխատների վայրադությունն սկսեց իր գագաթնակետին հասնել : Յերբ արևելյան կորպուսի կամերներից ճրադրները հանդցրին , մի քանի պահնորդ խուժեցին կրտսեր հրեայի կամերը : Աննկարագրելի տանջանքներից ու կտտանքներից հետո , սարդիստական վանող տեսարաններից հետո պահնորդներից քանդան վերադարձակը դցեց պատանու դլի՛ին ու «Գերմանական ազգի հերոսները» Յերրորդ կայսրության «կուլտուրայի պիտոններները» բունակության թշվառին : Նույն որը հայրն ու յերկու վորդին փորձեցին վերջ տալ իրենց : Առաջինը փորձեց կախվել , իսկ վերջինները՝ իրենց յերակները կտրել : Նրանց խանդարեցին վերջին ըոսելին : Հաջորդ առավոտը Զոննենբուրդի վողջ բնակչությունն արդեն գիտեր անցյալ դիշեր տեղի ունեցած անցքերը : Այս լուրերը գրոհայիններն եյին տարածել , վոր թունդ ատում եյին իրենց «սև յեղբայրներին» , վորոնք իրենց մոտ կոնտրոլ են դրված :

Նույն առավոտ հիվանդանոցի պետը՝ պահնորդը , վորք պարտականությունների մեջ և մտնում բանտարկյալների տառապահները թեթևացնելը , պետք և զբաղվեր հրեյաներով : Նրանք բերին այն մարդու մեղք , վոր ամենավայրագ կերպով եր բըդ-կրտված : Յինիկորեն ժպտալով՝ հաշիշ ծխողի աչքեր ունեցող այդ գասարը (մսագործ) ատամների արանքից ճրաց :

— Մեղի մեջ վոչ պակաս քան 25 տոկոս արյուն կար :

Բանդաներն իրենց նպատակին հասել եյին : Պատանի հրեայի յերիկամունքներն ամբողջովին ջնջմալ եյին : Մինչև իր կյանքի վերջը նա հաշմանդամ դարձավ :

1933 թ. ոգոստոսի 10-ին մի քանի սոցիալ-դեմոկրատ բանվորին Զոննենբուրդ : Հենց նույն յերեկոյան ել սկսվեցին նորեկների համար ծրագրով նախատեսնված չարչարանները :

Չարչարավողների սիրո կրծող ճիշերը բանտի ամբողջ բակը լցրել եյին : Այդ ժամանակ դվամավոր դահիճը Ողերի Փրանկ-Փուրտցի հոչակավոր պահորդ Մակս Մյուլերն եր :

Արյունակալած աչքերով նա որեցոր հետեւում եր, թե բանտարկյալներն ի՞նչպես են ուժից ընկնում, և հրճվում եր իր զռհերի ցալից առաջացող հչողներից : Բանտարկյալներից մեկը, 40 տարեկան սոցիալ-դեմոկրատ մի բանվոր, բացառիկ դաժան տանջանքների յենթարկվեց : Հետեւյալ առավոտ սոցիալ-դեմոկրատ բանվորին կախված դուան արևելյան կորպուսի իր կամերում, վորտեղ նա բանտարկված եր: Վոչ այս դեպքում, վոչ ել նախորդներում, ընկածի վրա բժշկական քննություն չկատարվեց : Այդ ժամանակ ակսվեց պահորդային ջոկատների արձակումը: Մակս-Մյուլերն ուղղում եր անլուր դաժանություններով իրեն ապահովել արձակումից այնպիսի մի շնորհագիր ստանալ, վոր հնարավորություն տար տեղափոխվել հանրային ապահովության ջոկատը: Այս պատճառով՝ դաժանությունների ու ծաղրանքների նոր ալիք անցավ ամբողջ ճամբարով, բայց այդ որերը գրոհայինների ու պահորդների մեջ մենք առաջին անդամ մի քանի մարդ տեսանք, վոր մի տեսակ աշխատում եյին քաղըանտարկյալներին ողնել և իրենց ընկերների դաժանություններից զայրանում եյին: Այս գրքում նրանց անունները չեն կարող գրվել, բայց դեպի այդ մարդիկ ունեցած գոհանակությունն ինքը միշտ կմնա բանտարկյալների սրտում:

ԳՐՈՀԱՅԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄՄԵԼՆ ՈՒ ՎՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ  
ՔՐԵՅԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐ

Դժվար ե յերեակայել, թե ինչ հանցագործ տիպեր կան թագնված գրոհայինների տարաղի մեջ: Դժվար ե յերեակայել,

թե ումն եր վստահված Զոննանբուրդի ճամբարի ղեկալարության հսկողության գործը: Ամենից առաջ գրոհայինների ղեկավար Համմելը ճամբարի վորոշ տեսակի փոխապարետ եր: Նա յերբ նորոգումների մի փոքրիկ արհեստանոց ուներ, գեռ այն ժամանակ նրան մեղաղբանք եր առաջարկված յեղել ղրամական վաստաթթերի վրա ստորագրությունները կեղծելու համար:

Ճամբար նշանակվելով՝ նա ելի նույն բանով եր պարապում, դրամական գումարներ եր տակնաթաղ անում, չեքեր, ստորագրություններ եր կեղծում: Այս վաստաթթերից մեկը բանտարիլյալները պատահարար տեսել եյին: Այս բոլոր բաներին խառն եր նաև պարետ Բրյունինդը, բայց այդ նրան չեր խանդարում Համմելին իրեն ողնական պահել իրեն:

Սրբիանը՝ գրոհայինների նախկին ղեկավարը, վոր հիմա իջեցված և շարքային գրոհայինի պաշտոնի, այն Սրբիանը, վոր վեռ անցյալ տարի հոկտեմբերին Զոննենբուրդի զլիսավոր դահիձն եր— ահա այդ մարդը Համմերչտեյնի համակենտրոնացման ճամբարի տեսուչ եր: Նա Զոննենբուրդ եր փոխադրված այն պատճառով, վոր այնպիսի սպանություններով ու դադանություններով եր անուն հանել, վոր Փաշխոտական ճամբարի պատերն անողամ չելին կարող թագցնել:

Ճամբարի պարետի ողնական, վոստիկանության բրիգադիր Վազները մեղաղբառում եր քայլականին կեղտոտ մի գործի մեջ: Հուլիսի 31-ին գնալիս նա հետը տանում է այն դրամմերը, վոր պարետության դրամարկղ պետք է հանձնվեյին: Հոկտեմբերին ղեռ հայտնի չեր, թե նա այդ փողերը վերադարձրե՞լ ե, թե վոչ:

Մի գրոհայինից, վոր նոր եր յեղել ճամբար, բանտարկյալներից մի քանիսն խմացան, թե ինչ հանցաղործ տիպեր կան պահնորդների ու գրոհայինների մեջ, ումն է վստահված հակաՓաշխոտների զինյալ պահպանության գործը: Այդ գրոհայինը մեղ պատմեց, վոր «կարդի արժանալոր պահապանների» մեջ մեծ թվով հին հանցաղորդներ կան, վոր Զոննենբուրդում բանտարկյած են յեղել: Պահնորդները, վոր ապրիլին եյին Զոննենբուրդ յեկել, շատ շուտով ըքաղաքատվեցին Զոննենբուրդ ավանի վողջ բնակչության լուռ ատելությամբ: Բնակչությանը, մանա-

վանդ յերիտասարդ կանանց, ահարեկելու գործում վոստիկանությունն ու պահնորդներն իրար դեմ մըցում եյին: Մինչև ամռան վերջը յերիտասարդ կանանց բռնաբարելու շատ դեպքեր յեղան:

Այդ ժամանակամիջոցում պահնորդների մեջ մեկը կար, վոր առանձին դաժանությամբ եր աչքի ընկել՝ «պատերազմի հերոս» եր, առաջին կարգի յերկաթե շքանշանով եր պարզեատրված:

Մի անգամ թունդ հարբած՝ նա կարաբինն առավ— պայթուցիկ գնդակներ լցրեց ու սկսեց վրակել դեսպի պահպանության շենքի առաստաղը: Գնդակն առաստաղը ծակեց անցավ և տեղն ու տեղն սպանեց վերեկի կամերում յեղած բանտարկյալին: Այս բանից հետո «պատերազմի հերոսը» դնաց արևելյան կորպուսը, այնտեղից դուրս քաշեց չորս քաղաքանտարկյալի և սկսեց սովորական մարզանքը՝ «կանդիր, պառկիր»—ը:

Այս վարժությունը սուր քարերի վրա յեր կառարվում, և յեթե վերջին բոպեյին մի վոստիկան կամացուկ չհանդստացներ «հրճված» պահնորդին, հավանական և, վոր նա տեղն ու տեղը վերջ տար իր դոհին:

## «ՓԱԽՉԵԼՈՒ ՓՈՐՉ ԱՆԵԼԻՍ» ԳՆԴԱԿԱՀԱՐՎԵԼ Ե

Ամռան մի դիշեր արևմտյան կորպուսի բանտարկյալներին հանկարծ արթնացնում են: Գրոհայինների բանդան գոռում գոշումով խուժում ե մի կամեր: Ոգնության աղաղակներն ամբողջ շենքը բռնեցին:

— Վոչ, չեմ դա: Դուք ուզում եք ինձ դնդակահարեք:

Ընկերոջը կամերից զոռով դուրս քաշեցին, հետո դրոհայինները նրա հետ միասին կորան մթության մեջ: Բանտարկյալները, վոր իրենց կամերների լուսամուտներից տենդագին կերպով հետեւում եյին ընկերոջը, մի առ ժամանակ դեռ ձայներ լսում եյին, հետո ամեն ինչ լուց: Մոտ կես ժամից հետո հեռվից մի քանի խուլ կրակոցի ձայն լսվեց: Կրակոցները լիմրից անտառից եյին գալիս: Յել նորից մեռելային լուսություն տիրեց: Բանտարկյալները յերկու որ այս դործի մասին բան չլսեցին: Այնուհետեւ լույս տեսան «Անդրիֆ»-ն և «Ֆելիչե

Բեռախտեր»—ը\*) և մեծ-մեծ վերնագրերով նորություններ հրապարակեցին. «գրոհայինները պարզել են, վոր «կարմէր ճակատի» գործիչները մարդասպաններ են; Մի կոմունիստ փախչելու փորձ անելիս գնդակահարվել ե»: Այս թերթերից մենք իմացանք, վոր մի ուրիշ բանտարկյալ, Մեղերիցիայից, վորը մեղադրվում եր, վոր իրը թե մի քանի տարի առաջ մի գրոհային և սպանել, «հարցաքննության» և յենթարկված յեղել այն ժամանակ, յերբ կամերից դուրս ելին քաշում այն ընկերոջը, վորի մասին վերն ասացինք: Ճամբարից նրանց միասին են դուրս հանել: Մեղերիցայի բանտարկյալն իսկույն գնդակահարվում և «դեպի Լիմրից անտառը փախչելու փորձ անելիս»: Արևմտյան կորպուսի բանտարկյալը ծանր վիրավորվում ե: Շամբուտից հեռու, վորի մոտ գնդակահարությունը տեղի յին ունենում, այդ բանտարկյալն ընկնում ե ջուրը, և գրոհայինները թողնում հեռանում են, կարծելով, թե նա ել կորավ: Մյուս որը՝ թշվառն, արյունաքամ լինելով, չոքեչոք յեկավ Զոննենբուրգի հիվանդանոցը: Յերբ գրոհայիններն այս բանն իմացան, հայտարարեցին, թե միենույն և «նրա հետ շուտով իրենց հաշիվը կտեսնեն»: Հայտնի չե, թե նա ուր կորավ: Բայ յերեսութին այդ գաղանելը նրան վերջ տվին: Այս գեղքից մի քանի շաբաթ առաջ Ռդերի Ֆրանկֆուրտի ու Ֆյուրտանլալտի թերթերը հայտնեցին, թե յերեք «ակտիվ» կոմունիստ են ձերբակալված: Գրոհայինները հրճվանքից ձեռքերը շփում եյին.

— Ոխա՛յ, ոխա՛յ, — ասում եյին նրանք — թող հլա մի դա՞ն:

Հաջորդ որը գերմանական վողջ մամուլը հայտարարեց, վոր յերեք կոմունիստ, Զոննենբուրգի փոխադրվելու ժամանակ, «փախչելու փորձ անելիս» գնդակահարվել են:

### «ՀԱՅ ՈՒ ԶՐՈՎ, ՄՈՒԹ ԿԱՐՑԵՐ»

Վորովհետեւ Փաշիստները ուսղմական խստալարժություններով, կարցերով, ծեծով ու տանջանքներով չեն կարողանում

\* ) «Անդրիֆ» և «Ֆելկիշե Բեռախտեր»—Փաշիստական թերթերի անուններ են:

կոլիսել իրենց բանտարկյալների հեղափոխական համոզմունքները, ուստի ամեն կերպ փորձում են իմանալ՝ բանտարկյալներներար հետ հեղափոխական թեմայից խոսում են, թե վոչ, կամ ի՞նչպես են նրանք հաջողացնում այդ:

Մենք պարծանքով կարող ենք արձանագրել, վոր Զոննենբուրդի այդ աշուղին թվով բանտարկյալներից միայն հատ ու կենտ մարդիկ կային, վոր Փաշխտների կառթն եյին ընկել ու իրենց ընկերներին մատնում եյին: Բայց և այնպես այսպիսի դեղքեր կային:

Առաջին մատնիչը դուրս յեկավ սոցիալ-դեմոկրատական վոստիկանության նախկին տեսուչը, վոր կենտրոնական կորպորատիվի իր կամերի պլրավակատոր եր: Ինքը՝ քաղաքանուարկյալ լինելով՝ հետամուտ եր լինում իր ընկերներին և ամեն մի դատարկ բանի համար հայտնում իշխանության: Ամեն մի մաղաշախի հանցանքի համար մատնված ընկերները կարցեր եյին ընկնում կամ չարչարանքի կամերում տաջանքների յենթարկվում: Բանտարկյալներից մեկն ասաց, թե Հերելսը լավ ճառախոս չի, մյուսը, թե՝ Հիտլերը յերկար չի մնա իշխանության դլուխ, իսկ յերրորդը՝ թե լագերում տված սնունդը նույնիոկ խողերի համար ել անպետք ե: Յերեքով ել սոցիալ-դեմոկրատի մատնությամբ կարցեր դրվեցին:

Ի՞նչ բան ե պատժի այս տեսակը: Բանտարկյալին դնում են բացարձակ մութ կամեր՝ ցամաք հացով ու ջրով: Բանտարկյալը չորս որ մի անգամ ե միայն մի քիչ տաք ջուր ստանում, վորի միջին յերկու կարտոլ ե լող տալիս, և վորը գրոհայինների լեզվով սուպ անունն ե կրօւմ: Խիստ արգելվում ե հատակին նստել, կոկ կամերում սեղան-աթոռ չկան: Արդելվում ե դիպչել մահճարլին, վոր ամրացված ե պատին, և միայն այն 5—10 բուդեյին, վոր հաց ուտելն ե դրազեցնում, բանտարկյալն թույլատրվում ե ծալապատիկ նստել:

Այս ոեժիմից մի քանի որ միանդամայն բավական կլինի ամենաամուր որդանիզմը քայլայելու: Բանտարկյալները գումար, գերեզմանից դուրս յեկած մեռեների պես, չորս որը մի անգամ գուրս են դալիս կարցերից ու բակի միջով գնում խոհանոցը՝ «սուպ» ստանալու: Ուելմատիզմն ու թոքերի բորբոքումը կար-

ցեր դրված բանտարկյալների ամենահաճախակի հյուրերն են։ Ի՞նչ զարմանալու բան կա, ախր պիտի իմանաք, վոր, բացի կատարյալ մթությունից, կարցերի շենքը բացարձակ խոնավությամբ ել և աչքի ընկնում։ Կարցերները նկուղային հարկումն են տեղավորված, վորոնց պատերը բորբոսը բռնել ե, և ջրի սառը կաթիլներն առաստաղից կտժում են։

Գրոհայինների համար ամենամեծ տոնը լինում է կամերները շրջելն ու քաղբանտարկյալներին հայտնելը, վոր իր թե մահման դատավճիռներ են կայացված։ Այսպիսի դեպքերում գրոհայինները «մարդասիրության» ցույց են անում և բանտարկյալներին թույլ են տալիս հրաժեշտի նամակներ ու կտպկներ գրել։ Դժվար չի հասկանալ, թե բանտարկյալներն ինչ վիճակում են իրենց ծնողներին, կանանց ու յերեխաներին հրաժեշտի նամակներ գրում։ Հետո զալիս ե գրոհայինների ջոկատն ու բանտարկյալներից նամակները հավաքում և ստիպում, վոր կամերի մեջտեղը շարք կանգնեն կամ անկողնի մոտ չոքեն։ Նրանց աչքի առաջ հրացանները լցնում են։ Բանտարկյալների աչքերը կապում են ու ստիպում մի քանի բովե կանգնած մնալ, թույլ ըլտալով, վոր նույնիսկ ծալտուն հանեն։ Այլ ժամանակ Փաշիստները կամացուկ, մատների վրա հեռանում են և կամերի յերկաթե ծանր դուռը հանկարծ այնպես ուժդին շրիկացնում, վոր անասելի աղմուկ և հանում։ Շատ անգամ այս կամ այն բանտարկյալն ուշաթափվում ընկնում է կամերի քարե հատակին։ Այն ժամանակ գրոհայիններն անզուսպ հոհողոցով դռները բաց են անում և իրենց ընկերներին հերթական ներկայացման կամչում, ձայն տալով։

— Յեկեք տեսեք, կամերի դռնով մենք նրան գնադակահաւաքինք։

## ՄԻ ՈՐՈՒՄ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ

### 39 ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Հուլիսին, յերբ ճամբարապետ Զեղմունդն իմացավ, վոր իր պահակության ու վոստիկանության վողջ կազմը փոխվելու յե, վճռեց ապացուցել, վոր իր զինակիցներն անփոխարի-

նելի յեն : Լավագույն առաջույցն , ի հարկե , վեթխարի մի պըս-վակացիան յեղալ : Մի խումբ կաւանավորների փախուստ մո-գոնեցին , իսկ պահակներն ու ճամբարում յեղած վողջ պահ-սկանությունը նրանց հետեւից կրակ պետք է բաց անելին : Ար-դյունքն այն յեղալ , վոր Զիդմունդը կառավարության , իհարկե , առաջուցեց , վոր անհրաժեշտ և ճամբարում այդպիսի անփոխա-րինելի վոստիկաններ ու գրոհայիններ թողնել : Պրովակացիա-ները շարունակվեցին :

Կենարոնական կորպուսի № 11 կամերի դռան մեջ ծա-ռաները կոմունիստական մի թուոցիկ են հանկարծ «հայտաբե-րում» : Այդ թղթի կտորի վրա հետեւյալն ե դրված լինում «Լեյնում դրոհայինների իշխանությունը վերջանում է , հեկտեմ-բերին այնտեղ կոմունիզմ և լինելու» : Համաձայն վաղորոք պատրաստված ծրագրի , № 11 կամերի բոլոր բանտարկյալնե-րին հարցաքննության յենթարկեցին , վոր տանջանքներով ու-ժեծելով եր ընթացակցվում : Հետո նրանց բոլորին հավաքե-ցին բակը և ուսպական խստավարժության յենթարկեցին : Նույնն ել մյուս կամերի բանտարկյալների նկատմամբ արին , հետո՝ արևմտյան կորպուսի վողջ բանտարկյալների նկատ-մամբ և վերջապես՝ արևելյան կորպուսի բանտարկյալների նկատմամբ : Բանտարկյալների մի մասին չարչաբանքի կամեր գրին : Նրանց հայտարարում ելին , թե չարչաբանքներն այնքան պետք ե շարունակվեն , մինչև վոր նրանք «մեղավորներին» , այսինքն թուոցիկի հեղինակներին ձեռք տան :

Այդ որն ընկերներից 23 հոգի գիտակցությունը կորցրած վիճակում փոխադրվեցին հիվանդանոց , և միայն հետեւյալ յերե-կոյան դրությունն իր գագաթնակետին հասավ : Վեթխարի մի պըսակացիա յեր պատրաստվում , վոր բանտարկյալների մաս-սայական զնդակահարություններով պետք ե վերջանար : Արե-վելյան կորպուսի բանտարկյալներն ու հյուսիսային կորպուսի բանտարկյալների մեծ մասն այդ ժամանակ արևելյան կորպու-սի բակումն ելին՝ հիվանդանոցից մի քանի քայլի վրա : Արե-մտյան կորպուսի ու կենտրոնական կամերների ընկերները պետք ե հավաքվելին արևմտյան կորպուսի բակը : Նրանց հրաման եր տրված մարդանքի քայլքով վաղել : Քափ ու քրախնք մտած ,

շնչառպառ, ամբողջ որը քաշած տանջանքներից վերջնականապէս ծվեն-ծվեն յեղած՝ նրանք սկսեցին բանտի բակում վաղ տալ: Այնոււհետև լավեց ստանդարտ ալառոկիր», «կանգնիր»-ը: Այս վարժությունը հարյուր քսանական անդամ պետք է կատարվեր: Բանտարկյալները մեկը մյուսի հետեւից սայթաքում-ընկնում ե- յին արեմտյան կորպուսի բակի քարերի ու ցեխի մեջ: Այս տե- սարանի ժամանակ արեելյան կորպուսի բանտարկյալներին ստի- պեցին յերդել, և բանտարկյալների փոքրիկ նվազախումբը (մի քանի նվազարան ու մանդալին) նվազելու հրաման ստա- ցավ: Արևելյան կորպուսի բակում հավաքած բանտարկյալների բազմության առջեկց Փաշխատները յերկու բոսեն մի անդամ մի բանտարկյալ եյին քարշ տալիս, վորը ցալից ճշում եր, ծեծ- ված-արնլիլիկ եր արված, կամ գիտակցությունը կորցրել եր: Բոպեներն ացնում եյին: Նվազախումբը դադարեց նվա- զել: Բանտարկյալների բազմությունը քարացավ: Հարյուրավոր մարդեկ բռունցքները սեղմած՝ մնացին կանդնած: Իրենց ան- զորությունը գիտակցելուց առաջացած բարկությունն ու դայ- բույթը չափը լցրին: Վոստիկանն ըղավեց:

— Վերջապես պիտի յերդե՞ք, թե չե, խոզի՛ նախիր:

Բայց բազմությունը մնաց համր: Ծերունիների յերեսից արցունքը ներքե եր գլորվում, իսկ հարեւան կամերաններում, գրոհայինները կարաբիններով ու ատրճանակներով զինված՝ պատրաստվում եյին կրակ բաց անել: Ծներն սպասում եյին և վճռել եյին իրենց գործողությունն սկսել ամենաթունդ լարված մոմենտին: Բոլոր բանտարկյալներն այս բանն զգացել եյին: Ամեն մեկը մտածում եր. «Ճիմա վերջս ե»: Մի մոմենտ ևս, և բանտար- կյալների բազմությունը պետք է հարձակվեր վզստիկանության ու գրոհայինների վրա: Ֆաշիստ պրավականորների ուղածն ել հենց այդ եր, Բայց բանտարկյալներն իրենց զայրույթը զսպե- ցին: Յեկ պատրաստվող արյունահեղ դատաստանը չհաջողվեց:

Արևելյան կորպուսի բանտարկյալների առջեկց 16 ընկեր եւ քարշ տվին, վորոնք գիտակցությունը կորցրել եյին: Այդ ժամա- նակ հարյուրավոր կոկորդներից գուրս թռալ «Յես ընկեր ունե-

յիշ» մասսայական յերդը։ Վոստիկան Բառերը վազ տալով սլացալ արևելյան կորսուսի բակը։

— Գժվե՞լ եք, ի՞նչ ե, շա՞ն վորդիք։ Ես ըոպեցիս դադարեցրեք։ Վո՞չ մի յերդ։

Բաղմությունը մի քանի վայրկյան ել յերդեց, հետո լոեց։ Արևելյան կորսուսի բոլոր բանտարկյալները, բացի ծանր հիվանդներից շարք պետք ե կանգնեցին։ Կոմունիստական ֆրակցիայի նախկին ղեկավար Կառավերը, վորը ծանր հիվանդ եր, բանտարկյալներին պետք ե հրաման աներ և քառասուն ըոպե նորից կատաղի վաղքը կատարվեր բանտի բակի շուրջը։ Ֆաշիստները ձեռքերը դրել եյին ատրճանակների պատյաններին, և կատաղությունից նրանց ատամները չխչխկում եյին։ Կինամոնադույն դահիճները հույս ունեյին պրավակացիա առաջ բերել և արյան ծարավ հաղեցնել։ Բայց նրանք իրենց նպատակին չհասան։

Բացանիկ կարգապահությամբ, ատամ-ատամի սելմած, միակերպ մտածելակերպով— «մեզնից վոչ մեկը պրովակատորների գնդակով չպետք ե դնա»—մեր ընկերները չնչակտուր եյին լինում, բայց և այնպես փախչում եյին։ Բարկությունից դողլալով վրեժի յերդումը շրջունքներին, թե կդա մի որ, յերբ մենք Փաշիստների հետ հաշիվ կտեսնենք՝ մեր յեղբայրներն ու ընկերները նայում եյին իրենց կամերաների լուսամուտներից։ Այդ յերեկո հիվանդանոցը բերներերան լիքն եր։ Սանիտարական Վախմիստը, վոր մարդկային վորոշ զգացմունքներ դեռ պահպանում եր, իր զայրությը բացարձակուեն յերեան եր բերում։ Այն բողոքադիրը, վոր նա ճամբարի պարետին ու ներքին գործոց մինիստրությանը գրեց, այս դարձվածքն եր բովանդակում։

«Այսոր, հուլիսի 13-ին ծախսվեցին բոլոր դեղորայքը, սրտի գործողությունն ամրապնդող բոլոր դեղերը, վոր մի տարվա համար եյին նախատեսված»։ Միաժամանակից հետո զրոհայիններն այս ու այն բանտարկյալին ասել եյին, թե № 11 կամերի դռան մեջ գտնված թուոցիկը մի Փաշիստ պրովակատուր եր գրել։ Այս պրովակացիայից մի քանի շաբաթ հետո № 11 կամերի դռան մեջ նորից հեղափոխական կոչեր «գտնվեցին»։ Բայց այս անգամ կոչերը մի Փաշիստ եր սարքել, վոր նաև ճամ-

բարում եր ծառայում, բայց պլովակացիան չհաջողվեց, վորով-  
հետեւ նա հիմարի պես դռան դրսի յերեսին եր դրել:

Սեպտեմբերին արևելյան կորպուսի բանտարկյալների համար  
յերրորդ պրովակացիան «Հասունացավ» բանտարկյալներից մեկը  
մեծ թվով ընկերների ներկայությամբ ասաց.

— Հեռու չե այն ժամը, յերբ գրոհայիններին մենք կստի-  
ուենք հենց այս բակում վարժություններ կատարել:

Դոկտոր Յունդ-Մարշան՝ նացիոնալ-սոցիալիստ մի բժիշկ,  
վոր ինչ վոր հանցանքի համար Զոննենբուրդում բանտարկված  
եր, վճռել եր, մատնիչ դաւնալով՝ նորից աչք մտնել, և լվա-  
ցատեղում լսած խոսակցություններն խկույն տեղ հասցրեց:  
Ընկերներից վեց հոգու տարան հարցաքննության՝ Նրանց ծեծե-  
ցին ու չարչարեցին: Բայց նրանցից վոչ վոք չմատնեց այդ խոս-  
քերն ասող ընկերովը:

Կատաղած ու փրկված այն բանից, վոր իր բոլոր ջանքերն  
իդուր են անցնում՝ պարեւ Բրունինդն այն ժամանակ հրաման  
տվեց՝ բոլոր բանտարկյալներին ժամ ու կես ուաղմական խոսա-  
վարժության ու ծանոթ «կանոնել, պատկել»-ու յենթարկվեն:  
Մեկը մյուսի հետեւից վայր եյին ընկնում գիտակցությունը կորց-  
րած ընկերները: Վելլի կասպերին, վոր սիրտը թունդ նվազել  
եր, հիվանդանոց փոխադրեցին: Այդ որերն ընկերներից շատերն  
իրենց առողջությունն ընդմիշտ կորցրին: Թունդ սիրտ նվազեց-  
նող հիվանդությունները հաճախակի գարձան, բայց, չնայած  
այս բանին՝ արտի թունդ նվազում ունեցողներին ու նրանց հետ-  
նակ «Վելլ-Բյուլենի» նախկին խմբագիր Ռուցիկուն և Առւալեն-  
դերին այնուամենայիվ ատիպում եյին, վոր արյունաբրու շան  
Արքիանի հրամանով ուղղմական ծանր խոտավարժություններ  
կատարի:

## «ՎԻԼԻ ԿԱՍՊԵՐԻ ՊԵՇՔ Ե ՓՐԿՎԻ»

Զոննենբուրդի բանտարկյալների մեջ Փաշիստների ամենա-  
ստոր համաձանքներին յենթարկվեց կոմունիստների նախկին  
պատգամավոր Վելլի կասպերն: Նա ճամբար յեկավ միանդա-

մայն առողջ վիճակում : Հենց առաջին որերը նրան մի քանի անդամ ծեծեցին արնվիկ արին :

Այժմ Վիլի Կասպերը, վորին մի քանի ամիս ստիպում ելին արևելյան կորպուսի պարետի չափազանց ծանր գերը կատարել, անվերջ չարչանքների ու ֆաշխատների հայոցանքի առարկան եւ : Մաղաչափի հանցանքի համար, ճամբարի յուրաքանչյուր բանտարկյալի կողմից նրա հետ քաղաքական զրուցի փորձ անելու համար մեղադրում են : Մի որ, մի բոպե նրան հանդիստ չեն թողնում : Շատ հաճախ, ճանապարհին պատահամամբ հանդիպելիս, մի վորեև գրոհային նրան ստիպում եւ ժամերով վաղել բակի չուրջը : Բանտի չենքի միջանցքներում ու սանդուխքների վրա, ընկնել գետին, նորից վեր կենալ և վաղտալ՝ գրոհայինների հռհռոցների ու ծաղրանքի տակ :

Նրա առողջությունն ու ջերը հիմնահատամկ քայքայլել են : Վիլի Կասպերը սրտի ծանր հիվանդություն եւ ստացել : Ամենածանր բոպենների ժամանակ, յերբ խեղճի մարմինը ջղաձգությունից ցնցվում եր, ֆաշխատները գալիս ելին նրա մոտ և ասում .

— Կասպեր, զու ինքդ քեզ մի դյուլա տուր : Ի՞նչ ես սպասում : Ուզում ես վոր մենք ինքներս այդ բանով զբաղվենք :

Ինքնասպանություն գործելու այս հրահրումը հաճախ երկրկնվում : Մեր ընկերը ջերի ծանր քայքայումով հիվանդ ե, ջերի ցնցումից նրա գեմքը կուչ եւ գալիս և խոր կնճիռներով ակուլած ե : Մի քանի ամսում նա տաս տարով ծերացավ : Ճամբարում բանտարկյալներն առում են .

— Յեթե այս բանը դարձյալ շարունակվի, Վիլի Կասպերը ճամբարից կենդանի դուրս չի դա : Վիլի Կասպերը պետք ե փրկվի :

ԿԱՐՄԻՐ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՒՆԸ ԶՈՒՆԸ ՀՈՒՆԵՆԲՈՒՐԳԻ  
ՀՈՒՆԸ ՃԱՌԱԳԱՅԹՆ Ե

Չարչանքների ու տանջանքների դատապարտված տասնյակ հաղարավոր բանտարկյալներ հուսու մի ճառագայթ ունեն, վոր նրանց ավելի յեւ ուժ տալիս—կարմիր նզնության գործին անդուռ ու կատարյալ նվիրաբերություններ անելու, նրա բաղմաթիվ անդամների ու ակտիվիտների մասին յեղած լուրերն են այդ :

Զնայած արյունու հալածանքներին, չնայած՝ կարմիր Ողնության աշխատակիցները դիտեն իրենց սպառնացող վտանգը, գիտեն, վոր զուցե վաղն իրենց վիճակվի մեղ բախտակից դառնալ, այնուամենայնիվ ամենուրենք աշխատանք և կատարվում:

Քաղբանտարկյալերի կանանց ու յերեխաններին նյութական ոգնություն եւ արվում: Գրքեր ու կենսական անհրաժեշտ պիտույքներ մեղ կանոնավոր կերպով ուղարկվեցին այնքան, մինչեւ վոր ճամբարի պարեաը հանձնումն արդեկեց:

Մենք մեծ ուրախությամբ իմացանք, վոր արտասահմանի քանվորներն ու ինտելիգենցիան մեծ աշխատանք են կատարում, վոր հիտլերյան բանտերի բանտարկյալների վիճակը թեթևացվի:

Միայն նա կարող է համիլանալ, թե ինչ ասել և կարմիր Ողնության գոյության վրաստը, ով հիտլերյան Գերմանիայի ուղղեւ աներում, բանտերում ու համակենտրոնացման ճամբարներում արսափելի ամիսներ եւ անցկացրել: Յես տասնյակ հաղարավոր քաղանտարկյալների անունից դիմում եմ բոլոր բանվորներին, բոլոր նրանց, ով համաշխարհային կուլտուրայի ավանդարդի հետ եւ, կոչ անելով՝ «Պաշտպանեցեք կարմիր Ողնությանն իր աշխատանքների մեջ, միջազգային պրոլետարական համերաշխության համար մղած իր պայքարում»:

## ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՊՈԼ ՅԵՎ ՀԵՐՏՐՈՒԴԱ ՌՈՒԵԳՆԵՐԻՆ

Այս տարվա հունիսին արտասահմանյան թերթերում հրապարակվել ել Սուն-Յաթ-Սենի այրու նամակը, վորտեղ ի միջի այլոց ասված եւ—

«Մոտ 3 տարի յե, ինչ հեռավոր արևելյան արհմիություններ գլխավոր քարտուղար Պոլ Ռուեդը և նրա կին Հերտրուդան դատվում են Նանկինի բանտում: Յերկուսն ել կումունիտական աշխատանք կատարելու համար գատապարտվել ելին մահապատժի, վորը հետագայում փոխարինվեց ցմահ տաժանակրությամբ:

Ներկայումս լուր եւ ստացված, վոր Պոլ Ռուեդը հիվանդ ետքով և գտնվում եւ Նանկինի կենտրոնական հիվանդանոցում: Բանտի վարչությունը հրաժարվում եր վորեւ բժշկական ողնություն հացնել նրան: Հիվանդի դրությունը լավացալ այն ժամանակ, յերբ դրսում ամեն ինչ արվեց նրան ողնություն ցույց տալու համար:

Աննկարաղբելի յէ չինական կալանավորների գլուխյունը,  
վորոնք վարակված են տիֆով։ Կամերները խավար են, խոնավ,  
լիվ-լեցուն։ Կալանավորների մեծ մասը շղթայակապ ե։ Մահա-  
ցության դեպքերը բաղմաթիվ են։

Մենք կոչ ենք անում ամբողջ աշխարհի տղամարդկանց և  
կանանց բարձրացնել իրենց բողոքի ճայնը և պահանջել, վոր առ-  
զառություն տրվի Պոլ և Հերտրուդա Ռուեդներին ու չինական  
բոլոր քաղբանակարիկալներին։

## ԶԻՆՍՍՏԱՆՈՒՄ ԱՃՈՒՄ Ե ՀԱԿԱՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Այս տարվա հունիսին խիստ ուժեղացավ այն զորամասերին  
ողնելու կարմանիան, վոր Կարմիր բանակի հրամանատարու-  
թյունն ուղարկում եր ճապոնական խմանիալովմի դեմ կովելու  
համար։ Շանհայում, համալսարանում և մի մետաքսաղործարա-  
նում հայլաքլեց 134 իյեն (41,50 ամերիկական դոլար)։ Աշխա-  
տավորներն ու ինտելիգենցիան, խանդավառությամբ համակ-  
ված, հայտարարում ելին։ «Գոմինդանականները և խմանիա-  
լիստները գերի վերցրին մեր աղջային հերոսին, մեր հակամակե-  
րիալիստական առաջնորդին։ Սակայն այդ առաջնորդի, — ֆանգ-  
թղե-Մինի ստեղծած բանակը շարունակում է իր մեծ գործը։  
Բնակչությունը սիրում և աջակցում է նրան։ Ամեն մեկը, ով չի  
ցանկանում ստրկացած տեսնել իր հայրենիքը, պետք է իր բոլոր  
ուժերով ողնի Կարմիր բանակին, վորպեսդի իրազործիվ մեր  
հերոսի առաջարած նպատակը։ Թող դա պատասխան մնի գո-  
մինդանական դահիճներին։»

## ՔԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՃԱՊՈՆԻԱՅԻՆ ՎԻՐԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Այս տարվա հուլիսի 9-ին Շանհայի դատարանը 14 ամսվա  
բանտարկության դատավարանեց չինական «Սին-Շեն» (Նոր  
Կյանք) ժուռնալի հրատարակչին, մի հոդվածի համար, վորը  
ճապոնացիք վիրավորանք համարեցին ճապոնական կայսեր հաս-  
ցելին։

Դատարանում ներկա գտնվողները բուռն կերպով բողոքեցին

այդ գատավճռի դեմ : Իսկ յերբ դատարանը մերժեց պաշտպանի պահպարկը՝ բանտարկությունը դրամական տուղանքով փոխարինելու մասին, ներկաների զայրույթն այնքան ուժեղացավ, վոր նրանց դահլիճից հեռանալու համար, լոստիկաններ կանչվեցին :

Ճապոնական «Նիցի-Նիցի» թերթի հաղորդադրությամբ, Գումինդանի կենտրոնական կոմիտեն պաշտոնապես ներողություն խնդրեց ճապոնական իշխանություններից և խոստացավ նանկինի կառավարության հետ միասին խիստ միջոցներ ձեռք առնել հակածապոնական շարժումը ճնշելու համար :

### ԴԵՂԻՆ ԳԵՏԻ ԿԱՏԱՍՏՐՈՖԻԿ ՀԵՂԵՂՈՒՄԸ ՆԱՆԿԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆ Ե

Այս գարնանը բաղմաթիվ նահանդներում, մանավանդ Դեղին գետի հովտում կատաստրոֆիկ հեղեղումներ յեղան : Միմիայն Չանգ-Ցուանի շրջանում հեղեղվել ե 441 դյուդ, ինդդվել ե 20.000 մարդ և անոթեան ե մնացել 140.000 մարդ : Հեղեղումների դեմ ամբարտակներ կառուցելու համար բաց թողնված միջոցների միայն 30 տոկոսն ե ծախսվում, իսկ մնացած 70 տոկոսը մնում ե հեղեղումների դեմ պայքարող բաղմաթիվ կոմիտեների չինովնիկների գրանցում : Նաև կիսում կառավարությունը ժողովը գական յեկամտի 80 տոկոսից ավելին ծախսել ե քանակի վրա և բոլորութին անտարբեր ե գեղվի այն վողբերդական գրությունը, վոր ստեղծվել ե Դեղին գետի հովտում :

Վերջերս Չան-Կայ-Շիի փեսա Խ. Խ. Կունդը, վոր Փինանսների մինիստր ե և հեղեղումների դեմ պայքարող կոմիտեյի նախագահ, հայտարարեց հետեւյալը, — Խորհրդային Չինաստանի դեմ արշավելու համար կառավարությունը միջոցների կարիք ե դդում, ուստի հաղիս թե հնարավոր լինի փող ստանալ հեղեղումների դեմ պայքարելու համար :

### ԱՌԱՋԻՆ ԿԱՅԵՒՆՆԵՅԱՆ ԲԱՆՏՈՒՄ (ՀԵՆԱՆ)

ՄՈՊՐ-ին գրում են — Առաջին կայֆենխյան բանտը կամ Հենանի բանտը Չինաստանում համարվում է ժամանակակից ուրինակելի բանտ : Մակայն կալանավորների գրությունն այստեղ

նույնքան սարսակելի յե, վորքան և մյուս «որինակելի» բանտեղում : Ահա փաստերը —

Բանտը 450 հոգու համար ե, բայց ներկայումս այնտեղ կա 900 կալանավոր : Նրանք բոլորը քնում են հատակի վրա, շատերը նույնիսկ վերմակ չունեն : Բաղմաթիլ են մահացության դեպքերը : 900 բանտարկյալից յերկու որում միջին թվով մեռնում են 3 հոգի : Կալանավորներն ուտում են որական միայն մի անդամ : Նրանք ապուրամանի կեսի չափ փչացած բրինձ են ստանում : Ամսական մեկ անդամ ստանում են նեխված կաղամբով սուզ : Խոսք չի կարող լինել բժշկական վորուե ոգնության մասին : Կալանավորների հագուստը վոչ փոխվում ե, վոչ ել լվացվում : Հետաքրքիրն այն ե, վոր վերակացուները ծառայում են առանց ոռծիկի : Նրանց յեկամտի. դլխավոր աղբյուրը կաշառքն ե, վոր ստանում են հարուստ բանտարկյալներից : Վերակացուները կրկնակի գնով ապրանքներ են ծախում կալանավորներին :

Կալանավորներից փող են վերցնում նաև սպաներն ու չինովնիկները : Յուրաքանչյուր կալանավոր, բանտելով այդ բանտը, չղթայլում ե : Շղթաներից նու կարող ե աղատվել կաշառք տալու միջոցով : Ահա թե ինչու վոչ մի հարուստ կալանավոր շըդթայված չե : Բացի դրանից, հարուստ կալանավորներն առանձին ճաշ են ստանում :

Այդպիսի կալանավորներից շատերը բանտից աղատվում են ժամկետից առաջ, վորքան շատ ե կաշառքը, այնքան շուտ են աղատվում նրանք :

### ՖԱՆԳ-ԹՂԵ-ՄԻՆԸ ԳՈՄԻՆԴԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՌՔՈՒՄ

Հայտնի յե, իոր կարմիր բանակի պանծալի առաջնորդներից մեկը, ֆանգ-թղե-Մինը այս տարվա փետրվարին իր ջոկատով Յանցղի գետն անցնելիս դերի ընկալի : Դա դոմինղանականների և ճապոնական իմպերիալիզմի միասնական դարձադրության արդյունքն եր : Գերության մեջ ֆանգ-թղե-Մինի վարքադիծն հիացմունք ե առաջ բերել Զինաստանի բոլոր աշխատավորների ուրտերում : Զինական թերթերի հաղորդադրությամբ ֆանգը շարունակում է մնալ անհողողող ու վճռական : Շանհայի յերիտասարդությունը հիացմունքով ե խոսում ֆանգ-թղե-Մինի մասին :

Զինական մի թերթի թղթակիցը գրում ե.— «Յես 20 ըսպէ տեսնլվեցի մանդի հետ։ Նա բարձրահասակ ե, ունի խիստ զարգացած մկանունք։ Նրան շղթայլած են պահում։ Այսուհետեւ թղթակիցը գրում ե, թե ֆանգը հրաժարվեց պատասխանել նրա այն հարցին, թե ներկայումս ինչ կարծիք ունի տիրող գրության մասին։ Թղթակիցը հաղորդում է, թե զետի արևմուտք շարժվող կարմիր բանակի դորսամասերին վտանդ ե սովառնում։ Ֆանգը պատասխանում ե.— «Այդ մասին դատել յես չեմ կարող վորովհետեւ դրսից վոչ մի լուր չեմ ստանում»։

Մինչև այժմ հաջողվել ե չինական աշխատավորության բողոքի շարժման միջոցով փրկել ֆանդ-Թղե-Մինի կյանքը։ Գոմինդանական Զինաստանում յեղած սպիտակ տեսորի դեմք բոլոր յերկրների աշխատավորների հուժկու բողոքը վերջնականապես կապահովի նրա փրկությունը։

## ԼՅՈՒԴԻ ԲՐՈՒՏՍԿՈՒ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀԸ

Վորպես ՄՈՊԻ-ի հյուր, վերջերս Փարիզ ժամանեց Մարիա Լյուդիբրուտսկայան, վորի ամուսինը մայիսի 9-ին, առավոտյան ժամը 4-ին մահապատժի յեր յենթարկվել Վառնայի բանտում։ Կինը ժամանեց իր փոքրիկ վորդու, —իւլիչի հետ, վորն իր հորձերակալման ժամանակ մի քանի ամսական եր և յերեք չերտեսել նրան։ Մարիա Լյուդիբրուտսկու յերիտասարդական դեմքին յեռանդ ե դրոշմանչ, նա խոսում ե միայն բուլղարական լեզվով և թարգմանչի միջոցով հայտարարում ե.— «Յես յեկա ձեղ մոտ վոչ միայն նրա համար, վոր խոսեմ Լյուդիբրուտսկու մասին, այլ նրա համար, վոր հասարակության ուշադրությունը հրավիրեմ բուլղարիայում տիրող տեսորի վրա, վորը նորանոր զոհեր և պահանջում»։

Յեկ նա պատմում եր իր բարեկամի և ընկերոջ պայքարի ու մահվան մասին։

ԼՅՈՒԴԻԲՐՈՒՏՍԿԻՆ բուլղարական կոմունիստական կուսակցության անդամ եր։ Արդեն լրացել եր նրա 24 տարին, յերբ կախվեց։ Կոմյերիտմիության շարքերը մտնելիս համարյա թե մանուկ եր։ 19 տարեկան հասակում, յերբ մանածագործ եր ձերբակալվեց ու դատապարտվեց մի քանի տարվա բանտարկու-

թյան: Յանալից աղաստվելուց հետո նա կրկին հալածանքի յենթարկվեց և անլեղալ պայքար մղեց:

1929 թվականին վոստիկանությունն իմացավ, վոր նա առըրում և մի ուսանողի սենյակում: Լյուդիբրոստսկուն հաջողվեց առորճանակիլ խելել ժանդարմի ձեռքից ու փախչել: 1934 թվին Սոֆիայում նա գարձյալ ձերբակալվեց: Նրա մոտ անլեղալ թուցելներ գտնվեցին: Ենիւ լյուդիբրոստսկու դեմ մեղադրանք հարուցվեց այն մասին, վոր նա Դանուբի նալատորմի նավաստիների մեջ հեղափոխական աշխատանք ե կատարում: Սկզբում լյուդիբրոստսկին զատապարտվեց 12 տարվա բանտարկության, իսկ յերկրորդ դատավարության ժամանակ—մահապատճի:

Դատարանում նրա վարքը հիացմունք առաջ բերեց: Իրեն պաշտպանելու համար նա վոչինչ չեր ասում, բայց զայրանում եր, յերբ գառարանը վայրահաջություններ եր թափում կոմյերիտմիության և կոմկուսակցության հասցեյին:

Դահիճներն ուղղում ենին ստիպել, վոր նա հրաժարվի հեղափոխական գաղափարներից և ստորագրի ներման խնդիրը: Լյուդիբրոստսկին հրաժարվեց: Հայրը նրան աղելուում եր խնայել իր կյանքը և ներում խնդրել: Լյուդիբրոստսկին նամակով պատասխանեց հորը: «Ավելի լավ ե մեռնել, բայց արել իմ դաստկարգի սրտում. ամելի լավ ե մեռնել, քան կենդանի դիալ դառնալ»:

Մայիսի 9-ի առավոտյան ժամը 4-ին վոստիկանությունը ներխուժեց նրա կամերան: Ժանդարմները վրուարորիկ ենին քայլում: Նրանք խուսափում երին ամենաչնչին աղմուկից, դիտենալով, վոր մյուս բանտարկյալները կիմանան նրանց արարքը և բողոքի ձայն կրաքարացնեն: Դահիճները հարձակվեցին կալանավորի վրա և փակեցին նրա բերանը: Սակայն լյուդիբրոստսկին ժամանակ զտավ գոռալու: «Հառա՞ջ, ընկերներ»:

Մահապատճի տեղում, մեռնելուց առաջ նա քառորդ ժամ խոսեց: Յերբ նա վերջացրեց, քաղաքացիական զատախաղը նրա խոռքերի աղղեցության տակ և արցունքները աչքերին բացականչեց: «Անիծված զինվորական զատարաններ: Ինչո՞ւ նրանք իրանք չեն ի կատար ածում այս մահվան դատավարությունը»:

Իր հուր դրած նամակը լյուդիբրոստսկին վերջացնում է և ամելյալ խոռքերով: «Պարանը վզիս յես կոչ եմ անում ձեզ, —

գլուխներդ բարձր պահեմ, հայր, սիրելի կի՞ն և վարդի, վարին յես յերբեք չեմ տեսել: Հառա՞ջ, ընկերներ: Յերե հարկավոր լինի, ամենածանր դուերի զնով մենք պետք ե նվանենք հաղթանակը: Մարտիկները կապրեն հաղթական պրոլետարիատի գիտակցության մեջ, յերե նույնիսկ ֆիզիքապես մեռած լինեն: Մարտիկների զավակները կնաշակեն իրենց հոր ցանած պոտողները, և նրանց քում դու յել կլինես, իմ փոքրիկ իւյիչ, վորին յես չեմ կարող համբուրել վոչ առաջին, և վոչ ել վերջին անգամ»:

## ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ՎՈՐ 18 ԱՄՍԱԿԱՆ ՄԻ ՅԵՐԵՒԱՌԱՆՏԱՐԿՎԱԾ Ե ԼԵԶԱՍՏԱՆՈՒՄ

(ՖՈՐԴՈՆԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱՎԱՆԵՐԻ ՆԱՄԱԿԻՑ ՈՒՂՂՎԱՄ  
ԼԵԶԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ)

Մեր բանտից, վոր գտնվում ե Թորդոնում (Լեհաստան), ձեղանից հեռու, մեր յեղբայրական վողջույններն ենք ուղարկում ձեզ:

Մենք 65 քաղաքական բանտարկյալներ ենք, զրկված մեր յերեխաներից, վորովհետեւ պայքարեցինք ոովի և անդործության դեմ, վորովհետեւ մասնակցեցինք գործադուլներին ու պայքարեցինք կապիտալիզմի տիրապետության դեմ:

Մեզ հետ բանտարկված են յերեք 16 տարեկան աղջիկներ, նրանք լուծից, վիլնայից և լոմզայից են: Նրանց բանտարկել են, վորովհետեւ յերեխասարդների վողորմելի աշխատավարձի պեմ պայքարել են:

Մեզ հետ ունենք նաև 18 ամսական մի մանկիկ: Դա մեր վլադեկն ե, նրա հայրը գատապարտված ե 7 տարվա բանտարկության, իսկ մայրը՝ 3 տարվա: Նա դեռ շատ փոքր ե և այս բոլորից շատ քիչ բան է հասկանում: Սակայն Փաշխատական տեսորն արդեն տարածվում է նրա վրա: Նա ծնվել է բանտում: Առաջին բանը, վոր նա տեսել ե բանտի յերկաթյա վեղկերն են յեղել: Պահակների գոռումը զարթեցրել ե նրան քնից: Նա քայլել սովորեց մի փոքրիկ խցում, ուր զարնվելով պատերին, ցավացրեց իր մարմինը: Յերբ մեզ սուզ տալու համար խուցի գոռուը բաց են անում, նա փախչում ե միջանցք, սակայն պա-

Հակները նրան հրում են խուցից ներս, յերբ նա մոտենում է լուսամուտին. և փորձում է յերկաթյա փեղկերի արանքից յերկինքը դիտել, պահակը բղավում է՝ «Ի՞նք, թե վոչ կիսկեմ»: Սակայն հակառակ այս բոլորին նա մեծանալու յե և նա լինելու յե ձեզ արժանի մի պատանի, բանվոր պատանի:

Թանկագին բարեկամներ, հակառակ նրան, վոր դուք աղաս եք, ձեր գրությունն ել նախանձելի չե: Բոլոր կապիտալիստական յերկըներում բանվորները և գյուղացիները տանջվում են սովից:

Փոքրիկ Վլադեկը խեղդվում է մեր նեղ խցում: Դուք ևս ձեր աշխատած արհեստանոցներում, ուր ձեզ պարտավորեցնում են որպական աշխատել 12 ժամ, չունեք բավականաչափ ող:

Փոքրիկ Վլադեկը բավականաչափ սնունդ չի ստանում, նրա փոքրիկ ձեռքերը ցրտից ուռչել են, մենք բոլորս հիվանդ ենք, վորովհետև մեզ բավականաչափ սնունդ չեն տալիս: Դուք ել սովից տանջվում եք, վորովհետև ձեր ծնողները դործալուրկ են և նույնիսկ, յերբ նրանք աշխատում են, բավականաչափ աշխատավարձ չեն ստանում, վորակեսդի կարողանանք կուչտ ուտել:

Բուրժուաների յերեխաները չգիտեն այս բոլորը, նրանք կարող են իտաղ անել առանց հոգսի, կարող են սովորել:

Դուք գիտեք հարկավ, վոր կա մի յերկիր, ուր դպրոցները բանվորների և գյուղացիների յերեխաների համար բաց են: Այդ յերկում, մայրը, վոր աշխատանքի յե դնում, յերեխային փողոցը չի թողնում, այլ հանձնում է մսուրը, ուր նա խնամվում է և զրունում: Դա Խորհրդային յերկիրն է: Ընկերներ, Փաշխաները ձեզ բանտարկելով ուղում են վախեցնել, տեսորի յենթարկել, ինչպես նրանք անում են ձեր ծնողների հետ:

Մեր բանտում յերեխասարդներին մեղանից առանձնացրին: Ֆաշխաները կարծում են, վոր այդպիսով կարողանան ալելի հեշտությամբ ջլատել յերեխասարդների դիմադրությունը: Սակայն մեր ընկերները չեն վախենում և մենք պարծենում ենք նրանց արի վարմունքով:

Այս նամակը գրում ենք մենք ձեզ ձեզ մայիսի մեկի նախորյակին: Այդ ողը մենք ել ձեզ հետ միասին ցույց ենք անելու և փոքրիկ Վլադեկը ևս ունենալու յե իր կրծքին մի կարմիր վարդ: Իր մոր գրկում նա լսելու յե մեր յերգերը և մեր բողոքները:

Հեռավոր Ֆորդոնից, ուղարկում ենք ձեզ մեր յեղայրական վողջուները:

ՖՈՐԴՈՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԱ.

## ՖԱՇԻՍ ԲԱՆԴԻՏՆԵՐՆ ՈՒ ԱՖԵՐԻՍՏՆԵՐԸ

Վերջին ժամանակներս արտասահմանում ավելի հաճախակի յեն դարձել հակաֆաշիստների առևանգումները, վորոնք կատարվում են դերմանական գաղտնի վոստիկանության դործակալների ձեռքով: Դարչնադույն դահճճների այդ բանդիտական մեթոդները դարձել են ընդհանուր ուշադրության առարկա:

Վաղուց չե, ինչ ՍԿԱՆԴԻՒՆԱՎԻԼՅԻ Փաշիստական շրջանները թշնամական վայրի դործողություններ սկսեցին դերմանական եմիգրանտների դեմ, մեղադրելով նրանց, վոր իրը թե պոռնոդրաֆիկ բացիկներ և դրականություն են տարածում: Շուկայում իսկապես վոր այդպիսի դրականություն և բացիկներ են յերեվացել: Սակայն, յերբ քննություն սկսվեց, ապա, — ինչպես մատնանշել եր Դանիայի պարլամենտի պատգամավոր Ակսել Լարսենը, — պարզվեց, վոր այդ ամբողջ պոռնոդրաֆիկ դրականությունը տարածել և դերմանական գաղտնի վոստիկանության դործակալ, վոմն ԴԱՄՄԵՐԸ: Այդ պլուվակացիայի նախատին և վարկաբեկել հակաֆաշիստ եմիգրանտներին և դործնայնպես սարքել, վոր նրանք աքսորվեն Դանիայից:

ԶԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՅՅՈՒՄ վոմն ՎԻԿՏՈՐ ՎՈԼՖ, իրեն հայտարարելով եմիգրանտ, դիմեց չեխական կոմունիստներին և առաջարկեց բաց թողնել մեծ քանակիությամբ դերմանական կեղծդրամ, վորակեսզի այդպիսով կազմալուծել Փաշիստական Դերմանիայի Փինանսները: Դրա համար Վոլֆն իր տրամադրության տակ ուներ անհրաժեշտ տեխնիկական ապարատներ և գիտեր Գերմանիայում ապրող մի շարք մարդկանց հասցեներ, վորոնց միջոցով կարելի յեր տարածել կեղծդրամները: Սակայն չեխական կոմունիստները չխարվեցին և պատռեցին Փաշիստական սաոր պլուվակասորի դիմակը:

ՃՎԵՅՅԱՐԻԱՅՅՅՈՒՄ Փաշիստական դործակալներն ակտիվ գործունեյություն են ծավալում: Մայոր ԼԵԺԱՐԴԻ մի դա-

տավարության ժամանակ պարզվեց, վոր գերմանական գաղտնի վոստիկանության հանձնարարությամբ նա վոչ մրայն լրտեսում էր գերմանացի եմիդրամներին, այլ և գերմանական ֆաշիստներին տեղեկություններ էր տալիս շվեյցարական սպաների արամազրությունների ու վիճակների մասին:

Լրտեսական ել ալելի խոչոր դեմք և յեղել շվեյցարական ողաչուլեյտենանու Շերցը: Սա Բերլինից պետք և ստանար մի հատուկ ինքնաթիռ, առեանդված հակաֆաշիստ գործիչներին Գերմանիա ուղարկելու համար: Սակայն Շերցը մի շարք հանցադություններ կատարեց, ընկալ դատի տակ և այսպիսով խանգարվեց նրա հետագա լրտեսական գործունեյությունը: Դատարանում մերկացվեցին հակաֆաշիստներին առեանդելու նրա պլանները:

Զեխոսուլովակիայում, Տրաուտենաուլի մոտ դանվող ԱԲԵՐԱԼՇՏԱԴԻՈՒՄ Փաշիստներն առեանդեցին եմիգրանտ ԿՐՈՒՑԿԵՑԻ ամբողջ ընտանիքը, — Կրուցկեյին, նրա կնոջն ու յերեխաներին: Գաղտնի վոստիկանության գործակալներն եմիգրանտ ԼԱՄԲԵՐՍՊԵԳԻՆ խարեւայությամբ տարան ԵՅԶԵՆՇՏԵՑՆ կոչված չեխոսուլովակյան սահմանամերձ կայարանը, Զեխոսուլովակիայի տերիտորիայում, հարձակվեցին նրա վրա, ըլթայեցին և գերմանական սահմանապահների ողնությամբ քարշ ավին Բավարիա:

Գերմանական դադտերի վոստիկանության գործակալներն առանձնապես սահմանադաշտ դարձան ՀՈԼԼԱՆԴԻԱՌՈՒՄ: Եմիգրանտ Գուտցեյտը տեղական թերթերում յեզած հայտարարության համաձայն դնաց աշխատանք փնտրելու: Նրան ուղարկեցին մի մարզու մոտ, վորն իր թե կարող եր աշխատանք տալ Հաարլեմում: «Սիրալիր» մարդը Գուտցեյտին նստեցրեց իր ալտոն, բայց տարավ վոչ թե Հաարլեմ, այլ գերմանական սահմանը, ուր հակաֆաշիստը հանձնվեց դադտնի վոստիկանության գործակալներին:

Այս պատմությունն այնքան աղմուկ բարձրացրեց, վոր նույնիսկ հոլանդական վոստիկանությունը ստիպված յեղախձերակալել հոլլանդական հպատակ մի անձնավորության, վորը մասնակցել եր առեանդմանը: Սակայն հակաֆաշիստ եմիգրանտները չեն կարող հույս դնել «գեմոկրատական» կառավարությունների ոժանդակության և պաշտպանության վրա: Ֆաշիզմի

դեմ մղվող պայքարում միայն պրոլետարական մարտական համերաշխությունը կարող է վերջ տալ Փաշխտական բանդիտիզմին :

## ՀԱՅԻ ԹԵ ԻՆՉ Ե ՊԱՏՄՈՒՄ ՖԱՇԽՍԱԿԱՆ ՏԵՌՈՐԻ ԶՈՅԸ

Գերմանիայի կարմիր ոգնությունը, վոր աշխատում է ընդհատակ ամենածանր պայմաններում, մի նախկին քաղաքանտարկյալից ստացել է մանրամասն զեկուցում Կուբերդի համակենտրոնացման ճամբարի մասին, վոր գտնվում է հարավային Գերմանիայում։ Այստեղ շարունակում է տիրել ամենալայրագ տեռորը։

Ահա թե ինչ ե պատմում կենդանի վկան և Փաշխտական տեռորի զոհը։

«Կուբերդը գտնվում է Ռում քաղաքից կես ժամվա ճանապարհի վրա, — վոտքով դնալու դեմքում։ Այդ մի ահավոր բերդ է, վորի մեծ մասը գտնվում է գետնի տակ։ Յերկրի վրա յերեսում է միայն մի բարձր աշտարակ, վորտեղ այժմ տեղափորված է պարետային մասը։ Այսպես կոչված՝ «Յեպպելինը» (ստորին հարկ) և «Ջրահապատը» (վերին հարկ) դտնվում են գետնի տակ։ Կալանավորների կամերաները կառուցված են մեկմեկու վրա։ «Ջրահապատը» նշանակված է նորեկների համար։ Նա բաղկացած է 8 ընդհանուր կամերաներից և 3 կարցերներից, ուր նստեցնում են ձերբակալված կալանավորներին։ Յուրաքանչյուր կամերան ունի 6 մետր յերկարություն, 5 մետր լայնություն և 2,5 մետր բարձրություն։ Կամերաները յերկրի մակերեսույթից 3—4 մետր ներքեւ են գտնվում։ Պատերից կախված են 24 ժահճակալներ, ամեն մի կամերայում յերեք մահճակալ, ընդամենը կա 20 աթոռ։ այսպիսով չորս կալանավորներն ստիպված են ուտելիս կանգնած մնալ։ Բոլոր կամերաները սարսափելի խոնավ են։ Պատերի միջով ջուր է անցնում։ «Ջրահապատի» կամերաներում կարդալը խստիվ արգելված է։ Յեթե մի վորեն կալանավոր իրեն թույլ է տալիս զուգարանում դտած հին լրացիքը տանել կամերա, նրան ութ որ նստեցնում են կարցերում։ Կարցերը խալվար ու խեղդուկ մի խուց է, վորտեղ կալանավորները որական ուտելիքի միայն կեսն և ստանում։ Կարցերով պատ-

ժված կալանավորները զբկված են բակը դուռս դալու իրավունքից և պատժի ամբողջ ժամանակամիջոցում պետք է մնան պուանց արեի լույսի։ Դժվար չե պատկերացնել, թե ինչպիսիք մթնոլորտ ե տիրում այդ խավար կամերայում, ուր ոդը թափանցում է միայն 12 սանտիմետր լայնությամբ յերկու անցքերից, փորսնք բացված են գուան մեջ։

Ճամբարը պահպանում են պահնորդական ջոկատները, վո-  
րոնք զինված են հրացաններով ու ատրճանակներով։ Աշխա-  
քի տեղերում հսկողությունը հանձնարարվում է ատրճանակնե-  
րով զինված գլուհականներին։ Կալանավորները հագել են Բեռլի-  
նի տրստվայի ծառայողների հին, սև ատրապը։ Շալվարների ու  
թևերի վրա կարմիր շերտիկներ են կարված, — վորպեսզի ճամ-  
բարից փախչող կալանավորը նկատվի։ Հաղուստը կրելու վե-  
րաբերյալ կանոնների ամենաշնչին խախտման դեպքում կալա-  
նավորը պատժվում է, — 3 որ կարցեր ե նստում։

Յուրաքանչյուր կալանավորի ընդունելիս նրան աքացի յեն տալիս, ապտակում են, հաճախ գաղանային ծեծի յենթարկում։

Ուլժայի մի նկարիչ այդպիսի պայմաններում խելագարվեց և անհրաժեշտ յեղալ նրան տեղավորել Տյուրինգինի հոգեկան հիմնադիների տանը։ Նույնը պատահեց նաև մի ուրիշ բանտարկյալի — 25 տարեկան բանվոր Մեյերի հետ։ Նա իր քրոջը գըրել եր, թե այլևս ուժ չունի տանել այդպիսի պայմանները, զեռում ե, վոր մոտ ե իր մահը, — և դրա համար տեսչի ներկայությամբ այնպես դաժան ծեծեցին նրան, վոր նա տեղն ու տեղափակվեց։ Այս «միջազգեպից» հետո Մեյերը ծանր հիմնդացավ։ Զնայելով դրան, կալանավորին 40 աստիճան տաքությամբ ուղարկեցին դաշտում աշխատելու։ Այստեղ նա պետք է կարտոֆիլով լցրած պարկեր տաներ։

Յուֆենտառլեզնի մի յերիտասարդ կոմունիստ, վորը գեղ 1931 թվականին, կոմկուսակցությանը պատկանելու համար դատապարտված եր 3 տարվա տաժանակիր աշխատանքի, նույն քաղաքում դաժան ծեծի յենթարկվեց։ 1934 թվականին նա արդեն կրել եր պատիքը, բայց փոխանակ աղատելու, տեղափոխեցին կուրերդ, վորտեղ նա յերկար ժամանակ գտնվում եր ստոցին կաղեմատներում, յենթարկվում եր գրոհականների հարերկյա կաղեմատներում, յենթարկվում եր գրոհականների հարածանքին, վորոնք նրան մի բոպե անդամ հանդիսաւ չելին թողնում։

Զնայելով վերակացուների կոպտություններին և Կուրերգի ճամբարի կյանքի անտանելի պայմաններին, կալանավորները չեն ընկճղում։ Նրանք գոտեսնդլում են միության միջոցով։ Հուսահատության բոպեներին նրանք քաջալերում են մեկ-մեկու։ Նախկին կալանավորներից մեկը տողերիս գրողին մի անդամ ասաց — «Յես վոչ մի տեղ չեմ հանդիպել ազնիվ սիրա ունեցող այդքան մարդկանց, վորքան հանդիպել եմ կուրերգի համակենտրոնացման ճամբարում գտնվող կալանավորների մեջ»։

## Յ Ա Խ Յ Յ Ի Յ Լ Ե Տ Ս Ո

Ո... ո... ի...

Վերջին վողբերդական ճիշը բարձրացավ, զարնվեց հաստ բետոնի պատերին և տարածվեց հսկայական բանտի բոլոր հարկերում։

Նորից տիրեց լոռություն։

Ընկերների խումբն անջատված էր ու ցրված։

Յերկուական հոգի, հազիվ քարչ տալով ծեծից ու խոշտանգումներից ընկճված մարմինները, մեղ տանող զինվորի սլինի սպառնալիքի տակ, մենք անցանք բանտի մութ դռներից։

Գիշերվա պաղ ողը ներխուժեց կուրծքս և անցավ ամբողջ մարմնի վրայից։

Սարսուացի...

Իմ աչքի առաջ մի զինվոր հայհոյեց ու հրեց մի ընկերոջ։

— Ինչո՞ւ համար անհրաժեշտ ե դուռը ծեծել, — հազիվ լսելի ճայնով ասեց ինձ մոտ կանգնած մի յերիտասարդ զինվոր, — նրանք ձեղ ծեծե՞ցին։

Դրսի կարցերումն ենք։

— Մեկ, յերկու, յերեք... ութը, զեկուցողն ել ինը...

Զեկուցում ե ուղղմականորեն կանգնած բանտապահը, բանտի անորինի ոգնականին։

— Բոլորից վերցնել վոտնամանները — կարդադրեց նա անցավ։

Բանալին շխշխկաց ու յերկաթյա դուռը փակեց մեզ վանդակի մեջ զաղանների նման։ Նոր շխշխկոց և մեծ աղմուկով փակվեց նաև արտաքին դուռը։ Մութ ե։ Աչքերը կամաց կամաց վարժվում են մթության։ Միայն արտաքին դոսան վոքը

պատուհանից ներս և խուժում լույսի փոքր ճառագայթը կախված լամպից։ Այդ ճառագայթը մտնում է յերկու մետր տարածություն ունեցող անցքերից։ Մաշված ու կեղտուտած պատերի վրա հազիվ կարգացվում են ծուռ ու մուռ գրերով նկարագրված տանջանքները կամ վողեռությունը նրանց, վորոնք մեղանից առաջ յեղել են այստեղ։

Ողը նեղվում է այս փոքր նկուղում, վորտեղ միայն փոքր պատուհանից մտնում է մաքուր ողի հոսանք։

Հանդիսա խոսում ենք ստեղծված դրության մասին։

Խեղդվում ենք. ցեմենտը քաշում է մեր մերկ վոտքերը։

Հանկարծ սոսկալի շվոց անցալ բանտի մի թերից դեպի յերկրորդը և միացալ յերրորդ թերի շլոցի հետ։

Ավելի փորձառու ընկերը բացատրեց, վոր դա ազգանշան և խուճապի, աղմկելու։

Յեվ հանկարծ չենքը մեր գլխի վրայից ցնցվեց ու գլուխաց։ Կարծես թե մոտիկից անցնում եր շոգեշարժ։

Բոպեական լուսություն...

Յեվ նորից նույն ցնցումը, նույն վոռնոցը։ Ավելի ուժդին և կարծես թե ամբողջ բանտը պիտի փլվի, պիտի խորտակվի վոտնամանների հարվածների տակ։

Լույսում են մարդկային անջատվող հառաջանքներ։

Նորից վորեե մեկին դուրս են հանում և ճանապարհում դեպի կարցերը, ծեծում են։

Վերջապես գիշերը ծանրացալ ու դանդաղորեն գրավում է ամեն ինչ։

Ընկերներից վոմանք պլորվեցին ցեմենտի վրա։

Տիրեց լուսություն, վորը խանդարվում եր միայն պահակի միապաղաղ վոտնամաճյներից։

Յերկրորդ որն ե, վոր վոչ մի բանտապահ չի դալիս, մնացել ենք առանց ջրի, վեղբոները լիքն են կեղաստություններով։

Խոր բծեր առաջացան անքնությունից տանջված դեմքերի վրա։

Չուշացավ և սովոր։

§

Աղիքներն անդադար կոկում են, բերանը չորացել ե, աչքերը ցցվել են մեռելների աչքերի նման։

Դրսից հասնում են զինվորական հրաժանի ձայներ։

Յեվ բաղմաթիվ վոտքերի ձայնը տարածվում է բակում։

Մի վաշտ զինվորներ :

Հսկում են սուբերի գղրդոց : Հետաքրքիր մի անձնավորություն նայում է մեր նկողում, հայհոյում ու անցնում : Յերկուոր ե, վոր կտրված ենք ընկերներից :

Սկսում ենք գուշակել :

— Ծեծված են — ասում ե մեկը :

— Քանի վոր այստեղից չանցուցին, հավանութեն կարցեր են տարել, այլելացնում ե մյուսը :

Ցցվում ե տնորենի ողնականի գլուխը. նրա արյունոտած աչքերը հառում են մթուժյան մեջ :

— Զուր ենք ուղում, վեդրոները լիքուն — բողոքում ե ընկերներից մեկը :

Բանտի տնորենի ողնականի բերանը ծովում է —, նա ըունոտ քմծիծաղով ցույց ե տալիս իր սեղմած բունցքը, վորի միջամատը ցցվում է :

— Կհա ձեղի ջուր : Յել անցավ :

Բերանը հաղիվ է բացվում, կոկորդը չորացել է : Արտասանվող խոսքերը հաղիվ են լավում : Ընկնում ենք ցեմենտի վրա : Վողբալի հառաջանքը ցնցեց կարցերը : Բոլորու վատքի կանգնեցինք :

Կարցերի մի անկյունում ընկած ե թոքախտավոր մի ընկեր . նրա վոսկրոտ ձեռքերը վերջին ջանք ելին թափում պատռելու հագուստները և աղատելու նրան խեղդվելուց :

Վոչ հաց, վոչ ել ջուր, այլ մաքուր ող եր պահանջում :

Լսվում են շշուկներ :

Գունը նրան հանգստացրեց :

Պատի վրա լսվեց թեթև խիոց :

Ցնցվեցինք :

Վերստին խփոցը կրկնվեց : Բոլորս դարձնեցինք :

Զգիտենք ով ե և ինչու համար ե խփում : Դուրս յեկալ վոր ընկերներից մեկն իմանում է բանտարկյալների այբբենը :

Յել ահա ուրախալի խոսքը :

— Մեր ընկերներ :

Իմացանք վոր բոլոր քաղաքական բանտարկյալները դտընգում են կարցերներում մեր տակի հարկում, իսկ մյուս կարցերները լիքն են քրեական բանտարկյալներով :

Կարծես թե ընկերները բաժանված չեն հաստ բետոնի պատերով և դտնվում են իրարու մոտ :

Խփոցների միջոցով խռոակցությունը շարունակվեց :

Այս դիշեր քաղաքում պիտի լինեն բողոքի ցույցեր և ողիտի բարձրացվեն տրիբունաներ : Դուրսը հանդես են գալու մեր պայքարին աջակցելու համար :

Ինչ ուրախություն ենք զգում . մոռացանը հոգնածությունը, սովոր :

Նոր ուժեր ներխուժեցին մեր կրծքերը : Յեկ մենք հասանալ վճռեցինք դիմադրել և պայքարել մինչև վերջնական հաղթանակը :

## ՀԱՐՑԱՔՆԵՐԻ ԹՅՈՒՆ

1933—34 թվականների ընթացքում գերմանական հեղափոխական դրող ընկ . ԲԲԵԴԵԼ 13 ամիս անցկացրեց Համբուրգի մոտ գտնվող Փաշխտական բանտում և համակենտրոնացման ճամբարում : Մի անգամ, յերբ արդեն «Հատուկ հանձնարարությունների զորախումբը» (Փաշխտական) հերթական խոշտանգումների յիր յենթարկել Վիլի Բրեդելին, մի ընկեր, վոր նրատած եր հարեան կամերայում և նրան ճանաչում եր Համբուրգի յերիտասարդության մեջ կատարած հեղափոխական աշխատանքից, պատը թիկթիկացնելով նրան հասկացրեց հետեյալը . — «Ինչ կերպ լինի, համբերել, ազատվել, հրապարակել այն ամենն, ինչ վոր Փաշխտներն անում են իրենց ձեռքն ընկած բանվորների հետ» : Մի քանի որից հետո այդ ընկերը կախվեց իր կամերայում : Սակայն Վիլի Բրեդելն ամեն ինչ տարավ : Նրան հաջողվեց կենդանի մնալ և ազատվել բանտից : Ներկայումս նա ապրում և աշխատում է ԽՍՀՄ-ում : «Փորձություն» կոչված իր ցնցող գրքում Վիլի Բրեդելը նկարագրում է Փաշխտական զնդանները : Բերում ենք մի հատված այդ գրքից :

... Կես դիշերից մի փոքր առաջ հարեան միջանցքից վոտնածայն ե լավում : Տորստենը լսում ե լարված... կամարների տակ արձագանքում և պայտած կոհիների դոփյունը : Դուռը բացվում ե :

Տորստենին տանում են նույն ճանապարհով, վորով մի քանի ժամ առաջ գնացել եր Միդիկեն : Այն ժամանակ, յերբ նրանք

զնում են խուլ ու խավար միջանցքներով, սենյակներից մեկում կարձ ու սրտամմլլիկ ճշում ե մի կին: Սպար կրկին լոռություն: Ուղեղցորդները շարունակում են գնալ, կարծես վոչինչ չեն լսել... Ստորերկբյա միջանցքներմ կանգ են առնում...

— Կանդէնի՛լ, յերեսով զեալ՛ ուստ'աը:

Հարեան սենյակից դուրս են զայիս նոր պահնորդներ: Սըրանց մեջ ե դրոհակալոն ջոկատների պետ Դուզենչենը: Նա ծանրաքայլ մոտենում ե Տորստենին ու քաշքում նրա թեւ:

Սպար շուռ յեկ: Ուրեմն դո՞ւ յես ույժատադի պատղամափոր յեղել: Կոմունայի պատղամափո՞ր: Պարասիսանի՛ր:

Տորստենը շուռ ե զայիս ու նայում լայնադիր վուների վրա կանդնած, ցածրահասակ մի մարդու կատաղի, կարմիրմանիշակագույն դեմքին: Հարբեցող ե: Անասուն: Զար անասուն: Տորստենը նայում ե ուշադրությամբ ե լոռում... Դուան մոտ կանդնած ժամապահը դոչում ե.—

— Ուշադրությո՞ւն...

«Ուշադրությո՞ւն»: Մարմինները քարանում են, կրունկները շրիկում, բարձրանում ե աջ ձեռքը:

Մի հայացքի անդամ չարժանացնելով վողջունող պահնորդականներին, բարձրաստիճան այցելուները նրանց կողքից անցնում են հարցաքննության սենյակը:

Շքեղ ե յերթը, — դարչնագույն զամշ, դարչնագույն գըգակների վրա կարմիր ու կապույտ ժապավեններ, փայլուն կաշի, ատրճանակի ծանր պատյաններ, միջանցքի լապտերների ազոտ լույսի տակ փայլվում են կոշիկների կինոմունագույն ու սև ճիտքերը, տրեզները, ջքանշանները... Կոկետությամբ որորվում ե պատվո զենքը... Գրոհական պետ Դուզենչենը հետեւում ե նրանց...

— Տո՞րստեն, յեկ այստե՛ղ:

...Կալանավորը հանդիսա քայլերով մտնում ե մի մեծ, բոլորովին դատարկ սենյակ: Սպաները և քաղաքացիական իշխանավորները կիսաշրջան են կազմում: Մեծամարմին, կլորագլուխ մի մարդ գլխով կանչելու նշան ե անում Տորստենին...

— Պարոններ, յես ձեզ ասացի, թե ով եմ և մշտապես վորտեղ եմ ապրում: Դրանով յես ամեն ինչ ասացի:

Հարցաքննող կոմիսարը, ծանրաշարժ ու արհեստական վոտով մի մարդ, քիչ կաղալով մոտենում ե հարցաքննվողին և բառերը շեշտելով հարցնում.—

— Արդյոք չե՞ք ուզում դրանով ասել, վոր դուք հրաժարվում եք վկայություններ տալուց:

— Ճիշտ այդպես, պարոն կոմիսար: Ձեզ հայտնի յէ իմ քաղաքական դերը: Դուք ի՞նչ կասեցիք այն մարդու մասին, վորը, դանվելով իմ դրության մեջ, կմատնեք իր ընկելներին:

— Այսուղի խոսքը վերաբերում է վո՞չ բարոյականության, խոսքը վերաբերում է Գերմանիային: Ձեզ բարի խորհուրդ եմ տալիս, — ճիշտ պատասխանեցեք իմ հարցերին:

— Յավում եմ, պարոն կոմիսար:

— Դու ցավո՛ւմ ես, — կատաղած Փշում և կոմիսարը և հաստ գլուխը մոտեցնում Տորստենի դեմքին. — ցավո՛ւմ ես:

Կայծակնարթափ հարվածն իջնում և Տորստենի քիշին ու վերին շրթունքին: Հանկարծակի դալով յերերվում է նա...

— Վոչ թե ցավել, այլ պատասխանե՛լ:

— Ցես այլես վոչ մի խոսք չեմ ասի:

Մի ակնթարթ մեռելային լրություն և արիում...

— Դժբա՛խտ խելացնոր, — Փշում և բարկությունից ու կատաղությունից ճերմակած ճաղատ կոմիսարը և հրամայում, վոր իրեն տան մոտավորապես մի մետք յերկարությամբ մի սեպատյան:

Նա դանդաղ բաց և անում պատյանը: Բոլորը նայում են: Տորստենը — նույնպես: Վերջինս չի պատկերացնում, թե ինչ և թաղնված այդ պատյանում: Կոմիսարը հանում է սե, ուստինե մտրակը, վոր ունի մանրակրկիտ խնամքով պատրաստված կոթ: Դարձնակալած տեսքով թեքում և գլուխը դեպի Տորստենը և հարցնում: —

— Հիմա կպատասխանե՞ս:

Տորստենը նայում է նրան: Նա հասկացավ և... լուսմ և:

— Կպատասխանե՞ս թե վոչ:

Տորստենը կանգնած է մեռածի նման:

— Կոացիր:

Տորստենը դունատվում է: Նա չի շարժվում:

— Կոացի՛ր, — զոռում և կոմիսարը, — կոացի՛ր, խո՛զ:

...Յերեք պահնորդական նետվում են Տորստենի վրա: Մեկը թեքում է նրա գլուխը: Մյուս յերկուսը վերցնում են նրա թերերը և վոլորում են դեպի վեր, այնպես, վոր նա գալարվում է ցավից: Կոմիսարը դանդաղ առաջ և շարժում չծալվող վոտը,

ճիշտ նշան ե բռնում և ուժեղ թափ վերցնելով, ուստինե մտրակի հարված ե տալիս Տորստենին: Սարսափելի, շրմիող հարված: Խոշտանգվողը դարձուանքով բռնված, հառաջում ե, բայց դարձյալ չծալլող վոտը դեպի առաջ և շարժվում ու լըսվում ե նոր հարվածի ձայնը: Յերրորդը, չորրորդը, հինգերորդը: Տորստենը խոխում է զլսին: Գանգի մեջ նա արձնի ծանրություն ե զդում:

Պահնորդի ձեռներն ազատում են նրա գլուխը. Տորստենը դանդաղությամբ ուղիղ դիրք ե ընդունում: Նրա աչքերի առաջ լողում ե ամեն ինչ: Նա հավաքում է ուժեցը, կուլ ե տալիս թուքը և տեսնում, վոր իր շուրջը դեռ կանգնած են՝ գրոհական ու պահնորդական ջոկատների պետեցը. քաղաքացիական պաշտոնյաներ և վախմիստրներ... Ծեծողը, վոր ամառային վերարկու յի հաղել, բաժանվում է խմբից ու մոտենում պատեհանին:

— Վորքա՛ն համառ եք դուք: Ինքներդ եք ձեղ վնասում: Մենք ավելի ուժեղ ենք:

Տորստենը շարունակ նայում է այդ դիրուկ այտերով և փափկամորթ մարդուն, վորն այստեղ անորինում է կյանքն ու մահը: Տորստենը չի պատասխանում:

Կայսերական փոխանորդը սառը ժայխառվ, ուսերը թափահարելով դառնում է մի կողմ և դահիճներն իսկույն նետվում են դեպի զոհը: Ութերորդ հարվածից նրա ծնկները ծալվում են և դեմքը խփվում է հատակին:

— Մի դույլ ջո՛ւր բերեք, — բոռում է դրոհական պետ Դուղենշենը, լրջաղեմ վաղվում գանակոծվողի շուրջը, նրա դեմքը քաշըշելով վերև և բարձրացնում, չանգուստ ե նրա կոպերը. — Կարող ե պատահել, վոր այս տղան կեղծում ե...

Պահնորդը պառկած դոհի առջև մի դույլ ջուր է դնում: Յերկու վախմիստը մի քիչ բարձրացնում են զոհին, յերրորդը բռնում է նրա գլխից ու մացնում ջրի մեջ: Տորստենի մարմինը ցնցվում է ջղաձղորեն: Գլուխը դուրս են քաշում ջրից: Գլուխը հաղիվ որորվում է: Ծնոտները ցնցվում են:

— Մի անդամ ե՛լ, — հրամայում է Դուղենշենը:

Նորից գլուխը հրում են ջրի մեջ: Մի քիչ հետո զոհի վոտները խփվում են հատակին, մարմինը գալարվում է: Յերբ ջըրից հանում են Տորստենի գլուխը, նրա աչքերը դուրս են յերբից հանում:

կել, թրջված մաղերը կախվում են դեմքին, կիսաբաց բերանն աղահությամբ կլանում ե ողը:

Արհեստական վոտով կոմիսարը բռնում է Տորստենի բաճկոնից:

— Այս բոլորը դեռ չեւ վերջացել, տղա՛ս: Խոկական գործը հիմա յեւ սկսվում: Յեթե հարցերին չպատասխանես, մենք այսպես կշարունակենք ամբողջ գիշերը, մինչեւ վոր սատկես: Հասկացա՞ր:

## ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՆՍԱՅԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱԼԱՏԻՆ ԿԻՑ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԲԱՆՏԸ

Փետրվարի 12-ին, կեսորին ֆրանսիական յերեք պատվիրակ գնացին քրեական գործերի № 2 պալատը, վորտեղ գտընդում են ապստամբությունից մի շաբաթ առաջ ձերբակալված՝ շուցբունդական ջոկատների 23 առաջնորդները, սրանց թվում՝ կապիտան Լեվլը և մայոր ԵՅՖԼԵՐԸ:

Բանտի գիրեկտորի ուղեկցությամբ պատվիրակները բանտարկյալներին յելլրայրական վողջույն և լիակատար համեմաշխություն հայտնեցին ամբողջ աշխարհի, մանավանդ Ֆրանսիայի հակաֆաշխատական աշխատավորների կողմից: Պատվիրակները յուրաքանչյուր քաղբանտարկյալների հարցեր Եյին տալիս: Բոլոր քաղբանտարկյալները զանգատվում եյին, վոր արդեն 13 ամիս և, ինչ բանտարկված են քրեական հանցավորների հետ, բայց մինչեւ այժմ իրենց չի հայտնված մեղադրական ակտը:

Բանտային ռեժիմը վերջին ժամանակներս խիստ վատվթարացել է, — ասում եյին քաղբանտարկյալները, — թույլատրվում ե շաբաթական ստանալ միայն մեկ տուփի ծխախոտ, մինչդեռ առաջ ստանում եյին 3 տուփի: Բանտարկյալներն իրավունք չունեն դրսից տաք կերակուր ստանալ, իսկ այցելությունները թույլատրվում են միայն շաբաթը մեկ անգամ, այն ել 5 բողեյով:

Քաղբանտարկյալները խոսում են նաև այն սարսափելի աղքատության մասին, վորոնց մեջ գտնվում են նրանց ընտանիքները:

Նրանցից 19-ն ընտանիքավոր մարդիկ են և նրանց բան-

տում դանվելու ժամանակ Վեննայի քաղաքային վարչությունը  
կրկնապառկել է այդ ընտանիքների բնակավարձը — 16-ի փո-  
խարեն 32 շլինգ է գանձում :

Քաղբանտարկյալներից նրանք, ովքեր ծառայողներ եյին,  
հեռացվել են առանց վարձարության, իսկ նրանց գործերը չեն  
քննվել դիսցիպլինար խորհրդում :

Խնայդրամարկղի անդամներին մերժմել է վճարել դատա-  
վարական ծախքերը :

Մյուս կողմից բոլորը հայտարարում են, թե ՄՈՊՐ-ն ող-  
նում և նրանց ընտանիքներին և առանց այդ ողնության նրանք  
կլինեյին ամննասե կարիքի մեջ :

Պատվիրակությունը նրանց հավաստիացրեց, թե ՄՈՊՐ-ը  
չարունակելու յե քաղբանտարկյալներին ողնություն հասցնելու  
աշխատանքը, անկախ նրանց կուսակցականությունից և քաղա-  
քական համոզմունքներից : ՄՈՊՐ-ի փաստաբանները պետք է  
ներկա գտնվեն դատավարությանը և քաղբանտարկյալների ըն-  
տանիքներին ողնություն պետք է տրվի մինչև նրանց ազատվե-  
լը : ՄՈՊՐ-ը նրանց կոչ և անում աշխատակցել իր հետ, միաս-  
նական Փրոնտի իրագործման համար, վորը բոլոր յերկրներում  
կտապալի Փաշեզմը և բանվորա-դյուլացիական կառավարու-  
թյուն ստեղծելու միջոցով կապահովի խոկանան արդարադատու-  
թյունը :

Այդ ժամանակ չուցբռնդականները սկսեցին հարց ու փորձ  
անել ֆրանսիայում միասնական Փրոնտի նվաճումների մասին և  
զարմացան, իմանալով, վոր 2-րդ ինտերնացիոնալը, Արհմիու-  
թյունների Միջազգային մեդերացիան և Մատեռտակի Փոնդը  
մերժել են ՄՈՊՐ-ի առաջարկը համերաշխության միասնական  
կազմակերպություն ստեղծելու մասին :

Հրաժեշտ տալով պատվիրակությանը, քաղբանտարկյալնե-  
րից շատերը քացականչում եյին «Ռոտ Փրոնտ» (Կարմիր Փր-  
ոնտ) :

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԳԵԼՈՒՄ Ե ԱՅՑԵԼԵԼ ԲԱՆՏԵՐԸ

Հետեւյալ որը, փետրվարի 13-ին, ֆրանսիական յերեք  
պատվիրակները թույլտվություն չստացան Վեննայի բանան այ-  
ցելելու համար : Հասարակական հսկողության դիրեկցիայի շեն-  
քում նրանք յենթարկվեցին յերկարատե հարցաքննության, այ-

նուհետև նրանց խուզարկեցին և հանեցին նրանց անցագրերի ճիշտ պատճենները, Վերջապես, նրանց հայտարարեցին, թե մինչև Փարփղից, լիազոր ներկայացուցչից կարգադրություն ստանալն այցելությունները դադարեցված է:

Պատվիրակները բողոք հայտարարեցին: Նրանք ախրանկայի գիրեկառրին ասացին, թե վերջինիս մերժումը համարում են խուսափում և համենայն դեպս ավտորիական կառավարության կողմից տրված խոստման չկատարում:

«Այդ միջոցով դուք ապացուցեցիք, — հայտարարեցին պատվիրակները, — վոր ձեր կառավարությունը չի կատարում այն, ինչ վոր ասում ե, վոր նա վախենում ե պատվիրակներին ցույց տալ նախնական կալանքի վոստիկանական բանուը, վոր տեղ ապօրինի կերպով պահպան և տանջանքների յեն յենթարկ-վում մեր յեղբայրները»:

Սակայն ամբողջ աշխարհը կիմանա, վոր դուք մեղ մերժեցիք, նա կիմանա, վոր յեթե ավտորիական ֆաշիզմն ալելի կեղծավոր ե, քան գերմանական ֆաշիզմը, ապա վերջինիս հետ նա համարձակ կերպով կարող ե մըցել իր դաժանությամբ»:

## ԹԵ ԻՆՉՈՒՍ ՄԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՅԻՆՔ ԽՈՐՃԴԱՅԻՆ ԱՍՏՈՒՐԻԱՅԻ ՀԱՄԱՐ

1935 թվականի մարտ ամսում Մոսկվա ժամանեցին Խաղանիայի մի խումբ քաղեմիգրանտներ, — 1934 թվի հոկտեմբերի հերոսական մարտերի մասնակիցները: Ժամանածների մեջ կային մի քանի հանճարործներ, վորոնք ամենիշական մասնակցություն են ունեցել խորիրդային Աստուրիայի համար մղված պայքարում: «Ինտերնացիոնալի Մայակ» ժուրնալի թղթակցի հետ գրուցելիս, Ռվիեդոյի գրավմանը մասնակցած բանվոր-կոմունիստներից մեկը, — ընկ. Ռոդրիգեցը հաղորդեց հետևյալը. —

«Հոկտեմբերի 6-ին մենք սկսեցինք հարձակումն Ովիեդոյի վրա: Այդ ժամանակ քաղաքում արդեն կազմակերպված եր բանվորական միլիցիա, իսկ բոլոր քաղաքամերձ շրջանները լցվել են ին պարտիզանական ջոկատներով, վորոնք Աստուրիայի զանազան վայրերից յեկել եյին այդ նահանդի մայրաքաղաքը գրուհու հու համար»:

Հոկտեմբերի 7-ի առավոտյան սկզբեց վճռական ճակատամարտը: Մեր կարմիր ջոկատները դրու տվին կառավարական գորքերի դեմ, վորոնք թաղնվել եյին գեներալ-նահանդապետի շենքում: Մեր դրությունը խիստ ծանր եր, — պետք է պայքարել յինք այն թշնամու դեմ, վորը մինչև ատամները զինված: Եղ տեխնիկայի վերջին խոսքով, խոկ մենք ունեցինք միայն դինամիտ, — վոր հանքագործները բերել եյին հանքահորերից, — հեղափոխական ենտուղիազմ և մինչև վերջ, մինչև հաղթանակ պայքարելու պատրաստակամություն: Յեզ այնուամենայնիվ մենք հաղթանակեցինք: Պալատը գրավեց: Մենք ձերբակալեցինք այստեղ գտնվողներին, պահանքեր կարգեցինք և դնացինք. դրուհելու «Լյա Վեդա» կոչված զինագործարանը: Մեր հետազարդությունը կախված եր այդ ճակատամարտի վախճանից: Գըրավել այդ գործարանը, նշանակում եր ապահովիլի զինքով: «Լյա Վեդան» գրոհողների հիմնական մասսան բաղկացած եր 17-ից մինչև 25 տարեկան յերիտասարդներից: Այս տղերքը կըռվում եյին ինչպես առյօւծներ: Գոռհելով ու վերցնելով բարձր, քարե պարիսպը, նրանք բարձրացան այդ պարսպի վրա ու պաշարեցին բակը: Դինամիտը վառում եյինք պարտիզաններից շատերի ծխացող գլանակներից, այդ զինամիտի կապոցները թըռչում եյին բակը, պայմենում թշնամու բարիկադները: Մենք գրավեցինք գործարանն ու նրա հետ միանին մոտ 30 հազար հրացան: Պարտիզանալիան ջոկատները զենք ստացան, սակայն դրությունն այնքան ել չբարելավվեց, — պակասում եյին փամփուշտները, չկային բավականաչափ թվով գնդացիրներ, ուղամական պարագաները չեյին բավականանում:

Ինչպես յես արդեն ասացի, մեղ փրկեցին դինամիտը և պայքարելու կամքը: Յեզ ահա բանվոր դասակարգի գործի համար ամբողջ կյանքը տալու այդ պարտականության, Ովերդոյի մարտերի առանձին հերոսների մասին ե, վոր հիմա յես ուզում եմ պատմել:

Այդ տեղի ունեցավ յերեկոյան, կոխվների առաջին որերից մեկում, հոկտեմբերի յոթին կամ ութին: Մենք հարձակվում եյինք Նարմանին կոչված գորանոցի վրա, ուր բարիկադներ եյին կառուցել մոտ հիսուն քաղաքացիական գվարդինականներ, իրենց թնդանոթներով ու գնդացիրներով: Թնդանոթների համարիկերը մեղ հանքավորություն չեյին տալիս մոտենալու զորանոցի շենքին, հեռվից կրակել մենք չեյինք կարող, հարկավոր

Եր ինայել փամփուշտները, գնդացիրներ մենք չունեյինք: Անցնում եյին ժամերը: Մարդիկ ընկնում եյին մեկը մյուսի յետևից, թշնամու գնդակներից: Դրությունն ավելի և ավելի յեր լարվում: Այդ ժամանակ մարտիկներից մեկը, մի յերիտասարդ կոմյերիտական, վորի անունը յես չդիտեմ, ասաց իր չուրջը դաշնվողներին.— «Թող մեկը մեռնի, բայց մենք պետք ե հաղթենք»: Մենք նրա խոսքերի խմաստը չասկացանք մինչև այն ժամանակ, յերբ տեսանք, վոր նա դրապաններից հանում և դինամիտը և կապում գոտուն: Թնդաց ելի մի համազարկ: Ելի՛ յերկուսն ընկան: Այդ ժամանակ նա թնդանոթային աղմուկի մեջ դոռաց: — «Կեցցե՛ կոմունան» և նետվեց առաջ, դեպի թշնամին: Նա գընում եր առանց զենքի, ծխախոտի գլուխակը բերնին, ձեռները դրապանները դրած: Նրան կարող եյին համարել թշնամու կողմը վախչող, բանակցությունների համար ուղարկված պատգամավոր, պատահմամբ կարմիր դվարդիականների մեջ ընկած բընակիչ: Նա մոտեցավ զորանոցի դարբասին: Հրաձգությունը դադարեց: Նա բարձրացրեց ձեռքը, գլանակը հանեց բերանից... Շուրջն ամեն ինչ դպրդաց, քարերն ու սլաղը դեսուզեն թռան, մարդկային ճիշեր լսվեցին: Կրակի կարմիր լեզուները սկսեցին լիզել քարուքանդ յեղած պատերը: Ընկա՞լ Նարմանին զորանոցը:

Այն դեպքը, վորի մասին յես հիմա պատմեցի, յեղակի չե: Իսպանիայում հոկտեմբերյան մարտերի որերին այդպիսի եղիքողների թիվը հարյուրների յեր հասնում: Բավական ե միայն հիշել տասնվեց տարեկան անվեհեր կոմյերիտաւհի, գնդացրողուհի բերտարին, վորն ապահովեց պարտիվանական ջոկատների նահանջը հյուսիսային կայարանից և հայտարարեց սպիտակդվարդիական բանդիտներին, վորոնք նրան վիրավորեցին գնդացրի մոտ: — «Յես հպարտանում եմ նրանվ, վոր մեռնում եմ իբրև կոմունիստուհի»: Բավական ե հիշել մեր փոքրիկ Ախղային, — տասնհինգ տարեկան մի աղջկա, վորին գնդակահարեցին գեներալ Ոչոայի դորքերը: Այդ աղջիկը մեռնելուց առաջ թափահարեց հեղափոխության արյան պես կարմիր իր ծամակալը և գոչեց: — «Կեցցե՛ կոմունան»: Բավական ե հիշել տասը բատրակներից բաղկացած ջոկատը, վոր գիրք բոնելով Գրագոյից վոչ հեռու, գեներալ Ոչոայի դորքերի ճանապարհին, միայն գնդացրով և փոքրաքանակ դինամիտով փախուստի մատնեցին հինգ հարյուր հոգուց բաղկացած թշնամու ջոկատը:

Յես ուզում եմ պատմել նաև մի յերիտասարդ շախայորի մասին, վորը մենակ կովում եր Մարոկկոյի զորքերի մի ամբողջ դասակի դեմ։ Նա գնդացրից կրակեց այնքան, մինչև վոր վերջացան փամփուշտները։ «Ե՛հ, հիմա դու պատրաստ ես, — դիմեց նրան մարոկկոյան զորքերի սպան, — գնա՛նք մեղ հետ։ Բանտում մենք հաշիվներս կվերջացնենք քեզ հետ, հեղափոխությանը ծառայելու համար, սրիկա»։ Յերիտասարդը չչարժվեց տեղից։ Այդ ժամանակ սպան զինվորի ուղեկցությամբ մոտեցավ նրան և ուզում եր բոնել նրա ուսերից։ Յերիտասարդը կայծակի արագությամբ գրավանից հանեց ատրճանակն ու տեղն ու տեղը գետին գլորեց սպային ու զինվորին։ Նա իսկույն գնդակահարվեց։

Դուք գիտեք, վոր Աստուրիայի կոմունան ընկավ, ճղմվելով խսպանական Փաշիստների ու գաղութային զորքերի թաթի տակ։ Ժամանակավորապես հաղթանակեցին մեր թշնամիները, նրանք, վորոնք կոկորդ եյին պատում «բոլեկիների բարբարոսության» մասին։

Յեվ ահա սկսվեց կոտորածը։

Ովկեգոյի հիմանդրոցները, — ուր վիրավորներն եյին պատկած, — ներիտուժում եյին զորքերի ամրող ջոկատներ, իմանում, թե հրանդներից ովքեր շախտայորներ են և հենց տեղն ու տեղը, անկողիններում, հրացանների կոթերով ջարդում եյին նրանց գլուխները։

Նրանք վերքերից պոկում եյին վիրակապերը և դանակներով կտրտում վերքերը, վոր հազիվ սկսել եյին առողջանալ։

Ովկեգոյի շրջակայքում, Վիլյա Ֆրիա գյուղում, ուր կար 300 բնակիչ, 17-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդեկ կըուվում եյին ոլարտիղանական ջոկատներում, 300 հոգուց 150-ին գնդակահարեցին։ Գնդակահարում եյին ծերերին, կանանց, ծծկեր յերեխաների ուլուխները պատին եյին խփում ու ջարդում։

Յանտուրիայի բանտերում սահմանված են տանջանքների յերեք աստիճանական ձևեր, վորոնց յենթարկվում են բոլոր նըրանք, ովքեր հոկտեմբերյան մարտերի ժամանակ կովում եյին կարմիրների կողմից։

Առաջին տանջանք։ Քաղբանտարկյալն անցնում է մահակներով զինված զինվորների շարքի միջով։ Շատ քչերն են հասնում

շարքի մեջտեղը : Գրեթե բոլորին դուրս են բերում կիսամեռ դը-  
րության վիճակում, մեջերի վրա բացված վերքերով :

Յերկրորդ տանջանք : Քաղաքանտարկյալի այսպես կոչված՝  
«Ժամացույցն» առաստաղից կախում են պարանով, վորն անց են  
կացնում թեկերի տակից, ձեռքերը կապում են իրանին ու սրա-  
ծայր մահակի հարվածներով ստիպում ողում որորվել այնքան,  
մինչև վոր նա կորցնում է զիտակցությունը :

Յերրորդ տանջանք : Յերկու նախորդ տանջանքներին յեն-  
թարկված բանտարկյալի վրա բոլորովին սառը ջուր են լցնում,  
դրանից հետո պոկում նրա բոլոր ատամները, յեղունգների տակ  
ծակում են քորոցներով և մաս-մաս քերթում ձեռների ու վոտ-  
ների կաշին :

Իմ բոլոր պատմածները մեկ հարյուրերորդական մասն եւ  
չեն տալիս այն ամենի, ինչ վոր հիմա ստիպված են տանել Փա-  
շխտական դահիճների ճանկերում գտնվողները : Սակայն թշնա-  
մին այդպիս դաժան և հենց այն պատճառով, վոր զդում և իր  
շուտափությունը վոչնչացումը : Յեկ յեթե մեր Հոկտեմբերյան մար-  
տերը միայն փորձ յեղան, ապա նրանց դասերը կհիշեն իսպա-  
նիայի բոլոր պրոլետարները : Այդ դասերը, հետադայում կեն-  
սագործվելով, կհասցնեն ապադա իսպանական Հոկտեմբերի  
հաղթանակին :

## ՎԱՐՆԱՑԻ (ԲՈՒԼՂԱՐԻԱ) ԲԱՆՏԻ ՔԱՂԱՏԱՄԱՐԿՅԱԼԻ ՆԱՄԱԿԸ

Թանկարին ընկեր .

Դու վաղուց ինդրում եյիր, վոր քեզ շատ բան գրեմ մեր  
բանափի մասին, և յես հնարավորություն գտա բավարել քո-  
խնդիրը :

Մեր բանտը գտնվում ե վառա քաղաքից յերկու կիլոմետ-  
րի վրա : Նա կոչվում ե Մողեռնացրած, բայց վոչ թե սուողա-  
պահական պայմանների, այլ այնտեղ մարդկանց Փիղիկական  
վոչնչացման մեթոդներ դորժաղըելու իմաստով : Առողջապահու-  
թյան տեսակետից այդ անունն ուղղակի անհեթեթ ե թվում,  
բայց այդ մասին կպատճեմ ստորեւ : Նախ և առաջ ուղում եմ  
սկսել մեր քաղաքանտարկյալների կողեկտիվի թվական կաղմից :  
Կողեկտիվը բաղկացած ե 106 հոգուց, վորոնցից 5-ը — կտնայք

(վերջիններս ապրում են վատթարագույն կանացի բաժնում) : Հստ դատավճռի մենք հետեւյալ կատեղորիսաների յենք բաժանվում : — մեկը, վոր դատապարտված և մահապատճի, նրան անվանում են Յուրդակ Թեոդորով\*) : Նա մահապատճի յեր դատապարտվել դեռ 1934 թվականի վերջին, Ռուսաս քաղաքում, և դատավճիռը դեռ չի վերացված : Նա ինքը վորակյալ մանածագործ բանվոր է : Հետո կան 5 հոգի ցմահ բանտարկության դատապարտվածներ : Նրանք դատվել են վառնայի ծովադնացների հետ, վորոնք նույնպես մահապատճի եյին դատապարտված, բայց այդ դատավճիռը վերացվեց : Ապա կան 19 հոգի, վորոնք դեռ 1925 թվականին նույնպես մահապատճի եյին դատապարտված, հետո մահապատճիռը փոխարինվեց զանազան ժամկետներով բանտարկությամբ, — 12-ից մինչև 15 տարի : 11 հոգի դատապարտված եյին 15-ական տարվա բանտարկության : Կային նաև 1—13, 8—12, 14—10, 8—7, 3 և մեկը — 1 տարով դատապարտվածներ : Մնացածների, վորոնց թվում նաև 4 կանաց գործը դեռ քննվում է :

Մեր կողեկտիվը զտնվում է 3-րդ հարկում, տեղակորչած են՝ յերկուական հոգի մենախուցերում, մյուսները — յերկու մեծ խցերում : Ներքին հարկերում տեղակորչած են քրեականները, վորոնց հետ մենք լավ հարաբերությունների մեջ ենք զբանալում, այնքան, վորքան նրանք իրենց ձնող մեծամասնությամբ բաղկացած են աշխատավոր տարրերից :

Հիմա գրեմ մեր կյանքի պայմանների, այսինքն այսպես կոչված՝ ռեժիմի մասին: Ինչպես յուրաքանչյուր կապիտալիստական բանտում, այնպես ել մեզ մոտ, զբացվում ե սովոր պակասությունը: Բանտը կառուցված է միջին թվով 250 հոգու համար: 1934 թվականին բանտարկաների թիվը հասալ 350—400 հոգու: Առավոտյան մեզ դուրս են թողնում ժամը 6-ից մինչև 7-ը, ժամը 7-ից մինչև 9½-ը — փակված ենք, 9 և կեսից մինչև 10 և կեսը — զբանանք բակում, 11 և կեսից մինչեւ 12-ունկեսը — ճաշ, իսկ հետո ելի կրկնվում ե պատմությունը: 24 ժամվա ընթացքում բակում զբոսնում ենք ընդամենը 2 ժամ, ճաշի, ընթրիքի և այլ կարիքների համար ունենք 3 ժամ, իսկ

\*) Վերջին ժամանակներս մամուլում հրատարակված տեղեկությունների համաձայն, նրա մահապատճիռը է կատար և ածված ու. թ. մայիսի առաջին կեսին:

մնացած ամբողջ 19 ժամում փակված ենք: Սա, այսպես կոչված՝ ձմեռային ուժիմն է, իսկ ամառը զբոսանքն ավելանում է 1. ժամով, այնպես վոր, խցիկներում փակված ենք մնում 18 ժամ:

Ամառը, յերբ լուսամուտները բաց են լինում, կարելի յե մի կերպ շունչ քաշել, թեև այդ ժամանակ ել ողը խիստ անմաքուր է, իսկ ձմեռը, յերբ ստիրված ենք փակել լուսամուտները, — քանի վոր խցիկները համարյա չեն տաքացվում, — ուղղակի շնչառապառ. ենք լինում ողի պակասությունից: Ահա ձեղ վառնայի տիրահռչակ Մողեռնացրած բանուը: Սակայն, իհարկե, խընդիրը միայն ողը չէ: Դրությունն այլելի վատ ե սննդի նկատմամբ: Մեր մշտական ուտելիքը լորին ե, կարտոֆիլը, վոսպը, վորոնք շաբաթը 3 անգամ պատրաստվում են հոտած մըսով, վորը չի կարելի ուտել, այնպես վոր գերադասում ենք աղով հաց ուտել: Առաջ, յեր դեռ մեղնում չկար ֆաշիստական բացահայտ դիկտատուրա, մեր պայմաններն այսչափ վատթար չելին: Այժմ յերկրում քաղցանտարկյալների թիվը հասել է 1500 հոգու, և խիստ վատթարացել ե մեր դրությունը:

Ուղում եմ մի քանի խոսք ասել առողջապահության շուրջը: Ել չխոսենք այն մասին, վոր միջանցքներում ե այլուր շարունակ կեղադառություն ե տիրում: Մեզ բաղանիք են տանում ամսական 2—3 անգամ, իսկ ամառը չկա բավականաշափ ջուր, նույնիսկ ձեռներս լվանալու համար: Այս դրության հետեանքով ինքըստինքյան հարց ե ծագում, — ինչպես ե ընկերների առողջությունը: Հին քաղ-տաժանակիր ընկերներից հաղիկ թե ինի մեկը, վոր միայն մի հիվանդություն ունենա: 1925 թվականից նատած համարյա բոլոր ընկերները թոքախտի և ստամոքսի խրոնիկական հիվանդություններ ունեն: Միաժամանակ խոշոր չափով զարդանում են ջղային, սրոի, յերիկամունքների հիվանդությունները, ոեվմատիզմը, բրոնխիտը, ել ի՞նչ ասես, վոր չկա: Համարյա բացակայում ե բժշկական ոգնությունը: Բանտի բուժարանում չեն ճարվում նույնիսկ այնպիսի բաներ, ինչպես հաղի դեղը կամ ասպերինը, ուստի սանիտարական-առողջապահական տարրական կարիքների բավարարումը նույնպես ընկնում ե մեր կոլեկտիվ մասսայի վրա: Սակայն այս հնարավորությունն ես սահմանափակի ե:

Վորպեսղի հիմա յես քեզ տամ մեր կյանքի թեկուղ ամենա-

չնչին պատկերը, պետք եւ պատմեմ, թե ինչպես բանտարկետը շարունակ բարոյական ծաղը ու ծանակի յեւ յենթուրկում մեզ: Տերեմ մի որինակ:

«Հրաման № 10: Նկատի ունենալով, վոր վերջին ժամանակ՝ ներս շատ յերկար բովանդակությամբ նամակներ են ստացվում, ուր լինում են սիրային գեղումներ, ոտար խոսքեր, կասկածելի ակնարկներ, — նախազգուշացնում եմ, վոր նման բովանդակությամբ նամակները կվոչնչացվեն»... և այլն: Դիրեկտոր Ա.իչե, 2/II, 1935 թ.:

Այդպիսի պրովակացիան դեռ մանր բան ե: Դա սաստկանում է հատկապես զարնանը, յերբ ամեն մեկն ուղղում ե ողտադարձել արևի տակ դրսնելը, բայց համարյա ամեն դարսն արդերգում ե այդ: Պատահել ե, վոր գրեթե 10 որ մենք դա բոյկոտի յենք յենթարկել, վորովհետեւ արդելքին չենթարկվող յուրաքանչյուր կալանավորի վրա պահակը հրացան ե ուղղում: Այսուղ յերեկի դու հարց ես տալիս, — հապա մենք ինչպես ենք վերաբերվում դեպի այդ յերեսույթը:

Հեշիր, թե ինչպես յուրաքանչյուր նամակում յես քեզ գրում եմ, վոր մենք բոլորս վոգով արի յենք և հաստատուն: Յել խկապես, մենք կատաղի պայքար ենք մղում այդ բոլոր պրովակացիաների և սպանիչ ուժիմի դեմ: Պայքարի ձեւերն են՝ բողոքի պատգամալորություններ, ճաշի բոյկոտ, միտինգներ բակում և այլն: Աշխատում ենք պայքարին ներգրավել քրեական բանտարկյալներին, և դա հաճախ հաջողվում ե մեզ:

Սակայն միայն մեր անմիջական շահերի համար չե, վոր պայքարում ենք: Մեր յուրահատուկ պայմաններում անց ենք կացնում մեր կուսակցության բոլոր վորոշումներն ու կամպանիաները, և ահա հենց այդ ե, վոր խկական կատաղության և հասցնում Փաշիստական իշխանությանը: Պատահում ե, վոր մայիսի 1-ի, ողոստոսի 1-ի կամ Հոկտեմբերյան տարեղարձի առջնությամբ մենք վորեն խցիկից դրոշակ ենք բարձրացնում, պահակներն ուղղակի համազարկ են տալիս մեր լուսամուտներին, ել չխոսենք կարցերների և առանձին ընկերներին ծեծելու մասին:

Ես ուղղում եմ քեզ պատմել նաև մեր ներքին, կոլեկտիվ կյանքի մասին: Չնայելով մեծ դժվարություններին, մենք բավականաչափ իմաստավորված ու կազմակերպված բնույթ ենք

տալիս մեր կյանքին, աշխատանքի հիմքը դարձնելով մեր իրավունքների համար մղվող պայքարը։ Մեր ընկերների մեջ քաղլուսավորական մեծ աշխատանք ենք կատարում։ Այս տեսակետից կարելի յե ասել, վոր մեր կոլեկտիվը բուլղարական քաղանտարկյանների ամենալավ կոլեկտիվներից մեկն է, վորովհետև ունենք լավ պատրաստված ընկերներ։ Մենք ունենք յերեք տատիճանի մարզսիստական-լենինյան խմբակներ։ Իմ մասին պետք ե ասեմ, վոր չեմ ցալում թանկաղին ժամանակս բանտում կորցնելու համար, գոհ եմ, վոր այստեղ ևս ժամանակն իղուր չի անցնում։ Յերեք տարի գտնվելով այստեղ, յես կարողացա իմ գիտելիքները հաղորդել մյուսներին, միենույն ժամանակ լավ կշուղատեցի միքանի քաղաքական հարցեր, ուսումնասիրեցի դիալեկտիկական մատերիալիզմը։

Այս նամակը յես գրել եմ չափաղանց վատ պայմաններում։ 3—4 որ առաջ մենք հարց բարձրացրինք զբոսանքը 1 ժամով ավելացնելու մասին և այս կապակցությամբ ուժեղացավ վերակացուների հսկողությունը։ Յես 2—3 անգամ պատուցի նամակը, մինչև վոր կարողացա գրել։

ՎԱՐՆԵՑՑԻ ԲԱՆՏԻ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍ

### ԶԱՎԱԿ ՌՈՒԴՈԼՖ ԿԼԱՌԻՍԸ

1935 թվականի դեկտեմբերի 17-ին Փաշիստ դահիճները գրւախտեցին գերմանական բանվոր դասակարգի լավագույն մարտիկներից մեկին, — ընկ. Կլառուսին։ Ընկ. Կլառուսը մահվան գառապարտվել, չնայելով, վոր նույնիսկ Փաշիստական դատարանը չկարողացավ ապացուցել նրա հանցանքը։

Յեվ Ռուդոլֆ Կլառուսը դարձավ նահատակ, ինչպես և գերմանական ժողովրդի հաղարավոր լավագույն ներկայացուցիչները։ Նրա կյանքի, պայքարի ու հերոսության հիշատակը միշտ վառ կմնա Գերմանիայի աշխատավորների սրտերում։ Մարտընչող Կլառուսի որինակը նոր ուժ կտա միլիոնավոր մարդկանց, վորոնք պայքարում են պրոլետարիատի դործի համար, սոցիալիզմի հաղթանակի համար։

Բուդոլֆ Կլառուսը ծնվել է Բրատունչվեյգում, բանվորի ընտանիքում։ Նրա հայրը սոցիալ-դեմոկրատական կուսակցության

անդամ եր և պատկանում եր նրա ստորին ակտիվիտերի թը-վին։ Մի շարք տարիներ նա աշխատել է բրառնչվելում, — Լյուտերի մեքենաշինարարական դորժարանում։

«Բանվորները պետք ե կաղմակերպված լինեն, ապա թե վոչ նրանց կաշին կքերթեն», — ասում եր Կլառուի հայրն իր դավակներին։

Ավարտելով ռպրոցը, Ռուլոլֆն սկսեց աշխատել նույն գործարանում, ուր աշխատում եր իր հայրը։ Մի տարուց հետո, 1909 թվականին յերիտասարդ Ռուլոլֆը ներկայացավ «Յերիտասարդ բանվորների և բանվորուհիների կրթական միության» ժողովին և հայտարարեց, թե մտնում ե սոցիալ-դեմոկրատական յերիտասարդության միության մեջ։ Բարձր հասակ, սև մազեր, թուլական վառվոռն աչքեր, — ահա այդ յեռանդուս յերիտասարդի պատկերը։ Նա շատ եր կարդում, աշխատելով լայնացնել իր մտահորիդունը բանվորական շարժման բնագավառում։

20 տարեկան հասակում Ռուլոլֆ Կլառուսը հաղալ «կայսեր բաժկոնը», այսինքն մտալի զինվորական ծառայության մեջ։ Դեռևս նա չեր յուրացրել պրուսական բանակի վարժեցման հիմնական սկզբունքները, յերբ հայտարարվեց պատերազմը։ Կլառուսը գտնվում եր Ֆրանսիայի գեմ ուղարկված առաջին զրաքայլություններում։ Նա կրեց բոլոր զրկանքները, նա տեսակ պատերազմի բոլոր սարսափները և հաշմանդամ դառնալով, վերադարձալ տուն։ Խրամատներում ապրած ծանր կյանքը, հիվանդանոցներում կրած տանջանքներն ստիպեցին Կլառուսին համոզվելու, վորքանվորները պետք ե զնան ուրիշ ճանապարհով, յեթե նրանք ուզում են դառնալ իրենց բախտի տերերը։ Կլառուսը տուն է վերադառնում վորպես հեղափոխական։ Նա ասում է տիրող դասակարգի հետ աշխատակցելու սոցիալ-դեմոկրատական քաղաքականությունը և խիստ քննադատության յննթարկում անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակցության զեկավարների անվըճռական քաղաքականությունը։

1920 թվականին Ռուլոլֆ Կլառուսը դառնում է կոմունիստ։ Մի տարուց հետո, յերբ բանվորները Մակս Գելցի զվասակությամբ բարձրացրին ապստամբության դրոշը, Կլառուսը զեկավարմանակցություն ունեցավ բանվորական դումարտակների շարքերում։ 1921 թվականի ապրիլի 8-ին Կլառուսը կանգնեց Համբուրգի դատարանի առաջ։

Ռեակցիոններները փորձում ելին ամեն կերպ դրաբարել քա-

ջարի հեղափոխականին, պնդելով, վոր նա իրը թե անձնապես հարստանալու համար ե պայքարում: Այդ զլիկի մանյովը ապարդյուն անցալ: Նույնիսկ ամենառեալցիոն դատարանը, վոր Ռուդոլֆ Կլաուսին դատապարտել եր ցմահ տաժանակրության, ստիպված եր խոստովանել, թե «Կլաուսին չի կարելի մեղադրել անհատական հարստացման համար, նա իր գործողությունների ժամանակ զեկավարվել ե գոյություն ունեցող հասարակակարգը տապալելու ցանկությամբ»:

1922 թվականին, յերբ գերմանական բանվոր դասակարգը կարողացալ ամնիստիա ստանալ քաղաքական կալանավորների համար, Ռուդոլֆ Կլաուսն աղատվեց բանտից, վերադարձակ Բրաունշվեյդ և շուտով այնտեղ կաղմակերպեց «Պատերազմի և աշխատանքի զոհերի պաշտպանության միջազգային ընկերություն»: Նա կաղմակերպում եր պատերազմի հաշմանդամներին, սպանված զինվորների այրիներին ու յերեխաներին ոգնելու գործը:

Ռուդոլֆ Կլաուսը հսկոր չեր: Նա առաջին հերթին կաղմակերպիչ եր: Առանց նախնական մանրակրկիտ պատրաստության նա յերբեք վոչինչ չեր անում, և թեպետ իր ամբողջ եյությամբ անձնատրված եր շարժմանը, այնուամենայնիվ այդ մասին խոսել չեր սիրում և թշնամի յեր ամեն տեսակի փքուն Փրազներին: Լինելով կայուն ու խիզախ մարդ, նա ամենախիստ պահանջներ եր առաջադրում իրեն և իր ընկերներին:

1925 թվականին Կլաուսը նորից դատապարտվում ե տաժանակարության, այս անգամ 8 տարով, «պետական դավաճանություն նախապատրաստելու համար»: Սակայն 3 տարուց հետո, 1928 թվականին, յերբ գերմանական բանվորների համառ պայքարի շնորհիվ աղատվեցին քաղաքական բանտարկյալները, Կլաուսը ել աղատվեց ու գնաց Հաննովեր: Հաննովերի մարզում Հիտլերի յերեան դալուց առաջ նա կաղմակերպեց «Կարմիր ողնություն» (ՄՈՊՐ):

Ֆաշիստական դիկտատուրայի առաջին ամիսներում Կլաուսը ձերբակալվեց ու դատապարտվեց յերկու ամսվա բանտարկության: Նրան բանտից տեղափոխեցին համակենտրոնացման ճամբար, ուր նա տեսավ ու զգաց Փաշիստական զնդանների բոլոր սարսափիները:

«Կարելի յե ամեն ինչ տանել հանուն սեփական համոզ-  
մունքների», — գրում եր Կլառուը ճամբարից ուղարկած նամա-  
կում։ Այնուղիւ Փաշխստ դահիճները դաղանաբար խոշտանգում  
եյին նրան։

Անկուն ընկեր Կլառուը, չնայելով իր առողջության սաս-  
տիկ քայքայման, աղատվելուց հետո ծավալեց հակաֆաշխտա-  
կան պայքարն, այն ել ամենաղաժան տեսորի պայմաններում։  
Գեստալոն (պետական դաղտնի վոստիկանություն) դիշեր ու-  
ցերեկ կրնկիոխ հետեւում եր «Կարմիր ողնության» համագեր-  
մանական կազմակերպության անվեհեր զեկավարին։ Պատերազ-  
մի ժամանակ ստացած վերքերի, Փաշխստական զնդաններում  
կրած բարբարոսական խոշտանգումների հետեւանքով ամբողջո-  
վին քայքայվել եր նա, բայց և այնպես, դնում եր մի վայրից  
մյուսը, կազմակերպում անլեզալ խմբակներ, ողնում զոհված-  
ու ձերբակալված ընկերների աղքականներին, քաջալերում հու-  
սալքվողներին, ամենուրեք հանդես բերելով իր անսպառ յեռան-  
գը։ Ռուգոլֆ Կլառուն խեկական հերոսություն ցուցաբերեց  
թելմանի աղատության համար մղվող պայքարում։

Հանկարծ կրկին ձերբակալվում ե նա, ընկնում բարբարոս-  
ների ճանկը, վորոնք դարձյալ դաղանաբար տանջում են նրան։  
Նրա յեղունգները պոկում են, խոշտանգում նրան, սակայն չեն  
կարողանում «խոստովանություն» կորզել։ Նա մի բառ անդամ  
չի ասում վոչ իր հեղափոխական աշխատանքի, վոչ ել իր ըն-  
կերների աշխատանքի մասին։ Նա կարողանում եր ուղղակի ար-  
համարհել մահը։

Ռեյխսվերի յերկու Փաշխստական դեներալ և Փաշխստական  
տեսորիստական հրոսակախմբերի յերկու հրամանատար դատե-  
ցին Ռուգոլֆ Կլառուին։ «Դատարանը չդտավ մի այլ պատիմ,  
բացի բարձրագույնից, ուստի մահվան դատավճիռ ընդունեց», —  
ասված է դատավճով պատճառաբանության մեջ, վորը Կլառուը  
լսեց մեծագույն հանդստությամբ։ Դրանից առաջ նա հայտա-  
բարեց Փաշխստական դատավորին։

«Յես ձեզ հետ չեմ վիճում արդարության մասին։ Յես  
յերեք և վոչինչ չեմ արել ի վեաս բանվոր դասակարգի,  
յես հաճախ ցույց եմ տվել, վոր չեմ վախենում մահից։  
Դուք, կարող եք ինձ սպանել, սակայն դուք չեք կարող ձեր

դահինների ոգնուքյամբ կասեցնել հեղափոխության հաղ-  
քանակը»:

Այդ համեստ, խևական հերոսի, գերմանական այդ պրոլե-  
տարի արյունն իդուր չի թափվել: Նրա տեղը նոր մարտիկներ  
Ֆն դրավում:

## ՍՄԻՏԱԿ ՏԵՌՈՐԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՅՐԻԿԱ

ՏԱՄՆԵՐԿՈՒ ԱՆՑԱԳԻՐ

Բազմաթիվ տարիների ընթացքում Հարավային Աֆրիկայի նեղրերը լարված պայքար են մղում բնիկների անձնագրերի վերաբերյալ որենքի գեմ: Այդ որենքը կիրառում են անդլիւական գաղութային իշխանությունները:

Հարավային Աֆրիկայում նեղրը պետք է ունենա առնվազն 12 տարբեր անձնագիր, վորպեսզի քարշ տա իր այն խղճուկ դոյլությունը, վոր նրա համար պատրաստել են իմպերիալիստներ, — նրա հայրենիքն ստրկացնողները:

№ 1 անձնագիրը Հարավային Աֆրիկայում ապրելու իրավունք ե տալիս: Այդ անձնագիրն արժե վոչ պակաս, քան բնիկ աֆրիկացու մի ամսվա վաստակը: Սակայն այդ անձնագիրը միայն ճեականորեն ե տալիս ապրելու իրավունքը, վորովհետեւ նրա տերը, — նեղրն իրավունք չունի վարձել թեկուղ մի խըղճուկ հյուղ, վորտեղ կարողանա վատ յեղանակին տեղակորդել իր ընտանիքի հետ: Այդ անձնագիրը նրան իրավունք չի տալիս փողոց դուրս դալ և իր համար ուտելիք գնել, վարել հողը և սննդի համար անհրաժեշտ բերք ստանալ, վերջապես, ծանր, քայլայիչ աշխատանք կատարել անդլիւական պլանուացիաներում կամ դործարաններում:

Անդլիւական գործարանում աշխատանք ստանալու համար պետք եր գնալ յեղանական թաղը, իսկ այնուեղ գնալու համար պետք ե ունենալ № 2 անձնագիրը, վոր նույնազես ահարդին փող արժե:

Պարեն գնելու նողատակով շուկա կամ խանութ գնալու հա-

մար պահանջվում ե № 3 անձնագիրը : № 4 անձնագիրը հարկա-  
վոր ե բնակարան գտնելու համար և այլն :

Դուրքաբանի բնիկները 1929 թվականին առաջին անգամ հայ-  
տարարեցին մասսայական գործադուլ, պահանջելով վերացնել  
անձնագրերի վերաբերյալ որենքը : Ամբողջ Հարավային Աֆրի-  
կայում ծավալվեցին նեղը բանվորների բաղմամարդ ցույցերն  
ու գործադուլները : Տասնյակ հազարալոր նեղը պահանջում  
եին բոլոր բնիկների համար միասնական անձնագրային սխտեմ  
մտցնել :

Կառավարությունը բնիկների այդ պահանջին պատասխանեց  
պատժիչ արշավախմբերով, վորոնք ներխուժում եյին Դուրքա-  
նի, Ուաննեսրուրդի և այլ քաղաքների բանվորական թաղամա-  
սերն ու գյուղերը, ավերում եյին տները, ծեծում կանանց ու  
յերեխաններին, իսկ տղամարդկանց և անչափահասներին բռնու-  
թյամբ տանում եյին տաժանակիր աշխատանք կատարելու ան-  
գլիական իմպերիալիստների ածխահանքերում, վոսկու հանքե-  
րում և պլանտացիաներում :

Սակայն անձնագրային այդ սխտեմը վերացնելու պայքարը  
չեր դադարում : 1930 թվականին հրավիրվեց աշխատավոր նեղ-  
բերի կոնդրես, նվիրված այդ հարցին : Կոնդրեսին ներկա յեր  
400 պատղամավոր : Հարավային Աֆրիկայի բոլոր քաղաքներում  
գործադուլներ ու ցույցեր եյին տեղի ունենում : Խշանություն-  
ները գնդացրային կրակով եյին պատասխանում այդ գործա-  
դուլներին ու ցույցերին : Ամեն մի ձերբակալված նեղը զարհու-  
րելի տանջանքների յեր յենթարկվում : Միմիայն վորստերում,  
մեկ որվա ընթացքում վոստիկանությունն սպանեց 10 և ծանր  
վիրավորեց 70 բանվոր : Սակայն Հարավային Աֆրիկայում կո-  
մունիստական կուսակցությունը, հեղափոխական արհմիու-  
թյուններն ու կարմիր Ողնությունը բնիկների մասսային ան-  
դրդվելիորեն տանում եյին դեպի պայքար՝ հանուն մարդկային  
իրավունքների նվաճման :

Վերև հիշված անձնագրային սխտեմի դեմ յեղած շարժու-  
մը մինչեւ այժմ ել չի դադարում, չնայելով, վոր կառավարու-  
թյունը բաղմաթիվ փորձեր ե արել դաժան տեռորի միջոցով  
խեղդելու այդ շարժումը : Պատժիչ զորախմբերն որը որին անց-  
նում են բանվորական թաղամասերով, չարչարում ու տանջում

նն բանվորական բնակչությանը, կողոպտում ու գրդեհում աը-ները։ Միմիայն 1934 թվականի ընթացքում, պաշտոնական տը-վյալների համաձայն, ձերբակալվել է 330 հազար նեղր, վորոնք մասնակցել են անձնադրերի դեմ ուղղված շարժման։

1933 թվականին գերմանական նացիոնալ-սոցիալիզմի աղե-ցության տակ Հարավային Աֆրիկայում ստեղծվեց «մոխրա-դույն բաճկոնների» Փաշխտական կազմակերպությունը, վոր Փինանսական միջոցներն ստանում եր Հիտլերից։ Այդ կազմա-կերպությունն իր առաջ խնդիր դրեց խեղդել այն բոլոր փորձե-քը, վոր բնիկները կկատարեն իրենց իրավունքները պաշտպա-նելու, այդ իրավունքների համար պայքարելու ասպարիզում։ Իր նպատակներն իրագործելու համար այդ կազմակերպությու-նը կանդ չի առնում վոչ մի տանջանքի, վոչ մի բարբարոսական միջոցի առաջ։

Սակայն զարդանում ե Հարավային Աֆրիկայի նեղրական մասսաների հեղափոխական գիտակցությունը, ավելի և ավելի յե բարձրանում հեղափոխական կազմակերպությունների հեղի-նակությունը, ավելի և ավելի մասսայական բնույթ են ստա-նում զործադուլներն ու ցույցերը։ Զնայելով տանջանքներին և Փաշխտական դադութային տեսորին, Հարավային Աֆրիկայի աշխտավոր նեղրերն ակտիվ պայքար են մղում իմպերիալիստ-ների, — իրենց հայրենիքն ստրկացնողների դեմ։

## ՀՈԼԱՍՆԴԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

### «ԱՆՀԱՆԳԻՍՏՆԵՐԻՆ ԶՆՉՈՒՄ ԵՆ ՑՈՒՑԱԿԻՑ»

Հոլանդական Հնդկաստանում բանտերի յուրաքանչյուր կա-մերայում պահպում է 50—60 կալանավոր։ Կամերաները փոքր են ու խալար։ Կալանավորները զրկված են նստելու ու պառկե-լու հնարավորությունից։ Նրանց սնունդը վորդնոտած բրինձն և հոտած ձուկը։ Առանց բացառության բոլոր կալանավորները յենթարկվում են բարբարոսական տանջանքների և չափից դուրս ծանր աշխատանքներ են կատարում։ Քաղաքական բանտարկյալ-ների համար նույնպիսի ռեժիմ և սահմանված, ինչ վոր քրեա-կան բանտարկյալների համար։ Մի քանի տարի առաջ քաղաքա-տարկյալներ՝ Գլոդոկը (Բատավիա) և Պամեկասանիը (Մալու-րա) սննդադուլ հայտարարեցին, պահանջելով բարելավել սնուն-

դը, վերացնել քաղբանտարկյալների համար սահմանված քաղցինեթիմը: Իշխանությունների հրամանով յերկու քաղբանտարկյալներն ել ամեն որ տանջանքների ելին յենթարկվում և այդ շարունակվեց այնքան, մինչև վոր նրանք ստիպված յեղան դպրեցնել անդպուլը:

Այն բանտարկյալները, վորոնք իրենց բողոքներով «ձանձրացնում են» աղմինիստրացիային, «ջնջվում են ցուցակից»: Հուլյանդական բանտերի դահիճների այդ «տեխնիկական տերմինը» նշանակում ե, վոր այնտեղ շարունակ կալանավորների սպանություններ են կատարվում: Որինակ՝ վերջերս «ցուցակից ջնջվել եր» կոմունիստ Սուբակատը:

## ՀՆԴԿԱԶԻՒՆ

### ՏԱՆՉԱՆՔՆԵՐ «ԿԱՐԳԼ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ»

Հնդկաչինում բոլոր կալանավորները սիստեմատիկ տանջանքների յեն յենթարկվում:

Հարցաքննությունների ժամանակ հաճախակի դործառքվում են հետեւյալ տանջանքները.—

1) «Բաստոնադա», — մի քանի ժամվա լընթացքում մահակներով խփում են կալանավորի կրունկներին, մինչև վոր պոկվում ե կաշին:

2) Լոն-մե-հա», — վոր մոտավորապես նշանակում ե «շուռտալ հայի ստամոքսը»: Այդ տանջանքի ժամանակ կալանավորին յերեսնիվայր սրառկեցնում են գետնին, ձեռքերը մեջքին կապած: Դահիճներից մեկը կանգնում ե զոհի ուսերի վրա, իսկ մյուսը՝ նրա կապված ձեռքերը քաշում ե դեպի գլուխը և այդպիսով ջարգում ուսերի հողակապերը, կտրում կրծքի վանդակի մկանները և անկարելի գտարձնում շնչառությունը:

3) Ածելիով կտրում են ու յերկու մասի բաժանում վոտների սրնքամները և վերքի մեջ սպիրտով թրջված բամբակ են դնում: Վորոշ ժամանակից հետո վառում են այդ բամբակը:

4) Կալանավորի մաքուր ածիլած գլխին մեղք են քսում և գլուխը գնում մբջյունանոցը: Արեալարձային մբջյունները, վորոնք յերբեմն մեկ սանտիմետր մեծություն են ունենում, մըտնում են զոհի ականջները, քիթը, բերանը և կրծոտում նրա գեմքը:

5) Տանջանք ծարավիր միջոցով։ Կալանավորը մի քանի որ ստանում է խիստ աղի ձուկ, բայց այդ որերին նրան ջուր բոլորովին չի տրվում։ Ծարավին այնքան սաստիկ է լինում, վոր կալանավորներից շատերը խելազարվում են։

Այդ տանջանքները գործադրվում են վոչ միայն հետաքննության ժամանակ, կալանավորներից խոստումներ կորպելու նպատակով, այլ և ընդհանրապես «անդորրությունն ու կարգը պահպանելու համար»։

## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

### «ՅԵՐԿՐԱՅԻՆ ԴՐԱԽՏԸ»

Բրիտանական գաղութներում գոյություն ունեցող բանտային ռեժիմը տիսուր հոչակ և ստացել։ Հնդկաստանում, բայց քաղաքային կենտրոնական բանտերից, կամ 270 շրջանային բանտեր՝ Մի քանի հարյուր բանտեր ել գոյություն ունեն առանձին նահանգներում։ այդ բոլոր բանտերի կամերաները լուսամուտներ չունեն, պատերից ջուր և կաթում, առաստաղներն ու անկյունները ծածկված են բորբոսով։ Բրիտանական Հնդկաստանի բանտերի կալանավորներն ուտելիքն ստանում են 2—3 որը մեկ անգամ։ Յերբեմն նրանք մոռացվում են և ուտելիք չեն ստանում։ Հնդկաստանի աշխատավորներն ասում են. — «Ավելի լավ են, վոր բանտում մոռանան ենք։ Այդ դեպքում գոնի կմեռնես սովորուց։ Մարկացված հնդիկների հասկացողությամբ սովորական գությունը մեռնելու ամենահեշտ միջոցն է։ Այդ հասկացողությունը մեզ համար պարզ կլինի, յերբ կարդանք այն տանջանքների մասին, վորոնց յենթարկվում են հնդկական բանտերի կտանավորները։ Մարակով ծեծելը սովորական, ամենորյա յերեվույթ է։ Բոմբեյ քաղաքի բուրժուական մի թերթ, վոր այնքան ել աչքի չի ընկնում հնդկական բանտերի կալանավորների նկատմամբ համակրանքի զգացումով, ստիպված և յեղել դրելու հետևյալը. —

«Մարակով ծեծելը հանձնարարվել եր մի հաղթանդամ վոստիկանի, վորը յուրաքանչյուր ուժեղ հարվածի համար մանր դրամ եր ստանում։ Յուրաքանչյուր կալանավոր ստանում եր 30 հարված։ Դրանից հետո բոլոր կալանավորներին

անդիտակցական վիճակում ուղարկեցին բանտի հիմանդանոցը»:

Կալանավորներին արդելված ե լվացվել, ածիլվել և լվալ իրենց սպիտակեղենը: Բոլոր գրքերն ու լրագրերն իհաշկե արգելված են: Կալանավորները կարող են նամակ գրել կամ ստանալ միայն Յ ամիսը մեկ անգամ: Յուրաքանչյուր կալանավորի վոտները կասպած ե 8 կիլոգրամ ծանրությամբ շղթայով: Ամենաշնչին անհնաղանդության դեպքում 10 կալանավոր շղթայակազմում են մեկ-մեկու և այդ վիճակում մնում 7—8 որ: Լինում են նաև դեպքեր, յերբ կալանավորը շղթայով կաղվում է պատին, ձեռքերը դեպի առաստաղը բարձրացրած: Այդ որերին նա ստանում է միայն մի քիչ խաշած բրինձ:

Բրիտանական Հնդկաստանի բոլոր բանտերից ամենաստրավելին Պորտ Բլերի բանտն է, վոր գտնվում է Անգլամանի կղզիներից մեկում: Այստեղ տարածված ե դողերոցք հիվանդությունը: Պորտ Բլերի կալանավորներն ամենածանր աշխատանքներ են կատարում: Նրանք ամեն որ պետք է կոկույան ընկույզներից ձեռքով քամեն 30 ֆունտ յուր: Այդ նորման դրեթե անիրազործելի յե, մանավանդ յեթե աչքի առաջ ունենանք կալանավորների քայլայված վիճակը: Հասնելով հուսահատության ծայրահեղ աստիճանին, Պորտ Բլերի շատ կալանավորներ ինքնասպանություն են դործում, վոմանք խելազարվում են, վոմանք ել փորձում են փախչել հարեան ջունգլիները, վորտեղ մեռնում են սովոր, կամ ընկնում գիշակեր գաղաների ճանկը: Յեկ անդիտական «Ինքնինդ Ստանդարտ» թերթն Անգլաման կղզու այս բանտն անվանում ե «յերկրային դրախտ» (1934 թվականի ոգոստոսի 22-ի համարում):

## ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԲԱՆՏԵՐԻ ՑՆՅՈՂ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ԼԵԶԱԿԱՆ ԲԱՆՏԵՐՈՒՄ

Կաղիտալիստական յերկրների բուրժուական մամուլը սովորաբար աշխատում ե չնկատել ֆաշիստական բանտերի ցնցող իրականությունը: Յերբ լեզակ մամուլում յերեմն լինում ելին

վիաստեր քաղաքական բանտարկյալների կյանքի ու պայքարի մասին, բուրժուական բոլոր լրագրերն անմիջապես յերկար հերքումներ ելին տպում:

Վերջերս Ֆրանսիայից, Կանադայից և Միացյալ Նահանգներից մի բանվորական պատվիրակություն այցելեց Լեհաստան: Պատվիրակությանը թույլ չտվին բանտերը գնալու: Միայն Լվովի տիբրահոչակ բանտի պետը թույլ տվեց պատվիրակությանը խոսել յերկու քաղանտարկյալների, — մի կողմանը ու մի տղամարդու հետ, այն ել իհարկե իր ներկայությամբ: Բանտապետը թույլ չտվեց կալանավորներին պատասխանել բանտի պայմաններին վերաբերող մի վորենե հարցի և պատվիրակներին ցույց չտվեց բանտը:

Այսպիսի պայմաններում մեծ հետաքրքրություն են ներկայացնում մի այնպիսի մարդու վկայությունները, ինչպիսին ելեհական լրագրող Վ. Ռժիմովսկին: Նա «Կուրյեր Պարաննի» թերթի, — Պիլսուդսկու կողմնակիցների որդանի մշտական աշխատակիցն ե:

Վ. Ռժիմովսկին իր հոդվածներում ասում է, թե «կարանավորների ամնիստիա չնորջելը ներկայումս վոչ միայն դատական քաղաքականության պահանջն է, այլ և պետական անհրաժեշտություն է»: Իր միտքն ապացուցելու համար Ռժիմովսկին բերում է այնպիսի փաստեր, վորոնք վաղուց հայտնի յեն աշխատավորների լայն մասսաներին: Սակայն այսոր այդ փաստերը հաստատում է ինքը, Փաշիստական բանակում գտնվող մարդը, վոր վոստիկանության տեսակետով միանդամայն բարեհույս և համարվում:

Ռժիմովսկին դրում է. —

«Բանտային շենքերը լեփ-լեցուն են այդ բառի իսկական խմատով: Լեփ-լեցուն են. լսո՞ւմ եք դուք, թե ինչի մասին են աղաղակում այդ փաստերը: Այդ մոայլ Փունկցիայի մասնագետների կատարած հաշվի համաձայն, լեհական բանտերը պեղավորեն 25—30 հազար կալանավոր: Յեթե հաջողվեր բանտերի կամերաներում մարդկանց տեղավորել այնպես, ինչպես իրերը լիքը բայցուակում, ապա կարելի յեր խոսել 40 հազարի, վորպես լեհական բանտերի տարողության ամենամեծ թվի մավրական բանտարան պեղի մի անհավանական, սին:

բայց ծիշտ իրականությունն... Միայն այս վերջին թիվը, վոր չառ և շատ հեռու յե բանտերի իսկական տարրությունն արտահայտելուց, ցույց ե տալիս լեհական բանտերում ներկայումս տիրող պատկերը»:

Դժվար չե պատկերացնել, թե ինչպիսի դրության մեջ են դտնվում քաղբանտարկյաները, վորոնք ստիլված են յերկար տարիներ ապրել նման պայմաններում:

Կրկին դիմենք փաստերին:

Ոժիմովսկին բերում ե իր խոսակցությունը մի զատական պաշտոնիայի հետ, վորը հետազոտել է լոձի բանար:

«Որը չող եր ու խեղգուկ: Բանտի միջանցքում անտանելի գարշահոտություն եր տարածված: Մահացու մի գարշահոտություն, վոր առաջանում եր վոչ թե զանազան նյութերի գոլորշացումից, այլ մարդկային կղկղանքի ամրող կույցերից, վոր հավաքվել են տարիների ընթացքում: Թունավոր ու ծանր ողը, վոր թանձր եր ինչպես կուպր, ավելի ու ավելի անտանելի յեր դատում գեպի միջանցքի խորքն ամեն մի քայլ կատարելիս: Սակայն վոչ թե միջանցքում, այլ կամերայում (վորի գուուր բաց արին) յես տեսա զարհուրելի մի պատկեր, վորը թունավորեց իմ անքուն դիշերները: Կամերայի հատակը խոնավացել եր մարդկանց քրտինքից, վորոնք ուղղակի սեղմվել եյին մեկմեկու: Բաց լուսամուտի առջե հերթի կանգնած, նրանք մեկ-մեկ մոտեցնում եյին գեմքերը նեղ անցքին, վորպեսզի ավելի մաքուր ող ծծեն և ապա իրենց տեղը զիջեն ընկերներին: Այս տանջալից հերթը շարունակվում ե ամբողջ ժամեր»:

Ոժիմովսկին ավելացնում ե, վոր իր խոսակցի խոստովանության համաձայն, այլպիսի պայմաններում «ապատապրկումը վեր և ածվում տանջանքի»: Այսպես և ասում արդարադատության մինիստրության աչքի ընկնող պաշտոնյան, մի մարդ, վոր հարկամետ և ավելի շուրջ լավ պատկերացնել այդ իրականությունը, քան խոտացնել գույները: Իրականությունը սակայն, շատ ավելի վատ և ու զարհուրելի, քան նրա խոսքերը: Լեհաստանում կա ավելի քան 16.000 քաղբանտարկյալ: Աշխատավոր ների լավագույն զավակները, — լեհեր, բելոռուսներ, հրեաներ,

ուկրայինացիներ, — հարկադրված են որեցոր բանտային տաճա-  
շանքների յևնթարկվել:

Ենհական Փաշլղմը վախենում է ցույց տալ իր բանտերը:  
Կանադայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի  
աշխատավորները, վորոնք այժմ կամպանիա յեն մղում նոր  
սպատվիրակություն ուղարկելու համար, պահանջում են բանվո-  
րական պատվիրակության առջև բաց անել բանտերն ու համա-  
կենտրոնացման ճամբարները: Ամբողջ աշխարհի աշխատավոր  
մասսաները պահանջում են, վոր հարազարակվի լեհական բանտե-  
րի քաղաքական կալանավորների դրության վերաբերյալ ճշմար-  
տությունը:

## ՍԱՐՍԱՓԿԵՐ ԿԱԼՆՑԵՄՈՒՄ

Լատվիայում, Կալնցեմի քարհանքերում (վորոնք գտնվում  
են Ռիդա քաղաքից վոչ հեռու) թագավորող տեսորն ու հալա-  
ծանքները գերազանցում են լատվիական Փաշխտների մինչև այ-  
ժըմ գործադրած գաղանությունները: ՀակաՓաշխտ մարտիկնե-  
րը, վորոնք ուղարկված են Կալնցեմ, տաժանակիր աշխատանքի  
համար, — գտնվում են ամենասարսափելի պայմաններում: Դա-  
հիձները տանջված, կիսաքաղց կալանավորներին ստիպում են  
որական 12—16 ժամ աշխատել մինչև ծնկները ջրի մեջ, առանց  
կոշիկների: Գիշերը նրանց տանում են մի ցուրտ մարագ, վար-  
տեղ իրար գլխի հավաքված, հնարավորություն չունենալով չո-  
րացնելու իրենց հագուստը, նրանք Փաշխտների վարժեցրած  
պահակների հսկողության տակ անց են կացնում գիշերը:

Յերբ կալանավորները չեն կատարում նորման, (վոր չա-  
փաղանց բարձր են նույնիսկ սովորական բանվորի համար, որա-  
կան 2,2 խորանարդ մետր), կամ յերբ նրանք ուժարդար լինե-  
լով վայր են ընկնում, բարբարուները նրանց ծեծում են հրա-  
ցանների կոթերով, ուստինե մտրակներով, վուանատակ են տ-  
նում, կամ գիշերը թողնում են խոնավ խցիկներում, այն ել  
մերկացրած: Այդ խցիկները հորեր են, վորոնք ամուր փակ-  
վում են վերելից:

Բժշկական վորեւ ողնության մասին այստեղ խոսք անդամ-  
չի կարող լինել, չնայելով, վոր ամեն որ, աշխատանքի ժամա-

նակ, մի քանի դժբախտ դեսպեր են լինում: Տարրարոսներն ստիպում են աշխատել նույնիսկ այն քաղբանտարկյալներն, ուղաքոնք արյունահոս վերքեր ունեն: Ծանր, 8 փթանոց քարերը խեղում են հյուծված կալանավորներին: Այսպիսով հաջմանդամ են դարձել կալանավորներ Եժինը, Ֆեղորովը, Սեմյոնովիչը և ուրիշները: Յերբ կալանավոր Ֆրիդրիխսոնը վոտը ջարդվելուց հետո մեծ դժվարությամբ հանեց կոչիկը, ալագ վերականցաւ Պուկիտը նրան ստիպեց այդ կոչիկը նորից հագնել ջարդված վատին:

Կալնցեմում յեղել են ինքնասալանության բազմաթիվ դեպքեր: Կալանավոր Միկուլովը ճեղքեց իր վոտը: Նրան ուղարկեցին Ռիգայի կենտրոնական բանտը և փակեցին մի խավար կամերայում, բոլորովին մենակ: Յերբ կալանավորին կրկին ուղում ելին վերադարձնել կալնցեմի քարահանքը, նա հայտարարեց, վոր սպատառոտ ե մեռնել, քան վերադառնալ այնտեղ:

Կալնցեմում գտնվող քաղբանտարկյալները վերջերս բողոք ներկայացրին բանտերի կենտրոնական վարչության: Վերջինիս պատասխանում ասված ե, վոր յեթե մի անդամ ել կրկնովի բողոքը, տաժանակիր աշխատանքների ուժիմն ավելի կվատթարանա:

Լատվիայի Փաշխատ դահիճների գաղանությունները պետք ե հայտնի լինեն ամբողջ աշխարհի ժողովրդական լայն մասսաներին:

Հարկաֆաշխատներ Մուրինի, Հորսլաուրի և Բոնդարենկոյի դեմ ընդունված մահապատժի առթիվ լատվիայի Կարմիր Ռդնությունը բողոքի լայն կամպանիա սկսեց: Ամբողջ աշխարհի աշխատավորներն ուժանդակեցին այդ կամպանիային և այդպիսով նրանց կյանքը փրկվեց, թեպետ չհաջողվեց նրանց ազատել Փաշխատական դեհենից:

Լատվիայի աշխատավորները Կարմիր Ողնության կոչին պատասխանեցին մասսայական բողոքով, վոր ուղղված եր Կալնցեմի դահիճների չլսված գաղանությունների դեմ:

ՓՐԿԵ՛Լ ԿԵՍԱՐ ՎԻԼԱՐԻ ԿՅԱՆՔԸ

Ղուբայի դաղտնի վոստիկանությունը ձերբակալեց այդ յերկրի հեղափոխական արհմիությունների գլխավոր քարտուղար Կեսար Վիլարին:

1935 թվականի մարտ ամսեց Ղուբայի պահնորդական ըաժինը (գաղտնի վոստիկանությունը) ճգնում եր վորսալ Վիլարին : Իշխանությունները վերջինիս համարում են դիմավոր հանցազարտն այն ընդհանուր քաղաքական գործադուլի, վոր տեղի ունենցավ Ղուբայում, մարտ ամսին, և ընդգրկեց 700 հազար բանմարդ : Ղուբայի մամուլում գետեղված եր այսպիսի մի հայտարարություն, — «Ով բռնի Վիլարին կամ ցույց տա նրա տեղը, նա պարզե կստանա» :

Մաշտղոյի արյունոտ դիկտատուրայի ժամանակ Վիլարը մի քանի անգամ նստել եր բանտում : Նա ձերբակալվել եր 1931—1932 թվականներին և աքսորվել իսլա-՞նեպինոս կղզին :

Ղուբայի պղողետարիատի գործադուլների և այլ յելույթների ժամանակ, — վորոնք տեղի յեն ունեցել վերջին 2—3 տարում և չատ անգամ գաղանաբար ճնշվել զենքի ուժով (այդ յելույթները կազմակերպում եյին Ղուբայի հեղափոխական արհմիությունները), Ղուբայի իշխանությունները միշտ աշխատել են՝ առաջին հերթին իրենց ճանկը դցել կեսար Վիլարին :

Ահա թե ինչու անկղզալ դրության անցած Վիլարի ձերբակալությունը մեծագույն վտանգ և սպառնում նրա կյանքին :

Ղուբայի կարմիր Ռդնությունը ներկայումս բողոքի յեռանդուն կամպանիա յե մղում, պահանջելով անհաղաղ աղատել կեսար Վիլարին և Ղուբայի բոլոր քաղաքանտարկյալներին :

## ԽՈԶԵ ԲԱՇՈՒՆՑԱՆ ՍՈՒՐԻՏԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1935 թվականի հունիսի 18-ին Զիլիի (Հարավային Ամերիկա) Լայա քաղաքում հանկարծ անհայտացալ բանվորների առաջնորդ Խոզե Բաշունյան Սուրբութը, վոր այնտեղ աշխատում եր Զիլիի հեղափոխական արհմիությունների և կոմկուսակցության հանձնարարությամբ :

Ինչո՞վ կարելի յեր բացատրել Բաշունյանի անհայտանալը : Ահա թե ինչով . — Զիլիի հարավային մասում բնակվում են «Մապուչի» կոչված ցեղի հնդիկները : Բաշունյանը յեռանդուն աշխատանք է կատարում այս հնդիկների, ինչպես նաև այդ վայրերում բնակվող գյուղացիների մեջ : Յեկ ռեակցիայի ներկայա-

ցուցիչները վորոշում են վերջ տալ Բաշումյանի հեղափոխական գործունեյության, — սպանել նրան:

Բաշունյանի սպանությունն իր հրեշտավորությամբ հիշեցնում է կոմունիստ-ռևուլյուցիչ Անարայոնի և լրագրող Մեսա Բելյայի սպանությունը, վոր վերջերս տեղի ունեցավ նույն յերկրում, — Զիլիում:

Բաշունյանը յեղել և Զիլիի կոմկուսակցության կենտրոնի անդամ: Յերիտասարդ ժամանակ նա դյուզատնեսական բան-վոր եր, հետո աշխատում եր բորակի հանքերում: Նա դարձավ բանվոր դաստիարդի և դյուզացիության ականավոր առաջնորդ-ներից մեկը: Նրա կյանքն իսկական մարտնչողի կյանք եր: Զիլիի դիկտատորներն անընդհատ հալածում եյին նրան: 1928 թվականին, իրանեցի դիկտատուրայի ժամանակ նա ձերբակալ-վեց և աքսորվեց Արյեն կղզին: Մասսաների համերաշխության շնորհիվ նա ազատվեց, բայց 1932 թվականին, Դավիլի դիկտա-տուրայի ժամանակ նրան դարձյալ բանտարկեցին: Ալեքսանդրի նոր կառավարությունը թեպետ ազատեց նրան, սակայն վոչ մի բոպե հանդիսա չեր թողնում և հալածում եր, մանավանդ մա-նուչի ցեղի հնդիկների մեջ հեղափոխական աշխատանք կատա-րելու համար: Ընկ. Բաշունյանը վայելում եր այդ հարստա-հարված ժողովրդի սերն ու համակրանքը: Նրա անհայտանա-լուց մի ամիս առաջ, մանուչի ցեղի հնդիկների կոնդրեսում նը-րան տրվեց «մանուչի ցեղի սպիտակամորթ յեղբայր» պատվա-վոր անունը:

Հենց վոր լուր տարածվեց Բաշունյանի անհայտանալու մա-սին, Զիլիի ՄՈՊՐ-ի սեկցիան վորոշեց պարզել հանցագործու-թյան պատկերը:

Առաջին վորոնումները ցույց տվին, վոր վերջին անդամ Բաշունյանը Ռողենդո Զագրեպոյի հետ յեղել և լայտ քաղաքի մեր Այլումիրանոյի տանը: Այլումիրանոն ցինիկարսը հայտա-բարեց, թե նա Բաշունյանին հանձնել և վոստիկանության, վո-րովհետեւ Բաշունյանը կոմունիստ-ազիտատոր և և ակտիվ մաս-նակցություն և ունեցել լոնկվիմայում դյուզացիների և հնդիկ-ների վերջին ապստամբություններին: Այնուհետեւ նա հայտա-բարեց, թե Բաշունյանը «խեղջվել և լայտ դետում»: Սակայն

ՄՈՊՐ-ի հանձնաժողովի կատարած քննությունը պարզեց, վոր վոստիկանությունն սկզբում տանջանքների յև յենթարկել Բաշունյանին, հետո դցել Լայա դետը:

ՄՈՊՐ-ի Զիլիի սեկցիան և հեղափոխական արհմիությունների Կենտկոմը գումարեցին բաղմաթիվ մասսայական ժողովներ, վորաեղ հազորդվեց քննության արդյունքների մասին։ Ստեղծվեց ժողովրդական կոմիտե բոլոր դեմոկրատական կուսակցությունների, բոլոր արհմիությունների ներկայացուցիչներից և ականավոր հասարակական գործիչներից։ Կոմիտեն զբաղվեց սպանության և մեղավորներին գտնելու հետ կապված խնդիրների քննությամբ։

Մի քանի որից հետո կամպանիան ընդգրկեց ամբողջ յերկիրը և դարձավ մի ուժեղ շարժում, վոր ուղղված եր ռեակցիայի դեմ և համախմբում եր բոլոր բանվորներին, ինտելիդենտներին, ուսանողներին, — Զիլիի սեկցիոն կառավարության բոլոր հակառակորդներին։ Պետք ե մատնանշել, վոր այդ շարժմանն ակտիվորեն մասնակցում եյին մանուչի ցեղի հնդիկները, վորոնց ազատման պայքարին Բաշունյանը նվիրել եր իր բոլոր ուժերը։

Զնայելով կառավարության հարուցած խոչընդոտներին, Կոմիտեյի ակտիվությունն ուժեղանում եր անընդհատ։ Շուտով ստեղծվեց արտակուսակցական ժողովրդական տրիբունալ, վորի անդամներն ընտրվեցին լայն ժողովներում։ Ամբողջ յերկրում կաղմակերպվեցին հանձնաժողովներ, վորոնք ողնում են տրիբունալին։

Ներկայումս տրիբունալը հետաքննական աշխատանք է կատարում։

Վկայություններ տվող անձանց կյանքն առահովելու նպատակով այդ տրիբունալի քննիչ դոկտոր Կարլոս Վինկունյան ֆառւենտեսը, վոր պարլամենտի պատգամավոր և համալսարանի պրոֆեսոր, սահմանել ե այնպիսի կարգ, վորով քննության ու վկայությունների բոլոր նյութերը դադանի յեն պահպառում։ Իբրև վկաներ, արդեն հարցաքննված են Բաշունյանի ընտանիքի անդամները, բանվորական շարժման մի շարք դեկավարներ, բանվորներ, դյուլացիներ և մանուչի ցեղին պատկանող հնդիկներ։

Այլտամիրանոն, — Լայտ քաղաքի մերը, — և այդ քաղաքի վոստիկանները նույնպես պետք ե կանչվեն տրիբունալ, հարցաքննության համար։ Այսպիսով պետք ե նյութեր հավաքվեն մեղադրական ակտ կազմելու համար, վորը հետո պետք ե հանձնվի դատարանին։

Կառավարությունն ու դատական իշխանությունները գործադրում են բոլոր միջոցները, վորպեսզի պաշտպանեն մարդասպաններին։ Սակայն աշխատավոր մասսաներն աչալլիթյամբ հետեւում են այս գործին։



694

ଭୁବେ ୧ ମ. ୫୦ ଟଙ୍କ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0001395

154

